

ԵՐԻՑԱՍԻՐԴ

1977

Ը

ԱՄ 146



ԼԴ
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Օգոստոս

1977



ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ Կ. ՊՈԼՍԻ ԵՐՋԱՆԿԱՀԻՇԱՏԱԿ Տ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿՈԼՈՏ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԾՆՆԴՅԱՆ 300-ԱՄՅԱԿԸ ՆՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՍԻՐՈՑ ՈՂՋՈ՛ՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ԹՈՒՐՔԻՈՅ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՅԻՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ, ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՑ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՑ, ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱԻԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

Ինչքա՜ն մխիթարական է ու արտապնդիչ մեզի՝ այսօրուաններուս համար, որ թերթելով մեր նախնեաց պատմութեան գիրքը, մեր գիտակցութեան հորիզոնին վրայ լոյսեր կը բացուին, որոնք կը լուսաւորեն ոչ միայն տուեալ ժամանակաշրջանը, այլ և լոյս կը բերեն նաև մեզի, մեր օրերուն, մեր աշխատանքի ճամբուն, մեր երազանքներուն:

Հարուստ է մեր սուրբ եկեղեցւոյ ու ազգի պատմութիւնը անմար լոյսերով, անկորնչելի յիշատակներով:

Փա՛ռք բարեաց պարգևատու մեր հայրերու Աստուծոյն:

Անկորնչելի են նաև՝ յիշատակն ու իրագործումները Կ. Պոլսոյ հայոց տ. Յովհաննէս Կոլոտ պատրիարքին:

Մեր փոթորկալից պատմութենէն գիտենք, թէ մեր ազգի փառքի օրերուն յաջորդեցին դաժան ժամանակներ:

Հայոց աշխարհը, ծանր հարուածներու տակ խոնարհեցաւ: Եկեղեցի և ժողովուրդ մնացին անօգնական, ուղեկորոյս, դարեր շարունակ ոտնահարուած, հարստահարուած ու հալածուած:

Ազատ ու ինքնիշխան ապրելու ճամբաները ամէն, փակուած էին ծանր շղթաներով, իսկ Հայոց երկինքէն թափած՝ յոյսի աստղերը բոլոր: Խաւարն ու սարսափը տիրած էին հայ հոգիներուն: Խաւարն ու ան՛վը ոգիի պատած էին նաև անդաստանը Հայաստանեայց Մայր եկեղեցւոյ: Ամենուր՝ բայքայում, պառակտում, ապականում: Հոգևորականութիւնը մեծաւ մասամբ անձնատուր՝ տգիտութեան, ծուլութեան ու շահամոլութեան: Կը թուէր թէ երբեմնի շողափայլ ջահը հայ հոգևորականութեան շիջած էր արդէն, իսկ ազգային գիտակցութիւնը՝ մթագնած իսպառ:

Եւ սակայն բարին Աստուած չէր մոռցած իր հաւատարիմ հօտը: Այսպէս է որ, անհասանելի բարձունքներէն, իմանալի լոյսի ճառագայթ մը իջաւ Հայոց միգապատ աշխարհի վրայ:

Տասնեւութներորդ դարու վերջերուն էր, որ Արևմտեան Հայաստանի Ամրտոլու վանքէն ներս շողաց այդ ճառագայթը, «տիեզերալոյս» Վարդան Բաղիշեցի «քաղցրաքարոզ և համեղաբան» վարդապետի հիմնած «դասատուն»-էն, ուր գիտութիւն և հոգևոր սնունդ առին Յովհաննէս և Գրիգոր վարդապետները, ապագայ հրաշագործ՝ «Կոլոտ» ու «Շղթայակիր» մականուանեալ պատրիարքները հայոց Կ. Պոլսոյ և Երուսաղէմի, որոնք ի վերուստ կոչուեցան փարատելու խաւարը հայ հոգիներուն և դալար պարտէզի վերածելու անապատը եկեղեցւոյ անդաստանին: Մտքի և հոգիի այդ հրաշալի զարթօնքի առաքեալը հանդիսացաւ մանաւանդ Ամրտոլու վանական Յովհաննէս Կոլոտը: Սուրբ Հոգին իր բոլոր շնորհները պարգևեր էր անոր, որ կոչուած էր կործանումէ փրկելու նաւը մեր Մայր եկեղեցիին և առաջնորդելու զայն դէպի աղբիւրը լոյսին: Ներշնչուած սուրբ զգացումներով, լուսաւորուած գիտութեամբ, օժտուած բարոյական հզօր նկարագրով ու աշխատելու անսպառ եռանդով, անբասիր վարքով ու հմայիչ խօսքով, Յովհաննէս վարդապետ երբ իր ոտքը դրաւ Կոստանդնուպոլիս, գրաւեց քարացած սրտերը բոլոր՝ երկնաւաք հրեշտակի մը նման «վասն առաքինի վարուց և ևս անհամեմատ քարոզութեամբ, որ գրեթէ էր ազգիս մերոյ նոր Ոսկեբերան և կրկին Աստուածաբան», ինչպէս կը վկայէ ժամանակակից պատմիչը՝ Հաննէ վարդապետ:

Իր հոգևոր ու բարոյական բացառիկ շնորհներուն զուգահեռ, Յովհաննէս Կոլոտ էր նաև իմաստուն ու եռանդուն կազմակերպիչ, եկեղեցաշէն գործիչ, հայադաւան ուղղափառութեան կորովի պաշտպան և հմուտ քաղաքագէտ, որ փրկարար դեր կատարեց ոչ միայն Կ. Պոլսոյ Աթոռին, այլ և Երուսաղէմի հայոց պատրիարքութեան համար, Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի ալ հանդէպ հաւատարիմ և հոգատար վերաբերում ցուցաբերելով:

Յովհաննէս պատրիարքի մեծագոյն փառքը սակայն հանդիսացաւ իր ծաւալած հսկայ աշխատանքը՝ կրթական ու գրական շարժում ստեղծելու ուղղութեամբ: Իր հիմնած՝ Սկիւտարի «դասատուն»-ը նոր Ամրտոլու դարձաւ, ուր իր շունչին տակ հասակ առին աւելի քան քսաննհինգ գիտուն ու նուիրեալ վարդապետներ, որոնք յետոյ շարունակեցին բարձր պահել իրենց պաշտելի հոգևոր հօր և դաստիարակի վառած ջահը:

Այսպէս է որ Յովհաննէս Կոլոտի պատրիարքութեան քսաներկուց տարիներու շրջանին, ուղղակի անոր առաջնորդութեան ու հսկողութեան ներքոյ, Կ. Պոլսոյ մէջ հետզհետէ բացուեցան տասնեակ հայ վարժարաններ, հիմնուեցան տպարաններ ու գրադարաններ, հրատարակուեցան աւելի քան հարիւր կարևոր գործեր մեր նախնեաց մատենագիրներէն: Հայերէնի թարգմանուեցան օտար դասական հեղինակներու՝ կրօնական, փիլիսոփայական ու գրական երկեր: Այս բոլորը, որպէսզի հայ նոր սերունդները և ի մասնաւորի երիտասարդ հոգևորականները՝ ներշնչանք, հոգևոր սնունդ և հայ եկեղեցիին ու ազգին ծառայելու գաղափարական մղում ստանան:

Յովհաննէս պատրիարքի անյոգնաբեկ ճիգերով ծնունդ առած ու ծաւալած այս կրթական-գրական շարժումը՝ «Կոլոտեան» դպրոցը, սկզբնաւորումը եղաւ արևմտահայ հոգևոր ու ազգային մշակութային զարթօնքին և նախապայմանները ստեղծեց արևմտահայ լեզուի յետագայ կազմաւորման:

Ոգիի ու կենդանի գործի հերոսական խոյանքով, Յովհաննէս Կոլոտ պատուեց դարերու խաւարը հայ հոգիներուն, լոյս աշխարհ բերաւ մոռցուած յիշատակները և արժէքները նախնեաց փառքի օրերու, վառեց կրակը հայոց ազգային ինքնաճանաչման և հաւաքական շահերու գիտակցութեան:

Ցեղաշրջեց ճակատագիրը ամբողջ արևմտահայ ժողովուրդին:

Անվարան կարելի է հաստատել, թէ արևմտահայութեան ազգային վերածնունդի լուսաւոր հորիզոնի սեմին, կը բարձրանայ պայծառ անձնաւորութիւնը Յովհաննէս Կոլոտ մեծագործ պատրիարքին, իբրև իր ժամանակի նոր լուսաւորիչ:

Ծնած 1678-ին, իր մահկանացուն կնքեց 1741 փրկչական տարին, մօտ երեք տասնամեակներ փառաւորելով Կ. Պոլսոյ հայոց պատմական Աթոռը:

Այսօր, իր ծննդեան երեք հարիւրամեակին, մեր սուրբ եկեղեցին և համայն մեր ժողովուրդը արդար հիացումով ու երախտագիտութեամբ պիտի ոգեկոչեն պանծալի յիշատակը մեծ պատրիարքին ու պիտի աղօթեն որ անոր հոգին յաւէտ անթառամ մնայ երկնից արքայութեան լոյսերուն մէջ ու հանդիսանայ նաև առաջնորդող ոգի այստեղ, երկրի վրայ, մեր եկեղեցւոյ կեանքէն ներս:

Սիրով ընդառաջելով Մեր ամենապատիւ եղբօր, Կ. Պոլսոյ այժմու պատրիարք տ. Ծնորհք արքեպիսկոպոս Գալուստեանի 30 մայիս 1977 թուականի խնդրանքին, յառաջիկայ 1978 տարին կը հռչակենք համայն Հայաստանեայց առաքելական եկեղեցւոյ համար յոբելինական տարի, նուիրուած լուսաբնակ տ. Յովհաննէս Կոլոտ պատրիարքի իրագործումներուն պանծացման:

Կ՚առաջադրենք մեր եկեղեցւոյ նուիրապետական Աթոռներուն և կը հրահանգենք թեմական ու եկեղեցական կեդրոններուն, որ գալիք տարի, իրենց համար յարմար թուականներու, մատուցմամբ սուրբ պատարագներու, կատարեն հանդիսաւոր հոգեհանգստեան արարողութիւններ ի լուսաւորումն հոգւոյ երջանկայիշատակ տ. Յովհաննէս պատրիարքին:

Ջերմապէս կը յանձնարարենք նաև որ հայ եկեղեցական ու մշակութային կազմակերպութիւնները, կենդանի խօսքով ու հայերէն և օտար լեզուներով գրուած յօդուածներով ու հրատարակութիւններով, ոգեկոչեն անմոռաց յիշատակը և վաստակը հոգելոյս յոբելեար պատրիարքին:

Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի մէջ հանդիսաւոր սուրբ պատարագը և հոգեհանգստեան պաշտօնը տեղի պիտի ունենան յառաջիկայ տարի հոկտեմբերի 1-ին Մեր գահակալութեան 23-րդ տարեդարձի առթիւ, իսկ Աթոռիս պաշտօնաթերթ «Էջմիածին» ամսագիրը 1978-ի հոկտեմբերի թիւը պիտի նուիրէ մեծ պատրիարքի կեանքին ու գործունէութեան:

«Յիշեցէք զառաջնորդս ձեր որ խօսեցան ձեզ զբանն Աստուծոյ. հայեցեալք յելս գնացից նոցա՝ նմանօրք եղերուք հաւատոցն» (Եբր. ԺԳ 7):

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 29 օգոստոսի
1977 փրկչական ամի,
եւ ի տումարիս հայոց ՌՆԻԶ,
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի
ՀՄՐ. 792



ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ

ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱԿԱՆ ՍՈՒՐԲԵՐ*

Գլուխ երկրորդ

ԱՌԱՔՅԱԼՆԵՐ

Առաքյալները կկազմեն երկրորդ և կարևորագույն խումբը Նոր Կտակարանի սուրբերուն մեջ: Իրականության մեջ՝ զուտ քրիստոնյա սուրբերու շարքը կսկսի առաքյալներով: Նախապես հիշվածները չեն մկրտված—բացի հավանաբար ս. Կույսեն—քրիստոնեական մկրտությամբ. առաքյալներ առաջին մկրտյալները եղան թե՛ ջրով և թե՛ ս. Հոգիով:

Ասոնք ընտրվեցան ուղղակի Քրիստոսի կողմե: Տասներկու է անոնց թիվը. իրենցմե մին—Հուդան—այս խումբեն դուրս հնկավ մատնությամբ իր վարդապետին, և անձնասպանությամբ: Անոր տեղ, հետ Համբարձման Քրիստոսի, ուրիշ մը ընտրվեցավ վիճակով: Ասոնք Քրիստոսի անմիջական առաջնորդությամբ պատրաստվեցան ու դաստիարակվեցան իրենց ապագա մեծ առաքելության համար: Ականջալուր եղան Անոր քարոզությանց և ականատես՝ Անոր հրաշքներուն և հզոր գործերուն: Կարևորագույնը՝ վկաները եղան Քրիստոսի հարության:

Առաքյալ կնշանակե մեկու մը կողմե **ղրկված,** ղրկողին հեղինակությամբը և պատգամովը: Իր կենդանության իսկ ղրկեց Հիսուս այս տասներկուքը «զույգ-զույգ»: Ավետարանը քարոզելու համար զուտ հրեական շրջանակներու մեջ: Անոնց տվավ հատկապես «իշխանություն պիղծ դևերու վրա» ինչպես նաև հիվանդություններ բուժելու կարողություն (Մտթ. Ժ 1): Իսկ իր վերջին պատվերը եղավ անոնց. «Ինչպես Հայրը ղրկեց զիս, **ես ալ կղրկեմ ձեզ.** Գացեք ուրեմն, ինձի աշակերտ ըրեք բոլոր հեթանոսները. մկրտեցեք զանոնք անունովը Հոր, Որդվո և ս. Հոգիի, սորվեցուցեք անոնց պահել այն ամենը զորս ես իբրև պատվեր տվի ձեզի. ու ես ձեզի հետ եմ մինչև աշխարհի վախճանը» (Մտթ. ԻԸ 18—19):

Գործնականապես առաքյալները եղան հիմքերը և հիմնադիրները եկեղեցիին. այսինքն անոր առաջին անդամները, առաջ-

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1977 թվականի № Է-ից:

նորդները, վարիչները և կազմակերպիչները:

Առհասարակ անուս գալիլիացիներ էին, մեծագույն մասամբ ձկնորսներ, բայց իրենց ձգած գրություններեն դատելով կտեսնենք, որ տարիներու ընթացքին զարգացած ու զորացած են նաև իմացապես, ոչ միայն Քրիստոսի դաստիարակությամբ և ս. Հոգիի շնորհոք, այլ նաև հունարեն լեզվով գրելու և քարոզելու կարողությամբ: Ասոնց առաջին գործունեությունը հավաքաբար կներկայացվի մեզի Գործք Առաքելոցի առաջին գլուխներուն մեջ, ուր կհիշվի իրենց դեմ գործադրված հալածանքները և չարչարանքները, որոնք իրենց բաժինը եղան իրենց ամբողջ կյանքի ընթացքին: Նոր Կտակարանի մեջ անոնցմե մեկին միայն մահվամբ նահատակված ըլլալը կհիշվի. բայց քրիստոնեական ավանդությունը կհաստատե, որ բացի մեկեն ամենքը ալ մի առ մի նահատակված են իրենց առաքելական գործունեության ընթացքին:

Տասներկուքեն դուրս կան նաև ուրիշ քրիստոնյա գործիչներ, որոնք ևս առաքյալ կոչված են. որոնց մեծագույնն է նույն ինքն Պողոս առաքյալ, որ ծանոթ է եկեղեցիի մեջ իբրև տասներեքերորդ առաքյալ:

Երկոտասան առաքելոց և Պողոս երեքտասաներորդի տոնը հավաքաբար կկատարվի մեր մեջ՝ Վարդավառի Բարեկենդանը կանխող շաբաթ օրը: Ապա անոնք զույգ-զույգ կամ երեք առ երեք կհիշատակվին տարվույն զանազան օրերուն:

9. Պետրոս առաքյալ

Տարակույսե վեր է, թե գլխավորն է առաքելական դասին մեջ, թե՛ խոսքով, թե՛ գործքով և թե՛ հեղինակությամբ: Առաքյալներու մեջ ամենեն շատ իր մասին տեղեկություն ունինք թե՛ Ավետարաններեն, և թե՛ մանավանդ Գործք Առաքելոցեն, որուն առաջին կեսին մեջ գլխավոր գործիչն է ինք:

Իր թլփատության անունն էր Շմավոն, կամ հունացած ձևով Սիմոն, որդի Հովնանի: Երբ առաջին անգամ ներկայացավ Հիսուսին, հասկցավ Քրիստոս անմիջապես, թե ինչպիսի մեկն էր իր դիմաց կեցողը և ըսավ. «Դուն Հովնանի որդի Սիմոնն ես. դուն պիտի կոչվիս ԿԵՓԱՍ», որ կնշանակե **վեմ**, այսինքն **քար**, որուն հունարենն է ՊԵՏՐՈՍ (Հովհ. Ա 4): Գալիլիո Բեդսայիդա գյուղեն էր, սակայն ամուսնանալե հետո կերևի թե փոխադրված էր դրացի Կափառնայում քաղաքը ուր Հիսուս բժշկեց անոր զոքանչը ջերմեն: Արհեստով ձկնորս էր: Նոր Կտակարանի մեջ բազմաթիվ միջադեպեր կան իր մասին, որոնք իր հեղ-հեղուկ, խիզախ, վախկոտ, բաջարի բայց միշտ անկեղծ բարքը և նկարագիրը կհայտնաբերեն, և որոնց բոլորին սակայն պիտի չկրնանք անդրադառնալ մի առ մի:

Երբ առաջին անգամ իր նավակը ընդունեց Հիսուսը և Անոր հրամանով իր ուղկանը կրկին ծով նետեց և ուղկանը պատրուվելու աստիճան լեցվեցավ ձուկերով, անդրադարձավ Պետրոս Անոր գերբնական զորության, և անկեղծորեն զգալով իր անարժանությունը Անոր ներկայության, ըսավ. «Հովեռ հեռացիր Տեր, ես մեղավոր մարդ մըն եմ». Հիսուս սրտապնդեց զայն և ըսավ. «Մի վախնար, ասկե հետո մարդոց որսորդ պիտի ըլլաս երկինքի արքայության համար»:

Պետրոսի մեծության գագաթը կկազմե իր ծանոթ դավանությունը, որով հայտարարեց, թե Հիսուս «Մեսիան էր և Որդի Աստուծոյ». որուն համար երկրորդ անգամ ըլլալով Հիսուսեն «վեմ» անվանվեցավ, իբրև առաջին քարը քրիստոնեական եկեղեցիի շենքին, ինչպես կհաստատե Պետրոսի ի գովեստ հորինված շարականը. «Գլուխ սուրբ հաւատոյ, հիմն եկեղեցւոյ»: Ուրիշ խոսքով, եկեղեցիի իրական անդամ պիտի կրնային ըլլալ միայն Հիսուսը իբրև Փրկիչ և Աստուծո Որդի դավանողները, Պետրոսի պես: Սակայն իր փառքի այս գագաթին Պետրոս հանկարծ արձանագրեց իր անկումներեն մեկը: Գրեթե իր բոլոր ժամանակակիցներուն պես, Պետրոս ալ սխալ ըմբռնում ուներ Մեսիայի մասին: Վերևի միջադեպեն հետո Հիսուս երբ կհաստատեր որ հակառակ Մեսիա և Աստուծո Որդի ըլլալուն, շատ պիտի չարչարվեր և սպաննվեր իր ազգին մեծամեծներեն, Պետրոս բաջալերված իր առաջին հաջողութենեն, Հիսուսին թևեն բռնելով մեկ կողմ քաշեց և Անոր բարիքը միայն մտածող բարեկամի մը անկեղծությամբ սկսավ տարհամոզել զԱյն որ այդպիսի գաղափարներ հաներ իր միտքեն: Հիսուս դարձավ դեպի Պետրոս և շեշտակի նայելով անոր աչքերուն ըսավ. «Ետիս գնա, սատանա, դուն քար գայթակղության ես ինձի համար, խնդրին վրա չես նայիր Աստուծո տեսանկյունեն, այլ մարդկային տեսակետեն» (Մտթ. ԺԶ 16—23):

Թե արդարև սրտովին կապված էր իր վարդապետին, ի հայտ եկավ այն պարագային, երբ Հիսուսի աշակերտներեն ոմանք «խիստ» և անմարսելի գտած էին Անոր կարգ մը հոգևոր խոսքերը և հեռացած՝ վարդապետեն: Հիսուս հարցուց տասներկուքին. «Դո՞ւք ալ կուզեք հեռանալ». դարձյալ Պետրոսն է, որ առաջ կնետվի և

կըսե. «Տեր որո՞ւ պիտի երթանք, հավիտենական կյանքի խոսքեր ունիս դուն». (Հովհ. Զ 67—69):

Պետրոս իր կյանքին նվաստագույն օրը ապրեցավ Հիսուսի ձերբակալման գիշերը երբ երեք անգամ ուրացավ զայն: Խորապես զղջաց ու դառնորեն լացավ: Հիսուս ներեց անոր և վերահաստատեց զայն իր առաքելության մեջ: Թերևս ոչ մեկ ազդակ այնքան նպաստեց իր մեջ խորտակելու իր հանձնապաստանության հոգի գիծը՝ որքան իր ուրացումը և ներվիլը: Քարի պես կարծը այս մարդը, այս ելևէջներով, և Քրիստոսի շնորհաց հարվածներուն ներքև կոկվեցավ դառնալու համար ամենեն անձնվեր և գործունյա առաքյալը:

Հոգեգալուստեն անմիջապես հետո ինքն է, որ հանուն իր ընկերներուն կբացատրե իմաստը հրաշալի երևույթին, կուտա քրիստոնեական առաջին քարոզը, և Քրիստոսի հարության առաջին վկայությունը, շահելով այսպես երեք հազար նորադարձներու երեխայրիքը, և օժտելով քրիստոնեական նորածին եկեղեցին ավելի մեծ մարմինով և նոր ծանրությամբ: Կբարոզե Հրեաստանի մեջ գրեթե ամենուրեք. Երուսաղեմ՝ տաճարի մեջ և իր ազգի գերագույն ժողովի առջև, մինչև Սամարիա, Յոպպա, Պաղեստինյան Կեսարիա և այլուր: Կգործե հրաշքներ, որոնց մեջն է ս. Հոգիի դեմ ստող նորադարձ քրիստոնյա ամոլի մը մահացումը, և ուրիշ բարեգործ մահացյալ կնոջ մը հարություն տալը:

Պետրոսի մեծագույն գործերեն մեկը եղավ, աստվածային թելադրանքով և հատուկ տեսիլքով, հեթանոսները եկեղեցիի ծոցին մեջ ընդունիլը, հակառակ նորակազմ եկեղեցիի ջախջախիչ մեծամասնության գաղափարին, որ ամբողջությամբ կբաղկանար հրեաներե: Ի վերջո ձերբակալվեցավ և բանտարկվեցավ Հերովդես թագավորի կողմե, որ որոշած էր հաջորդ օրը հրապարակով գլխատել զայն. բայց աստվածային միջամտությամբ նույն գիշեր իսկ ազատեցավ բանտեն: Վերջին անգամ կտեսնենք զինքը Երուսաղեմի առաքելական ժողովին, որմե հետո այլևս չհիշվիր Գործք Առաքելոցի մեջ:

Պողոս առաքյալի թուղթերեն մեկին մեջ հանվանե կհիշվի Պետրոս որ կգտնվի Անտիոք քաղաքի մեջ, և Պողոսի խիստ դիտողության կարժանանա, որովհետև հրեամիտ քրիստոնյաներու կողմը կհակի, ի հեռուկս հեթանոսներե եկած քրիստոնյաներու (Գղտ. Բ 11—15):

Թե Պետրոս մարտիրոսական մահով մահճան պիտի ունենար այլաբանորեն նախատեսված էր Քրիստոսի կողմե (Հովհ. ԻԱ 18). սակայն Գործք Առաքելոցի մեջ իր մահը պատմված չէ: Ավանդությունը կըսե որ Պետրոս Անտիոքեն անցած է Հռովմ և այնտեղ կնքած է իր կյանքը գըլխիվայր խաչվելով: Իր ավանդական գերեզմանին վրա շինված է աշխարհի մեծագույն եկեղեցին, Հռովմի ս. Պետրոսը:

Պետրոսի անունով ունինք երկու սքանչելի թուղթեր Նոր Կտակարանի մեջ, ուղղված ընդհանրապես Փոքր Ասիո քրիստոնյա համայնքներուն:

Հայց. եկեղեցին Պետրոսի հիշատակը կտոնե Պողոս Առաքյալի հետ միասնաբար, «Գլխավոր առաքյալներ» անվան տակ, ս. Ծնունդը կանխող Ավագ տոներու շարքին: Հույնք՝ Պողոսի հետ՝ հունիս 29: Լատինք՝ իր աթոռակալությունը ի Հռովմ՝ հնվր. 18: Այցելությունը Անտիոք՝ փետր. 22. Շղթայք Պետրոսի՝ օգս. 1:

10. Անդրեաս առաքյալ

Եղբայր Պետրոսի և արհեստակից անոր: Հիսուսի առաջին ծանոթ հետևողը եղած ըլլալուն համար կոչված է «Նախակոչ» առաքյալ: Ինք և հավանաբար Հովհաննես Ավետարանիչ նախապես աշակերտ էին Հովհաննես Մկրտչի, որմե լսելով Հիսուսի մասին տրված վկայությունը. «Ահա Գառն Աստուծոյ, որ բառնայ զմեղս աշխարհի», հետևեցան Անոր (Հովհ. Ա 35—40):

Ետքեն ավելի պաշտոնապես կանչվեցավ առաքելության իր եղբոր Պետրոսի հետ (Մատթ. Գ 18—20):

Քիչ բան ըսված է իր մասին Ավետարաններու մեջ. ոչինչ՝ Գործք Առաքելոցի մեջ: Իր անունը հիշված է հացերու հրաշքին կապակցությամբ, ուր ինքն է որ կհայտնե, թե պատանիի մը քով հինգ գարեղեն հաց և երկու ձուկ կգտնվի, զորս Հիսուս օրհնելով բազմացուց և բաշխեց ավելի քան հինգ հազար բազմության (Հովհ. Զ 2—8. տես նաև Հովհ. ԺԲ 22):

Ըստ ավանդության եղած է քարոզիչ սկյութացիներուն, առանց մնայուն հետք կամ եկեղեցի մը ձգելու անոնցմե: Քարոզած կնկատվի նաև Հյուսիսային Հունաստանի մեջ և նահատակված Բաթրաս քաղաքը, բազմապատկության նշանին նման խաչի մը վրա, որ այդ իսկ պատճառով կկոչվի ս. Անդրեասի Խաչ: Սկիվտիո եկեղեցին և Հունաց Տիեզերական Պատրիարքությունը զայն կնկատեն իրենց պաշտպան սուրբը: Հայ եկեղեցին կհիշատակե զայն Փիլիպպոս առաքյալի հետ, Հիսնակի պահոց Բարեկենդանի նախորդ շբ. օրը: Հույնք և լատինք՝ նոյ. 30:

11. Հակոբոս Զեբեդյան առաքյալ

Զատորոշվելու համար իր բազմաթիվ անվանակիցներեն կկոչվի նաև «Մեծն Հակոբոս»: Բայց հայոցս մեջ ծանոթ է որպես «Գլխադիր առաքյալ»: Երեց եղբայրը Հովհաննես Ավետարանիչի և որդի՝ գալիլիացի ձկնորսապետ Զեբեդիոսի: Առաքյալներեն այս երկու եղբայրներուն մայրն ալ ծանոթ է Ավետարանի էջերեն, և կկոչվի Սողոմե, որ Քրիստոսի հետևող կիներեն մեկն էր, որ համարձակություն ունեցավ իր զավակներուն հետ խնդրելու Անկե որ բարձրագույն տեղերը գրավեն իր որդիները Անոր արքայության մեջ (Մատթ. Ի 20—23):

Հակոբոս, Պետրոս և իր եղբոր Հովհաննեսի հետ կկազմեին այն սեղմ շրջանակը, որոնց ավելի կվստահեր Հիսուս, և որոնք ավելի սերտ կապված էին իրենց վարդապետին: Հայրոսի աղջկան հարության, այլակերպության և Գեթսեմանիի տագնապին ներկա են այս երեքը միայն: Երբ սամարացիները մերժեցին հյուրընկալել Հիսուսը և իր աշակերտները, զայրացան Զեբեդյան եղբայրները և Հիսուսեն հրաման ուզեցին որ Եղիայի պես կրակ թափեն այս մարդոց գլխուն (Ղկ. Թ 54): Հիսուս հանդիմանեց անոնց հախուռն և վրեժխնդիր ոգին: Այս և այլ նման դեպքերեն ուր այս երկու եղբայրները չափազանցյալ եռանդ կցուցաբերեին, կոչվեցան «Բանեերեգես», այսինքն «Որդիքն Որոտման», և այդպես ալ ծանոթ են մեր մեջ (Մրկ. Գ 17):

Հակոբոս միակ առաքյալն է, որուն մահը պատմված է Գործք Առաքելոցի մեջ: Առաքելական խումբին մեջ իբրև աչքի զարնող և եռանդուն անձնավորություն մը, Հերովդես ձերբակալել տվավ զայն և գլխատեց (Գործ. ԺԲ 1—2), շուրջ 99 թվին, Երուսաղեմի մեջ, այսպես հանդիսանալով առաջին նահատակը առաքելական խումբին: Ըստ ավանդության իր մարմինը Յաֆայի ծովը նետված՝ և ալիքները զայն հանած են Սպանիո եզերք, ուր կվայելե մեծ ժողովրդականություն: Սակայն իր անունը ավելի սերտորեն կապված է հայոցս հետ: Ըստ ավանդության Հակոբոսի գլուխը բերված է Հակոբոս Տյառնեղբայր առաքյալին, որ Երուսաղեմի մայր եկեղեցիին առաջին եպիսկոպոսն էր, որ թաղած է այս պատվական գլուխը իր տան պարտեզին մեջ: Այս տան տեղն է որ կառուցված է Երուսաղեմի մեր սրբոց Հակոբյանց մայր տաճարը, որուն հյուսիսային պատի մեջ բացված փոքր մատրան մը մեջ կցուցվի իր գլուխին գերեզմանը, այսինքն՝ ԳԼԽԱԴԻՐԸ, որ իբրև մակդիր գործածված է ժողովրդային խավերու մեջ այս առաքյալին համար: Կտոնվի իր եղբորը հետ ս. Ծնունդը կանխող «Ավագ տոներուն» իբրև վերջինը:

Հոյլնք՝ ապրիլ 30: Լատինք՝ հուլիս 25:

12. Հովհաննես առաքյալ

Ամենեն պայծառ ու խոհուն դեմքը առաքելական դասուն: Սիրո աշակերտը. Աստվածաբան Ավետարանիչը. Հայտնության Տեսանողը:

Հովհաննես, հակառակ թերևս մտքերու մեջ կազմված հանդարտաբարո անձի մը պատկերին, Ավետարաններուն մեջ նախ ներկայանա իբրև անհանդուրժող, վրեժխնդիր, կորովի և փառասեր երիտասարդ մը, սակայն միշտ նվիրումով լեցուն Քրիստոսի հանդեպ: Երեք տարիներու աշակերտություն մը Քրիստոսի դպրոցին մեջ բավական եղավ որ ան փոխակերպվի Ավետարանի ամենեն շքեղ դեմքերեն մեկին: Իր մեջ ներդաշնակված են նկարագրի մը հակադիր կարծված գիծերը, եռանդը և հանդարտությունը, քաջությունը և բարությունը, մեծությունը և խոնարհությունը, սերը և խստությունը:

Առաքելոց մեջ կրտսերագույնը ըլլալ կթվի, սակայն ապրեցավ երկարագույնը: Իր բարեմույն բնավորության, նվիրումին և այլ ազնիվ հատկությանց համար արժանացած է Հիսուսի մասնավոր սիրույն, այն աստիճան որ տիրացած է «Սիրելի աշակերտ» տիտղոսին: Այս սիրույն արժանի կացուց ինքզինք Հովհաննես, որ բան Հիսուսի ի պաշտպանություն իր ինչ-ինչ միամիտ ելույթներով, բայց մանավանդ Հիսուսի ձերբակալման գիշերը, երբ մյուս աշակերտները ձգեցին ու փախան, ինք հավատարմորեն հետևեցավ իր սիրելի վարդապետին չարչարանաց ամբողջ գիշերը՝ խաչի ճամբան՝ մինչև Գողգոթա, ուր արժանացավ արդարև գերագույն շնորհին. Հիսուս իր մայրը հանձնեց Հովհաննեսին, և զայն ալ իր մորը որդին հայտարարեց: Ու Հովհաննես ունեցավ իր բարեպաշտ մորը կողքին երկրորդ և նույնքան հարազատ ու անգերազանցելի մայր մը, հանձին Աստվածամոր:

Միաշաբաթի առավոտ երբ իմացավ Հիսուսի գերեզմանին պարապ գտնվիլը, Պետրոսին հետ վազեց գերեզման, տեսավ ամեն բան և «հավատաց» Քրիստոսի հարության առանց Հարուցյալը տեսած ըլլալու:

Առաջին եկեղեցիի «Սյուներեն» մեկն է Հովհաննես, Հակոբոս Տյառնեղբայր առաքյալին և Պետրոսի հետ, որմե անբաժան է հանախ իր անունը Գործք Առաքե-

լոցի սկիզբները: Օրինակ ի ծնե կաղ մարդու մը բժշկությունը կվերագրվի երկուքին հավասարապես, որ մեծ խնդիր հանեց հրեից մեջ և պատճառ եղավ երկուքին ձերբակալվելուն և բանտ դրվելուն: Հաջորդ օր հանվեցան իրենց Ազգ. Գերագույն Ժողովին առջև, ուր համարձակ պատասխաններ տվին ու մեծամեծները «տեսնելով Պետրոսի և Հովհաննեսի համարձակությունը, և վերահասու ըլլալով որ տգետ և առանց դպրության մարդիկ են, զարմանքի մատնված էին»: Օրինակաև պատճառ մը չգտնելով զանոնք պատժելու պարզապես արգիլեցին «ամենևին չխոսիլ և չուսուցանել Հիսուսի անունով: Իսկ Պետրոս և Հովհաննես պատասխան տվին ըսելով.—Դուք դատեցեք, ո՞րն է շիտակը. ձեզի՞ լսել, թե՝ Աստուծո: Սակայն մենք չենք կրնար չքարոզել մեր տեսած և լսած բաներու մասին: Անոնք սպառնացին և արձակեցին զանոնք», հաշվի առնելով ժողովուրդը, որ փառք կուտար Աստուծո պատահած հրաշքին համար (Գործ. Դ 1—22):

Երուսաղեմի ժողովեն հետո առաքյալներ գրեթե մի առ մի ցրվեցան զանազան երկիրներ: Ավանդաբար կպատմվի թե Հովհաննես ալ գացած է Եփեսոս, ուր մնացած է երկար տարիներ և ընդարձակած՝ Պողոս առաքյալին այնտեղ սկսած գործը, մինչև որ աքսորված է Եգեական կղզիներեն Պատմոս, ուր տեսած է այն խորհրդավոր տեսիլքները, որոնք մեզի ներկայացված են «ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ» գրքին մեջ:

Հովհաննեսի մեծագույն փառքն է իր Ավետարանը, որ գրված է նախորդ երեքեն տարբեր ոճով ու տարբեր ոգիով, որուն նպատակն է մեզի ներկայացնել Քրիստոսը, իբրև Որդի Աստուծո: Այս գիրքը ամենեն խորունկը ու ամենեն հոգևորն է Նոր Կտակարանի 27 գիրքերուն: Այս Ավետարանին մեջ Քրիստոս ավելի խոր և ավելի լրիվ հայտնություն մը կուտա ինքզինքին և Աստուծո մասին: Հովհաննեսի Ավետարանը լրացուցիչն է առաջին երեքին: Գրեթե գրքին կեսը հատկացված է Հիսուսի կյանքի վերջին օրերու խոսքերուն և գործերուն: Հրաշալի է մանավանդ գրքին հառաջաբանը, ուր կներկայացվի Քրիստոս իբրև Աստուծո «Բան»-ը, այսինքն անձնավորյալ իմաստությունը, որ «Ի սկզբանէ է. Առ Աստուած է. և Աստուած է». Նկատելի պարագա մը է, որ այս Ավետարանին մեջ հանվանե չեն հիշատակված ոչ ինք, ոչ իր եղբայրը և ոչ ալ՝ իր մայրը: Սա նախ ուղղակի կարևոր փաստերեն մեկն է այս Ավետարանին Հովհաննեսի կողմե գրված ըլլալուն, և երկրորդ՝ իր համեստության ու խոնարհության:

Հովհաննեսի անունով Նոր Կտակարանին մեջ կան նաև երեք թուղթեր. առաջինը հինգ գլուխներե բաղկացած հոյակապ գրություն մը է, որուն նպատակն է հավատացյալները զգուշացնել մեղքի և սուտ քարոզիչներու դեմ, զորացնելով իրենց հավատքը ի Քրիստոս, և հավաստիք ներշնչելով անոնց՝ հավիտենական կյանքի մասին: Բանալի բառերն են «սեր» (ավելի քան քսան անգամ գործածված), «գիտություն» կամ անոր համազոր բառեր (երեսուն անգամ) և «հաղորդություն»: Երկրորդ և երրորդ թուղթերը մեկական գլուխով Նոր Կտակարանի կարճագույն գրություններն են, ուղղված անհատներու. առաջինը «առ ընտրյալ Կյուրիա (Տիրուհի) և իր որդյակները»: Նոր Կտակարանի միակ թուղթը, որ կնոջ մը ուղղված է. այստեղ ալ բանալի բառերը «սեր» և «ճշմարտություն» են: Երկրորդ գրվածքն է «Գայիոս սիրելիին»: Թե Ավետարանը և թե թուղթերը գրված են առաքյալի կյանքի վերջին տարիներուն: Իր մահը պատահած կնկատվի 100 թվականին, շուրջ 95 տարեկան: Թեև շատ չարչարանքներ տեսած՝ բայց մահը տեղի ունեցած է խաղաղ պայմաններու տակ Եփեսոսի մեջ: Կպատմվի որ ծերության տարիքին երբ երկար չէր կրնար խոսիլ, եկեղեցի կուգար լոկ ըսելու համար. «Մանկունք սիրեցեք զիրար»: Իր գերեզմանին վրա փառավոր եկեղեցի մը կառուցված էր, որուն ավերակները միայն կանգուն կմնան այսօր:

Հույնք՝ սեպտ. 26 և մյս. 8. լատինք՝ դեկտ. 27 և մյս. 6:

23. Մատթեոս առաքյալ

Կապիտանաումի մեջ մաքսավոր մը, այսինքն պետական հարկահավաք պաշտոնյա մը էր Մատթեոս: Մաքսավորները հրեից աչքին ատելի մարդիկ էին երկու պատճառներով: Նախ օտար պետության մը հրեա պաշտոնյաներն էին, որոնք ժողովրդային խավերուն հետ ուղղակի շփում ունեին տուրք գանձելով ի հաշիվ ատելի իշխող ժողովուրդին: Երկրորդ՝ իրենց սահմանվածեն ավելի կգանձեին-իրենք ալ հարստանալու համար: Անոնք նույնացած էին «մեղավորներու» հետ, և առհասարակ միասին կհիշվին: Հակառակ այս իրողության մաքսավորներ նպաստավոր լույսի ներքև ներկայացված են Ավետարաններու մեջ: Օրինակ, Հովհաննես Մկրտչի մկրտվելու եկող ապաշխարողներու մեջ կան

նաև մաքսավորներ, որոնք կհարցնեին մարգարեին, թե ինչ պարտ էին ընել: Հովհաննես կպատասխանե. «Զեզի հրամայված (տուրքեն) ավելին մի առնեք» (Ղկ. Դ 12—13): Ծանոթ է առակը Փարիսեցիին ու Մաքսավորին, որոնք աղոթքի համար տաճար կերթան, ու մաքսավորը ընդունելով իր մեղավոր ըլլալը Աստուծմե քավություն կհայցե իր վրա. և Հիսուս կհաստատե որ «Սա ավելի արդարացած իջավ իր տունը քան փարիսեցին», որ բարեպաշտության տիպարն էր եբրայական չափանիշներով: Ծանոթ է նաև Զաքքեոս մաքսավորին դարձը, իր ինչքերուն կեսը աղքատներուն տալով և իրմե անիրավյալին քառապատիկ հատուցում ընելու պատրաստակամությամբ:

Ասոնցմե մեկն էր նաև Լևի Ալփյանը, որ Մատթեոսի նախկին կամ հրեական անունն է: Նստած էր Կափառնաումի իր մաքսատան մեջ, երբ Հիսուս անցավ այնտեղեն: Սրտագետն Աստուծո Որդին տեսավ անոր մեջ առաքելական ատաղձ և պարզապես ըսավ. «Ետևես եկուր»: Մատթեոս ամենայն հավանականությամբ լսած էր Հիսուսի քարոզությունը Կափառնաումի ժողովարանին մեջ, ու ականատես կամ ականջալուր եղած էր Անոր հրաշքներուն, և հետևաբար լավ տրամադրված էր հանդեպ Հիսուսի, այնպես որ երբ Անկե կոչ ստացավ՝ սիրով և պատրաստակամությամբ «ձգեց ամեն բան» և Հիսուսի հետևվեցավ:

Մատթեոս սակայն, նախ քան իր գործեն և ընկերային շրջանակեն հրաժարիլը, մեծ ընդունելություն մը սարքեց իր տան մեջ, որուն հրավիրեց իր բոլոր պաշտոնակիցները և Հիսուսը իր աշակերտներով: Ասիկա գորավոր տրտունջքի տեղի տվավ դպիրներու և փարիսեցիներու կողմե, թե Հիսուս «մեղավորներու և մաքսավորներու հետ սեղան կնստի», որոնց Հիսուս տվավ իր նշանավոր պատասխաններեն մեկը. «Առողջները բժիշկի պետք չունին, այլ հիվանդները, գացեք և սորվեցեք թե ինչ կնշանակե ողորմություն կուզեմ և ոչ զոհ» (մարգարեական խոսքը): Բաց աստի ավելցուց Հիսուս. «Ես չեկա արդարները կանչելու, այլ՝ մեղավորները» (Մատթ. Թ 9—13):

Այսչափ է մեր գիտցածը Մատթեոսի մասին Ավետարաններեն. մնացյալը կփորձե լրացնել ավանդությունը, որ զայն քարոզության կղրկե մինչև Հապեշիստան, կամ Պարսկաստան ու Պարթևաստան ուր և նահատակված կնկատվի:

Մատթեոսի անկապտելի փառքը իր Ավետարանն է, առաջին գիրքը Նոր Կտակարանի և հարմարագույն օղակը Հին Կտակարանը Նորին կապող: Արդարև այս գրքին առաջին էջը կբացվի հիշատակությամբ Հին Կտակարանի «հիմնադիր հայրերու» և արքայական զարմերուն, իբրև օրինական նախահայրերը Հիսուս Քրիստոսի «Որդւոյ Դաւթի, Որդւոյ Աբրահամու»: Երկրորդ՝ նվազագույն վաթսուն անգամ ակնարկություն կա իր գիրքին մեջ Հին Կտակարանի մարգարեությանց և բառասուն անգամ մեջբերումներ կատարված են ասոնցմե, իբրև կատարումը ասոնց մարգարեության: Հետևաբար բանալի բառն մը է այս գրքին մեջ «կատարվեցավ ըսվածը» այսինչ մարգարեին կողմե: Եվ «երկնքի թագաւորութիւն» բացատրությունը, որ երեսուն-քառասուն անգամ կհիշվի այս գրքին մեջ: Նպատակն է հաստատել թե Հիսուս Նազովրեցին ակնկալված Մեսիան էր: Նշանավոր է Մատթեոսի Ավետարանին «Լերան քարոզը» (Ե—Է գլուխներ), որ Նոր Ուխտի Օրինագիրքը կամ Սահմանադրությունը կարելի է նկատել, և որ միաժամանակ համամարդկային կրոնաբարոյական գրականության գագաթը կըկազմե:

Մատթեոս մեր մեջ կտոնվի իր երեք մյուս ավետարանիչ ընկերներուն հետ, Խաչի վեցերորդ կիրակիի նախընթաց շաբաթ օրը: Հույնք՝ նոյ. 16: Լատինք՝ փետր. 24:

14. Բարթողոմեոս առաքյալ

Թեև մեր տոնացույցին անցած է Բարթողիմեոս կամ Բարթուղիմեոս ձևերով, բայց իր շիտակ անունն է ԲԱՐԹՈՂՈՄԵՈՍ, որ կնշանակե Թոլոմեի որդի: Հայոցս «Առաջին Լուսավորիչներ» հորջորջված երկու առաքյալներեն մեկը: Հովհաննու Ավետարանին մեջ իր առաքելության կոչումը կկատարվի ՆԱԹԱՆԱՅԵԼ անվան տակ:

Փիլիպպոս առաքյալ Հիսուսի կողմե «գտնվելե» հետո իր կարգին «կգտնե Նաթանայելը» և կըսե անոր.

— Ան, որու մասին գրած է Մովսես Օրենքի գրքին մեջ, և մարգարեները—իրենց գրքերու մեջ—մենք գտած ենք արդեն: Նույն ինքն Հիսուսն է, Հովսեփի որդին, Նազարեթեն:

Նաթանայել որ Նազարեթին մոտիկ Կանա գյուղեն էր, լավ կճանչնար այդ քաղաքը և հետևաբար ըսավ անկեղծորեն.

— Իսկ Նազարեթեն կրնա՞ միթե բարի բան մը ելլել: Փիլիպպոս չփորձեց տարհամոզել, այլ ըսավ պարզապես.

— Եկուր և ինքդ տես:

Երբ Հիսուս տեսաւ Նաթանայելը, որ իրեն կուգար, ըսաւ.

— Ահա արդարև իսրայելացի մը, որուն մեջ նենգություն չկա:

— Ուրկե՞ կճանչնաս զիս, ըսաւ Նաթանայել նույն համարձակությամբ:

— Նախքան Փիլիպպոս քեզ կանչելը ես քեզ տեսա թզենիին տակ, վրա բերաւ Հիսուս: Թե ինչ կնշանակեր այդ ակնարկությունը մեզի համար մութ կմնա այսօր, բայց հստակորեն հասկցվեցաւ Նաթանայելի կողմե, որ անմիջապես փոխեց իր կարծիքը առնվազն Նազարեթցի Հիսուսի մասին և բացագանչեց.

— Ռաբբի, դուն Աստուծո Որդին ես, դուն Իսրայելի թագավորն ես: «Թագավոր Իսրայելի» պարզապես կնշանակե «Մեսիա» ակնկալված Փրկիչը: Այս դավանությամբ Նաթանայել կժառանգե «Նախադավան առաքյալ» փառավոր կոչումը: Աստվածային նախախնամությամբ և նախատեսությամբ արժան և իրավ էր, որ «նախադավան» ազգին առաքյալը ըլլար նաև առաջինը զՀիսուս «Որդի Աստուծո» դավանողներուն մեջ:

Նաթանայելի անունը կերևի նաև առաքյալներու այն յոթնյակին մեջ, որոնք Հիսուսի հարութենեն հետո Գալիլիա վերադարձած էին, զԱյն վերստին տեսնելու հույսով, սակայն սպասելե ձանձրացած օրին մեկը ձկնորսության կելլեն հավաքաբար, երբ արդարև խորհրդավոր պայմաններու ներքև արժանի կըլլան հարուցյալ Փրկչի տեսության:

Բարթողոմեոս, ըստ ավանդության Իրանի բարձրավանդակի զանազան երկիրները քարոզելե հետո կմտնե Հայաստանի սահմանները, և կշարունակե իրմե առաջ հոն եկած Թադեոս առաքյալի գործը: Ինք ալ կթափանցե արքունիք և թագավորի քույրը դարձի կբերե, որուն պատճառով կձերբակալվի Հայոց Սանատրուկ թագավորին կողմե, սաստիկ չարչարանքներու կենթարկվի, մինչև իսկ մորթազերծ ըլլալով կնահատակվի Հայաստանի հարավարևելյան մասին մեջ: Իր գերեզմանին վրա, ի Հաղբակ, փառավոր տաճար մը կառուցված էր, և վանք մը հաստատված, որ այսօր ավերակույտ մըն է միայն:

Կտոնենք զայն Հայաստանի մյուս «Լուսավորիչ» Թադեոս առաքյալի հետ, Հիսնակի առաջին կիրակիի հաջորդող շաբաթ օրը: Հույնք՝ հունիս 11 և օգս. 25: Լատինք՝ օգոս. 25:

(Շարունակելի)

(«Աստվածաշնչական սուրբեր», Իսթանպուլ, 1977, էջ 151—162)



Բոլոր Եկեղեցիներ

ՔԵՆԹՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ԴՈԿՏ. ՖՐԵԴԵՐԻԿ ԴՈՆԱԼԴ ԿՈԳԱՆ

Սույն թվականի հոկտեմբերի սկզբներին պաշտոնական այցով Մայր Աթոռ կժամանի Քենթրբերիի արքեպիսկոպոս դոկտ. Ֆրեդերիկ Դոնալդ Կոգանը՝ ի գլուխ անգլիական եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներից բաղկացած մի պատվիրակության:

Հայ և անգլիական եկեղեցիների հարաբերությունների պատմության մեջ սա կարևոր մի իրադարձություն է, երբ, առաջին անգամ լինելով, անգլիական եկեղեցու գերագույն պետը պաշտոնական այցելություն է տալու Ամենայն Հայոց Հայրապետին և Մայր Աթոռ ս. Էջմիածնին:

«Էջմիածին» ամսագրի 1977 թվականի հոկտեմբերի համարում մանրամասնորեն անդրադառնալու ենք սույն այցելությանը և այդ առթիվ կազմակերպվելիք հանդիսություններին:

Ստորև մեր ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում Քենթրբերիի արքեպիսկոպոսի համառոտ կենսագրությունը:

Դոկտ. Ֆրեդերիկ Դոնալդ Կոգանը ծնվել է Հայգեյթում (Լոնդոն) 1909 թվականի հոկտեմբերի 9-ին: Նախնական կրթությունն ստացել է «Մրչնտ Թեյլըր» դպրոցում, ապա իր ուսումը շարունակել է Քեմբրիջի «Սենտ Ջոնս» կոլեջում: Այնուհետև նա իր հոգևոր դաստիարակությունն ստացել է Օքսֆորդի Վայկլիֆ Հոլլում և դասախոսական աշխատանքի անցել Մանչեստրի համալսարանի սեմական լեզուների և գրականության ֆակուլտետում:

1934 թվականին սարկավագ և ապա, մեկ տարի հետո, ձեռնադրվել է քահանա՝ ծառայելով որպես հովվի օգնական Իզլինգթոնի ս. Մերի եկեղեցում: 1937 թվականին մեկնել է Կանադա, որպես Նոր Կտակարանի մեկնության պրոֆեսոր, դասախոսելու Տորոնտոյի Վայկլիֆ կոլեջում:

1944 թվականին վերադառնալով հայրենիք՝ վարել է Լոնդոնի «Պիվինիտի» կոլեջի տեսչությունը, մինչև 1956 թվականը: Այդ նույն տարում նա ձեռնադրվել է Բրեդֆորդի եպիսկոպոս:

1961 թվականի սեպտեմբերի 13-ին բարձրացել է Յորքի արքեպիսկոպոսական Աթոռին: Այդ պաշտոնում նա 19 տարի մեծ արդյունավորությամբ ծառայելուց հետո, փոխադրվել է Քենթրբերի՝ ծավալելով էկումենիկ մեծ աշխատանք «Հյուսիսային կանչ» կոչվող շարժման մեջ, մասնավո-

ՔԵՆԹՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈԿՏ. ՖՐԵԴԵՐԻԿ ԴՈՆԱԼԴ ԿՈԳԱՆ

բապես գործակցելով Լիվերպուլի կաթոլիկ շրջանակի հոգևոր ղեկավարների հետ:

1975 թվականի հունիսի 24-ին դոկտ. Կոգանը անգլիկան եկեղեցուն և իր ժողովրդին մատուցած մեծ ծառայությունների համար կոչվել է զբաղեցնելու Քենթրբերիի պատմական Աթոռը որպես գերագույն պետը անգլիկան մեծ եկեղեցու:

Որպես բազմակողմանիորեն պատրաստված հոգևոր անձնավորություն, դոկտ. Կոգանը երկար տարիներ ծավալել է քարոզչական, սուրբ գրական բեղուն գործունեություն՝ քրիստոնեական գրականությունը տարածելու և մասսայականացնելու ուղղությամբ: Նրա գրչին են պատկանում կրոնաշունչ բովանդակությամբ շուրջ տասը գիտական-քարոզչական լուրջ աշխատություններ:

Քենթրբերիի նորընտիր արքեպիսկոպոսը եղել է եկեղեցիների ի Քրիստոս միության և համագործակցության ջերմ պաշտպաններից և ակտիվ գործիչներից մեկը: Այդ նպատակով նա կատարել է բազում ճանապարհորդություններ՝ եղբայրական ջերմ հարաբերություններ հաստատելով շատ երկրների եկեղեցիների և եկեղեցական կազմակերպությունների հետ: Առանձնապես պետք է այստեղ արձանագրել նրա պատմական այցելությունը հռոմեական կաթոլիկ եկեղեցու պետ Նորին Սրբություն Պողոս Զ Պապին, Կ. Պոլսի Տիեզերական Պատրիարք Դեմետրիոսին, Կ. Պոլսի հայոց պատրիարք տ. Ծնորհք արքեպիսկոպոսին, ինչպես նաև Ժնևի Եկեղեցիների համաշխարհային կենտրոնին:

Միջեկեղեցական այս հանդիպումների և այցելությունների ճանապարհի վրա Քենթրբերիի արքեպիսկոպոսի առաջիկա այցելությունը Մոսկվա՝ ռուս պրավոսլավ եկեղեցու պետ Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքին, և ապա ս. Էջմիածին՝ Ամենայն Հայոց Հայրապետին, կհանդիսանա մեր ժամանակաշրջանի միջեկեղեցական էկումենիկ հարաբերությունների պատմության մեջ մի նշանակալից և կարևոր իրադարձություն:





ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Օգոստոսի 3-ին, չորեքշաբթի.—Այսօր, առավոտյան, Վեհափառ Հայրապետը մեկնեց Կիպրոսի՝ հանգստանալու «Կրաանի կամնի» առողջարանում:

Հայոց Հայրապետին ուղեկցում էր Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդական փոխանորդ տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը:

* * *

Օգոստոսի 7-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում քահանայական իր առաջին ս. պատարագն է մատուցում տ. Ավագ աբեղա Աստուրյանը և «Հայր մեր»-ից առաջ բարոզում՝ «Քեզ ասեմ, արի ա՛ռ զմահիճս քո՝ և երթ ի տուն քո» (Մարկ. Բ 11) բնաբանով:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան մասնավոր պաշտոն՝ Կիպրոսի հանրապետության նորոգ հանգուցյալ պրեզիդենտ Տ. Մակարիոս արքեպիսկոպոսի հիշատակին:

Այս տխուր առիթով, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը օգոստոսի 5-ին հետևյալ ցավակցական հեռագիրը ուղարկեց Կիպրոսի Հունաց արքեպիսկոպոսարան.

Սրբազան տեղապահ
Քրիսոստոմոս Փաֆու.

Հայ եկեղեցու անունից, խորը վշտով Մեր ցավակցություններն ենք հայտնում Կիպրոսի հանրապետության նախագահ Մակարիոս արքեպիսկոպոսի վաղաժամ մահվան առթիվ:

Նրա հիշատակը պայծառ կմնա հայ եկեղեցու և հայ ժողովրդի հիշողության մեջ իբրև բացառիկ դեմքի և իր ժողովրդին նվիրված մեծ առաջնորդի: Աղոթում ենք առ Աստված՝ նրա արդար հոգու խաղաղության և լուսավորության համար:

Կիրակի, օգոստոսի 7-ին, ս. Էջմիածնի Մայր տաճարում հանդիսավոր հոգեհանգիստ կկատարվի տ. Մակարիոս արքեպիսկոպոսի հոգու հանգստյան համար:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

5 օգոստոսի 1977 թ.

*
* *

Օգոստոսի 14-ին, կիրակի.—Վերափոխումն ս. Աստուածածնի.

Այսօր Մայր տաճարում, մեծ տոնի առիթով, հանդիսավոր ս. պատարագ է մատուցում տ. Արսեն եպս. Բերբերյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում՝ «Խնկի ծառի նման ես, բարի պտուղ բերեալ ես, պտուղ ողու քաղցրահամ ես, Աստուածածին մեղայ քեզ» տաղի բնաբանով:

Այս առթիվ Մայր Աթոռ ուխտի էր եկել հավատացյալների հոծ բազմություն՝ ներկա լինելու օրվա հանդիսություններին, ստանալու համար հոգևոր մխիթարություն և բերկրանք:

Հավարտ ս. պատարագի, տ. Արսեն եպիսկոպոսի նախագահությամբ «կատարի օրհնութիւն խաղողոյ» կարգը:

*
* *

Օգոստոսի 15-ին, երկուշաբթի.—Ցիշատակ մեռելոց.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Նշան քհն. Բեյլերյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ «վասն համօրէն ննջեցելոց»:

*
* *

Օգոստոսի 21-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում՝ «Մեք սիրեսցուք զԱստուած, վասն զի նա նախ սիրեաց զմեզ» (Ա Հովհ. Դ 19) բնաբանով:

*
* *

Օգոստոսի 27-ին, շաբաթ.—Այսօր Կիսլովոդսկից Մայր Աթոռ վերադարձավ Վեհափառ Հայրապետը՝ «Կրասնի կամնի» առողջարանում շուրջ մեկ ամիս հանգստանալուց հետո:

Վեհափառ Հայրապետին ուղեկցել էր Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդական փոխանորդ տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը:

*
* *

Օգոստոսի 28-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մասիս վրդ. Գալստյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում հավուր պատշաճի:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐՔԻՆ ԹԵՄԵՐԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1977 թվականին էլ, Վեհափառ Հայրապետի բարեհաճ արտոնությամբ, կատարվեցին քահանայական մի քանի ձեռնադրություններ ներքին թեմերի եկեղեցիների համար:

Քահանայական թեկնածուները որոշ ժամանակով իրենց ուսումը կատարելագործեցին հոգևոր ճեմարանի մասնավոր դասընթացներում՝ ձեռք բերելով եկեղեցագիտական, ծիսապաշտական և շարականագիտական անհրաժեշտ գիտելիքներ:

Նախապատրաստական այս աշխատանքներից հետո թեկնածուներն իրենց մտավոր պատրաստության մասին քննիչ հանձնաժողովի առաջ քննություն հանձնեցին: Քննիչ հանձնաժողովի դրական վկայությունից հետո, Վեհափառ Հայրապետը բարեհաճեց արտոնել ընծայացուների ձեռնադրությունը:

Նորընծա քահանաներն են.

1.—Տեր Ներսես քհն. Տեր-Ներսիսյան. որը Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ տ. Կոմիտաս արքեպիսկոպոսի ձեռամբ Երևանի ս. Սարգիս եկեղեցում քահանա ձեռնադրվեց՝ Կամո քաղաքի ս. Աստվածածին եկեղեցու համար:

2.—Տեր Դավիթ քհն. Զելվելյան, որը վրահայոց թեմի առաջնորդ տ. Գևորգ եպիսկոպոսի ձեռամբ ս. Հռիփսիմե վանքի եկեղեցում քահանա ձեռնադրվեց՝ Թբիլիսիի հայոց ս. Էջմիածին եկեղեցու համար:

3.—Տեր Տիրատուր քհն. Կարվանյան, որը Ծիրակի թեմի առաջնորդ տ. Նարեկ եպիսկոպոսի ձեռամբ Լենինականի ս. Աստվածածին եկեղեցում քահանա ձեռնադրվեց՝ Կիրովական քաղաքի ս. Աստվածածին եկեղեցու համար:

Հիշյալ նորընծաներն իրենց քահանայական քառասունքը անցկացրին Մայր Աթոռում և ապա մեկնեցին իրենց պաշտոնատեղիները՝ նվիրվելու իրենց հոգևոր սպասավորության գործին:



ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾՆԻ

Սուրբ Աստվածածնի մեռնելուն և երկինք փոխադրվելուն հիշատակն է որ կտոնախմբվի «Վերափոխումն» կամ «Ննջումն» ս. Կույսին անունին ներքև: Եվ այս տոնը մեր եկեղեցվո հինգ տաղավարներեն մեկն է և կկատարվի օգոստոսի 15-ի մերձավոր կիրակիին:

Ավանդության համաձայն, Քրիստոսի Համբարձումեն հետո, ս. Կույս Մարիամ տասնհինգ տարի ապրեցավ Երուսաղեմի մեջ Հովհաննես Ավետարանիչի որդիական խնամքին ներքև: Ապա ս. Կույսը խաղաղ ու հանգիստ մահ մը ունեցավ: Քրիստոսի բոլոր առաքյալները հանդիսավոր թափորով մը թաղումը կատարեցին Գեթսեմանիի ձորակին մեջ: Իր թաղումեն ետքը, երեք օր, գիշեր ու ցերեկ, հրեշտակային երգեր կլսվեին: Թաղման ժամանակ միայն Բարթուղիմեոս առաքյալը բացակայած էր, որ իմանալով Աստվածամոր վախճանումը՝ փութաց Երուսաղեմ: Առաքյալը փափաքեցավ անպայման տեսնել ս. Կույսը վերջին անգամ: Այսպես, մյուս առաքյալներու ընկերակցությամբ, իջավ թաղման վայրը և բացին գերեզմանը, ուր չկար ս. Կույսին մարմինը: Այս իրողությենեն հետևցուցին՝ թե Քրիստոս իր խոստումը կատարելով՝ իր մայրը երկինք վերափոխած էր:

Ասոր համար ս. Կույսին «մահացավ» բառը չենք գործածեր, այլ՝ «ննջեց» հասկնալի դարձնելու համար անոր երկինք վերափոխումը:

Այս ավանդությունն առաքելական շրջանեն սկսավ անշուշտ: Եվ այսպես Աստվածածնի ննջման տարեդարձը կտոնվեր առաջին շրջանեն. «իբրև գրավոր փաստ ունինք Երուսաղեմյան Ճաշոցը, որ կհիշե զայն Դ դարուն. այդ կհամարվի «Հնագույնը» Աստվածածնի տոներուն: Վերափոխումը իբրև վարդապետություն ընդունված է Թ—ԺԲ դարերուն»:

Հռովմեական եկեղեցին Աստվածածնի Վերափոխումն ալ իր հիմնական վարդապետության կարգը անցուց 1950-ին:

Պետք է ավելցնել նաև, որ Քրիստոսի նվիրված բոլոր տերունական տոներն ալ, այսպես ժամանակի ընթացքին զարգացած էին և ապա տոնվելու սկսած, այսպես ս. Ծնունդը, Զատկի Հարության տոնը, Համբարձման տոնը, և այլն:

Քրիստոս ծածուկ մեծցող սերմին իր առակով արդեն բաած էր, թե իր վարդապետությունը դարերու ընթացքին անզգալիորեն պիտի աճեր, նախ խոտը, ետքը հասկը, անկե ետև լեցուն գորենը տալու համար (Մարկ. Դ 26—29): Առաքելական շրջանեն սկսյալ, միշտ սեր և հարգանք կար ս. Կույսին հանդեպ: Իսկ 431 թվականին, Եփեսոսի տիեզերական ժողովին, պաշտոնապես հռչակվեցավ և դավանական սկզբունք դարձավ ս. Կույսին Աստվածածին ըլլալը և ոչ թե՝ մարդածին, ինչպես կրսեր Նեստոր: Այս նույն դավանանքը ունի նաև մեր Հայց. առաքելական ս. եկեղեցին:

Ս. Կույսի Վերափոխման այս պատմությունը, ավանդությամբ հասած է մեզի, բանի որ Նոր Կտակարանին մեջ ոչ մեկ հիշատակություն կամ ակնարկություն կա այս մասին: Ասոր համար կարգ մը եկեղեցիներու կողմե չընդունվելե զատ, «Հակասուրբգրային» ալ կորակեն այս տոնը: Պետք չէ, սակայն, զարմանալ չհիշված ըլլալուն համար, որովհետև առաքելական սկզբնական շրջանին իրենց քարոզները և պատգամները կնախընտրեին միայն բերանացի հաղորդել: Գիրք գրելու խնդիրով չէին հետաքրքրվեր, որովհետև նախապես այն համոզումը ունեին՝ թե Քրիստոսի երկրորդ գալուստը շատ մոտ էր, նույնիսկ իրենց օրով կրնար պատահիլ (Ա Կորնթ. ԺԵ 51. Ա Թեսաղ. Դ 14): Այսպես պետք

չտեսան անմիջական իրենց ապրած պատմությունները գրի առնելու:

Առաջինը եղավ Մարկոս Ավետարանիչը՝ որ գրեց իր Ավետարանը 65 թվականներուն, գոհացում տալու համար հունա-հռոմեական հեթանոսութենե դաձած քրիստոնյա հասարակության պահանջքին, որոնք կփափաքեին գիտնալ իրենց հավատացած Հիսուսի կյանքին, վարդապետության, Հարության մասին, և այլն: Ավետարանը կսկսի Հովհաննես Մկրտիչի մկրտութենեն: Ոչ մեկ խոսք Հիսուսի ծննդյան մասին: Հետո Մատթեոս գրեց իր Ավետարանը 68—70 թվականներուն միջև: Ասիկա կխոսի Քրիստոսի ծննդյան մասին միայն Հովսեփի կողմեն դիտված: Երրորդը պիտի ըլլար Ղուկաս Ավետարանիչը, որ գրեց իր Ավետարանը 70—75 թվականներուն միջև, ուր լայնորեն նկարագրեց Հիսուսի ծննդյան դեպքերը ս. Կույսին կողմե ներկայացված: Իսկ 95 թվականներուն, Հովհաննես Ավետարանիչ գրելով իր Ավետարանը, տեսակ մը պիտի ամբողջացներ նախորդները: Եվ պիտի շեշտեր. «Եվ ուրիշ շատ բաներ ալ կան, զորոնք Հիսուս ըրավ, որոնք եթե մեկիկ-մեկիկ գրված ըլլային՝ կարծեմ թե աշհարհս ալ բավական պիտի չըլլար պարունակելու այն գիրքերը՝ որ գրված ըլլային» (Հովհ. ԻԱ 25):

Ուրեմն չորս Ավետարանիչները քիչ բան պատմած են մեր Տիրոջ մասին: Սկզբնական շրջանին բոլոր պատմությունները, պատգամները միայն բերանացի ավանդվեցան երկար ժամանակ. այսպես անգիր կերպով սերունդ սերունդ փոխանցվեցան մինչև որ օր մը գրի առնվեցան և կոչվեցան «ավանդություն»: Ուրեմն ավանդության սկիզբը առաքելական ծագում ունի, այս է ամենեն կարևորը անշուշտ: «Եւ որպէս աւանդեցի ձեզ, աւանդութիւնսն ունիցիք» (Ա Կորնթ. ԺԱ 2): Թարգ. «Ինչպես ավանդեցի ձեզի, ավանդությունը կպահեք»: «Եվ ուրիշ բաներ ձեզի եկած ատենս պիտի պատվիրեմ» (Ա Կորնթ. ԺԱ 34): Ինչ որ կնշանակե՝ որ առաքյալին քարոզած ճշմարտությունը, իր պատվիրած սովորույթները կամ օրենքները միայն գրված չեն, այլ շատ բան «պատվիրած» է, այսինքն ավանդած է, որոնք սակայն չեն գրված: Ուրիշ առթիվ ալ, Հովհաննես առաքյալը կգրե. «Շատ բան ունեի ձեզի գրելու, բայց չուզեցի թուղթով ու մելանով գրել, վասնզի հույս ունիմ, որ ձեզի գամ, և բերան առ բերան խոսիմ» (Բ Հովհ. 12): Ուրիշ տեղ մը նաև. «Եվ երբ այս թուղթը ձեր մեջ կարդացվի, ապա Լավոդիկեցվոց եկեղեցվո մեջ ալ կարդալ տվեք, և դուք ալ Լավոդիկիայե եկած թուղթը կարդացեք» (Կող. Դ 16): Այսպես պատվեր կուտա Պողոս առաքյալ՝ Կողոսացիներուն: Դժբախտաբար, սակայն, Լավոդիկեցվոց հիշյալ այս թուղթը մեզի չէ հասած, չենք գիտեր որ առաքյալը ինչե՞ր գրած կամ ավանդած պիտի ըլլար մեզի: Այս բոլորը կփաստեն՝ թե առաքյալները իրենց գրածներեն զատ շատ բաներ ավանդած են եկեղեցիին, որ պահած և իր կարգին ավանդած է զայն եկող սերունդներուն: Ասենցմե օրինակ մը. «Երանելի է տալը՝ քան թե առնելը» (Գործ. Ի 35): Հիսուս ըսած էր այս երանությունը, որ սակայն Ավետարաններուն մեջ չէ հիշված, այլ Պողոս առաքյալ միայն կհիշե առիթով մը: Թերևս ասոր նման շատ մը պատգամներ, ճշմարտություններ կային, որոնք բերանացի կգործածվեին քարոզի ընթացքին. դժբախտաբար, սակայն, գրի չեն առնված: Բարեբախտաբար այս վերոհիշյալ երանությունը Պողոս առաքյալեն հիշված ըլլալով՝ վավերական կդառնա, թե ոչ ետքը, ավանդություն է ըսելով՝ պիտի չընդունեին կարգ մը եկեղեցիներ:

Ահա այս ավանդությունն է որ մեզի կսորվեցնե Աստվածամոր վերափոխման ճշմարտությունը: Եթե երբեք Աստվածամայրը երկինք վերափոխված չըլլար, ինչո՞ւ առաքյալները սկզբնական շրջանին սուտ և մանավանդ «հակասուրբգրային» պատմությունները պիտի հնարեին ժողովուրդին մեջ անոնք ալ իրենց կարգին այս ավանդությունը հաջորդ սերունդին պիտի ավանդեին՝ եթե հիմ կամ ճշմարտություն չունենար: Եվ ասոնք պարզապես սուտ վկաներ պիտի ըլլային՝ հաստատելով թե Քրիստոս իր մայրը երկինք վերափոխած էր: Հոս կրնանք պատշաճեցնել Պողոս առաքյալի բերած փաստը Քրիստոսի Հարության վկաներուն մասին (Ա Կորնթ. ԺԵ 15):

Ասկե զատ, այս վերափոխման վարդապետությունը «հակասուրբգրային» կոչված է, ըսի կարգ մը եկեղեցիներու կողմե: Սակայն ի՛նչպես ասիկա հակասուրբգրային կրնա ըլլալ, քանի որ Հին Ուխտին մեջ արդեն ունինք երեք անձեր, որոնք արդեն երկինք վերափոխված էին: Այսպես. «Հավատքով Ենովք երկրե փոխադրվեցավ որպեսզի մահ չտեսնե. և տեղ մը չէր գտնըվեր, վասնզի Աստված փոխադրեց զայն. քանզի անոր փոխադրվելեն առաջ վկայվեցավ թե Աստուծո հաճելի էր» (Եբր. ԺԱ 5): Ապա Եղիա մարգարեին հրեղեն կառքերով երկինք փոխադրվիլը (Դ Թագ. Բ 11—12): Վերջապես Մովսես մարգարեին մահը և երկինք փոխադրվիլը: «Մինչև այսօր Մովսեսի գերեզմանը մարդ չգտավ» (Բ Օրց. ԼԴ 6): Հուդա Հակոբյան առաքյալն է որ կամբողջացնե զայն. «Բայց Մի-

բայել հրեշտակապետը երբ սատանայի դեմ դնելով Մովսեսի մարմնի համար կվիճեր...» (Հուդ. 9):

Այս համարով ի հայտ կու գա մեզի դարերու ընթացքին պահված ավանդություն մը ալ: Մովսեսի կյանքի և գործունեության մասին Հնգամատյանի չորս գիրքերը (Ելից, Ղևտ., Թվոց, Բ Օրին.), որոնք երկարորեն և մանրամասնորեն գրած են. այս համարը, սակայն, չգտնվիր ոչ մեկ տեղ: Ուրեմն Հուդա առաքյալ այս իրողությունը նքաղե դարերու ընթացքին հասած բերանացի ավանդութենեն:

Այս վերի օրինակներով կտեսնենք թե Քրիստոսի մայր ըլլալը հարկավոր չէր անպայման երկինք վերափոխման համար: Ինչպես Ենովքի համար կկարդանք. «Աստուծո հաճելի էր», «Աստուծո հետ քալեց» (Ծննդ. Ե 24) այսքան միայն: Իսկ Աստվածամոր համար՝ Աստուծո մայր եղած ըլլալը՝ բավական է արդեն, «Վասնզի ո՞վ գիտցավ Տիրոջ միտքը, կամ ո՞վ անոր խորհրդակից եղավ» (Հռոմ. ԺԱ 34):

(Վաչե վրդ. Իգնատիոսյան, «Աստվածամայրը», Վենետիկ, ս. Ղազար, 1977 թ., էջ 23—27)





ՄԱՀ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՍԱՐԳԻՍ ՏԻԳՐԱՆԻ ԳԱՍՊԱՐՅԱՆԻ

(1917—1977)

Օգոստոսի 25-ին, 60 տարեկան հասակում, հանկարծամահ եղավ Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Սարգիս Տիգրանի Գասպարյանը:

Հայոց Հայրապետը և Մայր Աթոռ ս. Էջմիածինը մեծ ու ծանր կորուստ կրեցին Ս. Գասպարյանի անակնկալ մահվամբ:

Շուրջ 15 տարի հանգուցյալը, որպես հայրենասեր և բարձր կրթության տեր մարդ, ձեռնհասորեն և նվիրումով գլխավորեց Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի պատասխանատու պաշտոնը և իր եռանդուն ու շինարար մասնակցությունը բերեց Հայոց Հայրապետի հայրենասիրական ու խաղաղասիրական գործունեությանը, Նրա մշակութային, կրթական, շինարարական կարևոր ձեռնարկումներին:

Ս. Գասպարյանի անակնկալ մահը խորապես ազդեց Հայոց Հայրապետի, ինչպես նաև Մայր Աթոռի միաբանության և աշխատավորության վրա:

Ս. Գասպարյանը ծնվել է 1917 թվականին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Հադրութ գյուղում: 1935 թվականին ավարտելով տեղի մանկավարժական տեխնիկումը, ուսուցչական աշխատանքի է անցնում հայրենի գյուղում:

1937 թվականին նա մեկնում է Բաքու և ընդունվում պետական մանկավարժական ինստիտուտի ռուսաց լեզվի և գրականության ֆակուլտետ և այն ավարտում 1941 թվականին:

Հայրենական պատերազմի առաջին իսկ օրից Գասպարյանը մեկնում է ռազմաճակատ՝ կատարելու իր հայրենասիրական-զինվորական ծառայությունը:

Այնուհետև, 1943 թվականից սկսած նա վարում է մի շարք դիվանագիտական հայրենանվեր պաշտոններ ՍՍՀՄ և ՀՍՍՀ արտաքին գործերի մինիստրություններում,

ՀՍՍՀ ռադիոկոմիտեում, դասախոսում Երեվանի պետական համալսարանում և այլ բարձրագույն ուսումնական հաստատություններում, ձեռնհասորեն և մեծ արդյունավորությամբ գլխավորում է աշխատանքները, որպես մինիստր, ՀՍՍՀ կինեմատոգրաֆիայում, հայրենադարձների ընդունման և տեղավորման կոմիտեում և, վերջապես, ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդում, որպես կոմիտեի նախագահ:

Ս. Գասպարյանը բազմակողմանիորեն զարգացած և խորը գիտելիքների տեր անձնավորություն էր և գիտական աշխատություններ է թողել հայ ժողովրդի և գաղթօջախների պատմության, հայրենագիտության տարբեր ճյուղերի ուսումնասիրության վերաբերյալ, ինչպես նաև կատարել է ռուս և օտար գեղարվեստական գրականությունից հայերեն թարգմանություններ:

Սարգիս Գասպարյանի մահվան տխուր առիթով Հայոց Հայրապետը ցավակցական հետևյալ հեռագիրը ուղարկեց ՀՍՍՀ Մինիստրների սովետի նախագահ Ֆ. Սարգսյանին.

Հանուն Մայր Աթոռ ս. Էջմիածնի ու Գերագույն հոգևոր խորհրդի, վշտով Ձեզ ենք ներկայացնում Մեր ցավակցությունները Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Սարգիս Գասպարյանի վաղաժամ մահվան տխուր առիթով:

Հանգուցյալը երկար տարիներ իր հայրենանվեր աշխատանքով արժանացել էր բոլորիս հարգանքին ու գնահատանքին՝ որպես ազնիվ մարդ ու որպես անբասիր ու իմաստուն պետական գործիչ: Նրա հիշատակը միշտ պայծառ կմնա մեր մեջ՝ սուրբ Էջմիածնում:

Մաղթում ենք Ձեզ քաջառողջություն և միշտ փայլուն հաջողություններ՝ ի խնդիր Է՛լ ավելի ծաղկման մեր մայր հայրենիքի, որին նվիրել էր իր ողջ կյանքը նաև ողբացյալ Սարգիս Գասպարյանը:

ՎԱԶԳԵՆ Ա
Կաթողիկոս Ամենայն Հայոց

Հայոց Հայրապետը նույն տխուր առիթով ցավակցական հեռագիր հղեց նաև հանգուցյալի կնոջը՝ տիկին Մերի Գասպարյանին, մխիթարության և սփոփանքի ջերմ արտահայտություններով:

Օգոստոսի 27-ին, շաբաթ օրը, ժամը 16-ին, կատարվեց Ս. Գասպարյանի հուղարկավորությունն ու թաղումը: Հանգուցյալի մարմինը դրվել էր Երևանում, Արվեստի աշխատողների տան դահլիճում:

Հանուն Վեհափառ Հայրապետի հուղարկավորությանը մասնակցեցին տ. Կոմիտաս և տ. Արսեն սրբազանները, «Էջմիածին» ամսագրի խմբագիր Արթուն Հատիտյանը, Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի քարտուղար Պ. Շահբազյանը, որոնք հանուն Վեհափառ Հայրապետի խոր ցավակցություն հայտնեցին հանգուցյալի այրուն և հարազատներին:

Ս. Գասպարյանի աճյունը ամփոփվեց Երևանի քաղաքային պանթեոնում:

Սեպտեմբերի 4-ին Մայր տաճարում, հավարտ ս. պատարագի, Հայոց Հայրապետի նախագահությամբ կատարվեց մասնավոր հոգեհանգստյան պաշտոն հանգուցյալ Սարգիս Գասպարյանի հիշատակին:

Ս. պատարագին և հոգեհանգստյան արարողությանը ներկա էին հանգուցյալի այրին՝ տիկին Մերի Գասպարյանը, իր զավակների և հարազատների հետ, ՀՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի անդամները՝ գլխավորությամբ տեղակալ Ա. Հասրաթյանի, հանգուցյալի ընկերներն ու բարեկամները:

Հոգեհանգստյան արարողությունից առաջ Վեհափառ Հայրապետը, ոգեկոչելով անմոռաց հիշատակը հանգուցյալ Սարգիս Գասպարյանի, խոսեց հետևյալ սրտաշարժ դամբանականը.

«Ցանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. ամէն»:

«Քանզի ամենայն մարմին իբրև զխոտ է և ամենայն փառք մարդոյ իբրև ծաղիկ. խոտն ցամաքեցաւ և ծաղիկն թօթափեցաւ» (Ա. Պետ. Ա. 24):

Սիրելի ժողովուրդ,

Հիսուս Քրիստոսի աշակերտներից Պետրոս առաքյալի տողերն են սրանք իր գրած նամակներից մեկում, որտեղ նա, խոսելով կյանքի և մահվան խորհրդի մասին, մարդկային կյանքը նմանեցնում է մի բույսի, իսկ նրա կյանքի գործերը, նրա փառքը նմանեցնում է ծաղկի: Պետրոս առաքյալ այս հակիրճ խոսքերի մեջ խտացնում է հավիտենական և տիեզերական օրենքը՝ կյանքի և մահվան, այնքան այատկերալից, այնքան ճշմարտացի, այնքան հուզիչ կերպով: Տիեզերական օրենք և խորհուրդ, որ վեր է մեր մարդկային իմացության ուժերից և անիմանալի մեզ համար: Մարդկորեն թեև դժվար ենք հաշտվում մահվան հետ, հոգեբանորեն սա էլ ճշմարտություն է: Սակայն պետք է խորհինք, թե երևի գերագույն մի իմաստություն կա այս տիեզերա-

կան օրենքին մեջ, և որի առջև ստիպված ենք խոնարհվել և հաշտվել մարդկային երկրավոր կյանքի ժամանակավորության գաղափարի հետ, ա՛յն քրիստոնեական փրկարար հույսով, որ ինչպես նյութական տիեզերքում ամեն ինչ հոսում է, փոփոխվում է, բայց ոչինչ չէ կորչում, այնպես էլ մարդկային հոգու աշխարհում փոփոխվում են գոյության կերպերը, ձևերը, սակայն ինչ որ հոգեկան մի իրողություն մնում է անթառամ կյանքի մյուս ափին:

Հավիտենական կյանքի հույսն է այդ քրիստոնեական, որ մխիթարում է մարդկանց հոգիները անհա երկու հազար տարիներե ի վեր ու այսօր էլ մարդիկ այնքան քաղցրությամբ ապրում են այն, իբրև հույս, իբրև խորհուրդ և հավատք:

Սիրելի ժողովուրդ, հատկապես մեր սրտերը վշտով են լցվում այն պարագաներին, երբ մահը գալիս է վաղաժամ կերպով և հեռացնում մեզանից մեր սիրելին, մեր հարազատը: Անկարելի է, որ հարազատների սրտերը չլցվեն այրող վշտով ու կարոտով, երբ իրենց սիրելին չկա այլևս իրենց շուրջ, իրենց տան մեջ, հավաքական կյանքի մեջ: Ավելին, տակավին կան մահեր, որոնք սուգ են պատճառում և վիշտ ոչ միայն ընչեցյալի հարազատներին, ընտանիքի անդամներին, այլ նաև ամբողջ հասարակության, ամբողջ ժողովրդին: Ահա այսպիսի մի կորուստի առջև ենք գտնվում մենք այսօր, և այժմ պատրաստվում ենք հոգեհանգստյան պաշտոն կատարել հոգվո խաղաղությանը համար այն անձնավորության, որ բաժանվեց մեզանից ընդմիշտ, սուգի մատնելով ոչ միայն իր ընտանիքի անդամները, այլ նաև շատ-շատերին մեր երկրում, ընդ որում նաև մեզ բոլորիս՝ Մայր Աթոռ ս. Էջմիածնի պաշտոնեության, աշխատողներին, հոգևորականության, Գերագույն հոգևոր խորհրդին և նաև անձամբ Մեզ: Սրանից մոտ մի շաբաթ առաջ, իր մահկանացուն կնքեց մեր հայրենիքի ականավոր պետական գործիչներից մեկը՝ Սարգիս Տիգրանի Գասպարյանը, անակնկալ մահով և խիստ վաղաժամ, տակավին իր ուժերի հասունության տարիքում, երբ առնվազն 15—20 տարիներ ևս նա կկարողանար ծառայել յուր հայրենիքին, յուր ժողովրդին և մեր Մայր Աթոռին:

Ս. Տ. Գասպարյանը նոր սերնդի մեր երկրի ամենաազնիվ և ամենաականավոր պետական գործիչներից մեկը եղավ: Տակավին երիտասարդ հասակին նա պատասխանատու պաշտոններ ստանձնեց արտասահմանում սովետական դեսպանատան մեջ, ապա Հայաստանում եղավ Ներգաղթ կոմիտեի լիազոր, Ներգաղթ կոմիտեի նախագահ և Կինեմատոգրաֆիայի մինիստր և բազմաթիվ տարիներ եղավ նախագահը եկեղեցական-պետական խորհրդին, Մինիստրների սովետին կից: Աշխատանքի ասպարեզում նա ամեն տեղ ցուցաբերեց ինք իրեն իբրև ազնիվ և հավատարիմ քաղաքացի մեր պետության, իբրև գործարար աշխատող, իբրև հոգով և ձեռքերով մաքուր գործիչ, իբրև ժրաջան և ստեղծարար պաշտոնատար: Ամեն տեղ, որտեղ նա աշխատեց, մի պայծառ հետք թողեց և աքանչելի մի հիշատակ և օրինակ այլոց: Հատկապես իբրև եկեղեցական գործերի նախագահի, Մենք երախտապարտ ենք նրան բազմաթիվ տեսակետներից, որոնց Մենք չենք անդրադառնա այսօր մանրամասնորեն, բայց կասենք մեկ մեծ ճշմարտություն, որ նա հավասարապես իմացավ ծառայել և օգտակար լինել և՛ պետության, և՛ եկեղեցուն: Մեր ժամանակներում, նա բացառիկ դեր կատարեց այս տեսակետից: Մենք նրա հետ գործակցեցինք շուրջ տասնևհինգ տարիներ և տեսանք նրա մեջ թե՛ ազնիվ մարդը, թե՛ նվիրյալ և հավատարիմ քաղաքացին և թե՛ բոլոր հարցերին մարդկայնորեն մոտեցող անձնավորությունը, հարցեր, որոնք կապված են եղել մեր եկեղեցու, մեր ժողովրդի հոգևոր կյանքի զարգացման և հատկապես ս. Էջմիածնի պայծառության և ծաղկման հետ: Պիտի ասենք առանց չափազանցության, որ եթե Մեր գահակալության տարիների ընթացքում ունեցանք մեծ հաջողություններ շինարարական և այլ տեսակետներից այստեղ Մայր Աթոռ ս. Էջմիածնում, ապա այդ պարտական ենք կարևոր չափով նաև մեր եկեղեցական գործերի նախագահ Ս. Գասպարյանին: Իհարկե, սա Մեր հայրենի պետության քաղաքականությունն է ընդհանրապես եկեղեցու և ս. Էջմիածնի նկատմամբ, սա ճշմարիտ է, բայց Ս. Գասպարյանը այդ անձնավորությունը եղավ, որ նաև իր շնորհքը բերեց այս ասպարեզում, այս գործին առավել հաջողության համար: Ահա թե ինչու Մենք այսօր բաժանում ենք բոլորս սուգը, վիշտը նրա սգակիր ընտանիքի, բաժանում ենք վիշտը նրա ընկերներին և հարազատներին, բաժանում ենք վիշտը մեր պետական իշխանության, որ կորցրեց իր հավատարիմ բարձր պաշտոնյաներից մեկին:

Ներկայացնում ենք Մեր խորագագաց ցավակցությունները իր ազնիվ տիկնոջ՝ տիկին Մերի Գասպարյանին, նրա զավակներին, նրա քույրերին և բոլոր հարազատներին՝ վստահեցնելով նրանց, թե նաև այստեղ Մայր Աթոռում միշտ պայծառ

կպահենք արդար հիշատակը, բարի հիշատակը Սարգիս Գասպարյանի: Թող նրա հոգին խաղաղությամբ բարձրանա դեպի երկինք և արժանի լինի երկնային հավիտենական կյանքին: Հայցում ենք նաև ձեզ բոլորիդ, սիրելի ժողովուրդ, աստվածային խաղաղություն և օրհնություն այժմ և միշտ. ամեն:

Հավարտ եկեղեցական արարողության Վեհարանում Հայոց Հայրապետը ընդունեց Սարգիս Գասպարյանի ընտանիքի անդամներին, նրա հարազատներին, գործի ընկերներին և մի անգամ ևս անձամբ Իր և Մայր Աթոռ ս. Էջմիածնի անկեղծ և խորը ցավակցությունը հայտնելով՝ հայրական սփոփանքի խոսքերով մխիթարեց սգակիրներին:

Ոգեկոչելով Սարգիս Գասպարյանի բարի անունն ու հիշատակը ու նրա հայրենանվեր գործունեությունը, հարգանքի և մխիթարության ջերմ խոսքեր արտասանեցին «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը և Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների հանձնաժողովի անդամ Գրիգոր Խանջյանը:

Այնուհետև Հայոց Հայրապետին ողբդրված շնորհակալության և երախտագիտության ջերմ ու հուզումնալից խոսք ասաց հանգուցյալի այրին՝ տիկին Մերի Գասպարյանը՝ իրենց ընտանիքի մեծ դժբախտության առթիվ Հայոց Հայրապետի ցույց տված հայրական մխիթարության և ուշադրության համար՝ մխիթարություն և ուշադրություն, որոնք թեթևացրին իրենց վիշտը և մեղմեցին կորստի ծանրությունը:

Սարգիս Տիգրանի Գասպարյանի հիշատակն ու անունը, որպես պետական եռանդուն և իմաստուն գործչի, որպես Հայոց Հայրապետի անձնական բարեկամի, միշտ վառ ու անմոռաց կմնա այս սուրբ հաստատության մեջ, որ Մայր Աթոռ ս. Էջմիածինն է, ու նրան ճանաչող բոլոր մարդկանց երախտագետ սրտում:

Հանգիստ և խաղաղություն Սարգիս Գասպարյանի արդար հոգուն:

Ա. Հ.





Ա. ՀԱՏԻՏՅԱՆ

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ «ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ՍՈՒՐԲԵՐ», ԻՍԹԱՆՊՈՒԼ, 1977, 207 ԷՋ

Սեղանիս վրա է Թուրքիայի հայոց բազմաբեղուն և վաստակաշատ տ. Շնորհք պատրիարք Գալուստյանի նոր ու արժեքավոր ուսումնասիրությունը՝ «Աստուածաշնչական սուրբեր», որն ամբողջացնում է սրբազան հեղինակի մինչև այժմ հրատարակած «Մեծ պահքի կիրակիներու ոսկի շղթան» (1971), «Գունագեղ կիրակիներ և Հոգեգալուստ» (1972), «Աւագ շաբաթ» (1971) կրոնական մատենաշարը: Հրատարակելի է այդ շարքից վերջին գիրքը՝ «Տաղաւար օրեր»:

Տերունի և պահոց օրերին նվիրված ուսումնասիրություններից հետո «Սրբոց օրեր»-ին հատկացված սույն աշխատությունը բաղկանում է երեք գրքերից.

Ա. **Աստվածաշնչական սուրբեր.**

Բ. **Համաքրիստոնեական սուրբեր.**

Գ. **Հայազգի սուրբեր:**

Այժմ լույս է տեսել միայն սույն շարքի առաջին գիրքը, որով ընթերցողի սեղանին է դրվում Աստվածաշնչական սրբերի ուսանելի կյանքն ու գործունեությունը՝ ըստ մեր եկեղեցական տոնացույցի:

Հատորը բաղկանում է երկու մեծ մասերից.

Մասն առաջին. Հին Կտակարանի սուրբեր (էջ 33—134) և

Մասն երկրորդ. Նոր Կտակարանի սուրբեր (էջ 136—207):

Գրքի առաջին մասում՝ Հին Կտակարանի սրբերի մեջ մեզ ներկայացվում է կյանքը **Նախահայրերի,** այդ թվում՝ Ադամի, Աբելի, Սեթի, Ենովսի, Ենովքի, Նոյի, Մելքիսեդեկի. **Նահապետների**՝ Աբրահամի, Իսահակի, Հակոբի, Հովսեփի. (Սինա) **Անապատի առաջնորդների**՝ Մովսեսի, Ահարոնի, Եղիազարի, Հեսուի. **Դատավորների**՝ Բարակի, Գեդեոնի, Հեփթայեի, Սամսոնի, Դավիթ թագավորի. **Մարգարեների**՝ Սամվելի, Եղիայի, Եղիսեի, Հոբի, ապա **Գիրք ունեցող չորս մեծ մարգարեների**՝ Եսայիի, Երեմիայի, Եզեկիելի, Դանիելի, և **12 կրտսեր մարգարեների**՝ Ովսեի, Հովելի, Ամովսի, Աբդիուի, Հովնանի, Միքեի, Նավումի, Ամբակումի, Սոփոնիայի, Անգեի, Զաքարիայի, Մաղաքիայի:

Հին Կտակարանի սրբերի շարքը լրացնում են Նաբուգոդոնոսոր թագավորի հրամանով Բաբելոնում հնոց նետված Սեդրակ, Միսաք և Աբեթնագով՝ «Երեք Մանկունք»-ը (Դան. Գ 1—100); ապա Եզր կամ Եզրաս, հայրենասեր Մակաբե յոթ եղբայրները՝ «Սրբոցն Մակաբայեցւոցն Եղիազար քահանային և Շամունեայ և եօթն որդւոց նորին»:

Սրբազան հեղինակը գրքի Ա մասը եզրափակում է հիշյալ սրբերին ներկայացնելով ճշմարտապես, **իբրև հավատքի հերոսներ** կամ դյուցազներ, բարեպաշտության

քաջամարտիկներ (էջ 131)՝ վկայակոչելով այս առթիվ Եբրայեցվոց թղթի Ժ, ԺԱ և ԺԲ գլուխների համապատասխան հատվածները, որոնցով բնութագրվել են սպառիչ կերպով Հին Կտակարանում հավատքի մարդկանց կյանքն ու գործունեությունը.

ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

ԱՍՏՈՒԱԾԱՇՆՉԱԿԱՆ ՍՈՒՐԲԵՐ

ԻԱԹԱՆՊՈՒԼ

1977

«Արդարը պիտի ապրի հավատքով... Ի՞նչ է հավատքը, եթե ոչ՝ հուսացված բաների հաստատումը և ապացույցն այն բաների, որոնք չեն երևում, քանզի **նախնիք** նրանով վկայություն ստացան: Հավատքով ենք իմանում, որ աշխարհներն ստեղծվել են Աստուծո խոսքով՝ անտեսանելի բաներից տեսանելիներ դառնալով...»: Հին Կտակարանի սրբերը առավելապես իբրև հավատքի մարդիկ **հավատք-ով** «պարտության մատնեցին թագավորություններ, գործեցին արդարություն, հասան խոստմանը, փակեցին առյուծների բերանները, հանգցրին կրակի զորությունը, փրկվեցին սրի բերաններից, զորացան տկարությունից հետո, կտրիճներ եղան պատերազմի մեջ, հաղթեցին օտար բանակների»: Նրանցից շատեր «քարկոծվեցին, սղոցվեցին, սրով սպանվեցին, թափառեցին ոչխարների և այծերի մորթիներով, ապրեցին կարիքի մեջ, նեղության մեջ, չարչարանքների մեջ» (Եբր. ԺԱ 1—38):

Գրքի երկրորդ մասում ներկայացվում են «Նոր Կտակարանի սուրբեր»-ը, որոնք հանդիսացան **եկեղեցիի հիմքեր և հիմնադիրներ:**

Նոր Կտակարանի սրբերը, շեշտում է սրբազան հեղինակը, «ուղիղ գիծով շարունակությունը կկազմեն Հին Ուխտի արդարներուն, թե՛ ֆիզիքական և թե՛ հոգևոր մարզերուն մեջ» (էջ 136):

Հին և Նոր Կտակարանների սրբերն ունեն «նույն ոգին, նույն գաղափարները և կծառայեն նույն Աստուծո»: Այդ երկու կարգի սրբերի մեջ հիմնական և գլխավոր տարբերությունը կայանում է նրանում, որ Հին Կտակարանի սրբերը նաև նախագուշակեցին Մեսիայի գալուստը և Աստծո թագավորության հաստատումը երկրի վրա՝ արդարության և խաղաղության պայմանների մեջ, իսկ Նոր Կտակարանի սրբերը ծանուցին մարդկային կյանքի պատմության մեջ սկզբնավորությունը **նոր դարաշրջանի, նոր ժամանակների,** և նրանցից շատերը «տեսան ու շոշափեցին» Մեսիային և գործակիցները հանդիսացան Քրիստոսի քարոզության և Նրա հիմնած եկեղեցու առաջին ապաստավորները:

Սրբազան հեղինակը Նոր Կտակարանի սրբերի մեջ նախ խոսում է «այն արդար հոգիներու մասին», որոնք հանդիսացան **նախակարապետները Քրիստոսի** և «գետին պատրաստեցին» Նրա փրկագործական առաքելության և եղան վկաները Նրա Մարդեղության:

Այս խմբի մեջ են Հովակիմ և Աննա՝ նախածնողները Քրիստոսի (էջ 137), ապա «Հովսեփ աստվածահայրը»—Հիսուսի հայրագիրը—(էջ 139) և ամուսինը ս. Կույսի, ապա ս. Մարիամ Աստվածամայրը՝ «գերագույն սուրբը բոլոր սուրբերուն» (էջ 141), Զաքարիա և Եղիսաբեթ՝ Հովհաննես Մկրտչի ծնողները, ապա մեծ կարապետը՝ Հովհաննես Մկրտիչ. «Հիսուսեն վերջ մեծագույն դեմքը Ավետարաններու մեջ և գլխավոր գործիչը Նոր Կտակարանի ընկիզբները: Աստուծո թագավորության, այ-

սինքն՝ քրիստոնեական եկեղեցիի դարաշրջանը պաշտոնապես բացողը եղավ Հովհաննես (էջ 146):

Քրիստոսի նախակարապետների մեջ հիշվում են նաև «Բեթլեհեմի մանուկները», որոնք իրենց «անմեղ արյունը թափեցին Քրիստոսի համար» (էջ 149): Նրանք հրեաների Հերովդես չար թագավորի հրամանով «մեռան Աստծո Որդին ֆիզիքապես ապրեցնելու համար» (Մատթ. Բ 16—18):

Գրքի երկրորդ մասի երկրորդ գլուխը հատկացվել է Քրիստոսի առաքյալների կյանքին և քարոզությանը: «Առաքյալները կկազմեն երկրորդ և կարևորագույն խումբը Նոր Կտակարանի սուրբերուն մեջ» (էջ 151):

Հիսուսն իր երկրավոր կյանքի ընթացքում, իր քարոզչական գործունեության հենց սկզբին, ընտրեց 12 առաքյալներին, որոնք ականատես և ականջալուր եղան Նրա քարոզության, Նրա հրաշքներին, հզոր գործերին և հանդիսացան մանավանդ առաջին վկաները Նրա չարչարանքների և Հարության: Առաքյալները եղան նաև «հիմքերը և հիմնադիրները եկեղեցիին, այսինքն Քրիստոսի եկեղեցիին առաջին անդամները, առաջնորդները, վարիչները և կազմակերպիչները» (էջ 151):

Մեր եկեղեցին առաքյալների տոնը կատարում է «զույգ-զույգ կամ երեք առ երեք տարվույն զանազան օրերուն» (էջ 152):

Ապա սրբազան հեղինակը մանրամասն, և ըստ Ավետարանների վկայության, սպառիչ կերպով ներկայացնում է Պետրոս, Անդրեաս, Հակոբոս Զեբեդյան, նրա եղբայր Հովհաննես, Մատթեոս, Բարթողիմեոս, Փիլիպպոս, Թովմաս, Թադեոս, Հակոբոս, Շմավոն և Մատաթիա առաքյալների կյանքն ու քարոզչական գործունեությունը: Լայն տեղ է հատկացված նաև «տասներեքերորդ» «հեթանոսաց» մեծագործ առաքյալ Պողոսին, որը «համամարդկային կազմավորությամբ արդարև կատարելագույն անձն էր, քրիստոնեությունը հավասար ձեռներեցությամբ քարոզելու հրեական, հունական և հռոմեական երեք շրջանակներու մեջ ալ» (էջ 167):

Գրքի երկրորդ մասի երրորդ գլուխը նվիրվել է Քրիստոսի 72 աշակերտներին:

Սրբազան հեղինակը Նոր Կտակարանի սրբերի մեջ ըստ մեր տոնացույցի անհրաժեշտ է համարել նաև հիշատակել Հովսեփ Արիմաթացուն, որը ըստ Ավետարանների որպես մեծահարուստ մարդ, «նախարար», «խորհրդական» կամ «ժողովական», քաջությունն ունեցավ գլխավորելու Քրիստոսի՝ պատվով թաղման արարողությունը, իր ընտանեկան նոր գերեզմանում:

Ղազարոսը, նրա երկու քույրերը՝ Մարթան և Մարիամը, Քրիստոսի սիրած ընտանեկան խաղաղ ու համակրելի շրջանակն էին կազմում: Այդ ընտանիքի հետ Հիսուսը կապված էր մեծ բարեկամությամբ: «Ամեն անգամ որ Հիսուս Երուսաղեմ գար, առհասարակ կիջևաներ ասոնց տանը, որ կգտնվեր Երուսաղեմի մոտիկ Բեթանիա գյուղը Զիթենյաց սարի հարավ-արևելյան լանջին» (էջ 175): Հիսուսը, ինչպես պատմում է Ավետարանը, հարություն տվեց չորսօրյա մահացած և թաղված Ղազարոսին (Հովհ. ԺԱ 1—44): Ղազարոսի «հարությունը մեծապես կնպաստեր Հիսուսի համբավին և ժողովրդականության տարածման» (էջ 175): Այս երեքի տոնը մեր եկեղեցին միացրել է Հովսեփ Արիմաթացու տոնին:

Նոր Կտակարանի սրբերի մեջ հիշվում են նաև անունները «իւղաբեր կանանց»՝ Մարիամ Մագդաղենացու, Մարիամ Կղեովպայի, Սողոմեի, Հովհաննայի և ուրիշների: Այս բարեպաշտ և առաքինի կանայք Քրիստոսի առաջին հավատացյալներից էին և իրենց «ինչքերով» հոգում էին Քրիստոսի և առաքյալների նյութական կարիքները, որպես երախտագիտություն և անմնացորդ նվիրում: Այս կանայք եղան նաև առաջին ավետաբերները Քրիստոսի հրաշալի Հարության (էջ 178):

«Իւղաբեր կանանց» գործունեության և մահվան մասին Ավետարանները ոչինչ չեն պատմում: Բայց եկեղեցին խմբովին մեծարում է նրանց հիշատակը. «Երջանկագույն հոգիներ որոնք մաս կկազմեն այն 120 հոգիե բաղկացած խումբին, որ կորիզը կազմեց քրիստոնեական եկեղեցիին և որոնք հավաքաբար ստացան ս. Հոգին Պենտեկոստեի օրը» (էջ 179):

Գործք Առաքելոց-ի մեջ հիշվում են նաև երկու սրբեր՝ Հակոբոս «Տեառնեղբար» կամ «Փոքր Հակոբ» և Ստեփանոս Սարկավագ Նախավկան: «Հակոբոս կհիշվի իբրև նախնական եկեղեցիի գլխավոր գործիչներեն մեկը՝ Երուսաղեմի առաքելական ժողովի ընթացքին, որուն որոշումը կբանաձևե» (էջ 180):

Հակոբոսը հանդիսանում է նաև առաջին եպիսկոպոսը Երուսաղեմի Մայր եկեղեցիին և «այուներեն մեկը առաջին քրիստոնեական եկեղեցիին, Պետրոսի և Հովհաննեսի հետ» (Գաղտ. Բ 9): Իսկ Ստեփանոս Նախավկա Սարկավագը «նախնական եկեղեցիի ամենեն շնորհալի դեմքերեն մեկն է, և առաջին քրիստոնյա նահատակը, որ իր արյունը թափեց Քրիստոսի սիրույն համար» (Գործք Զ):

Նոր Կտակարանի սրբերի մեջ հիշվում

են նաև Փիլիպպոս Սարկավագը, հեթանոս Կոռնելիոս հայրապետը (Գործք Ժ 1—2):

Գրքի չորրորդ գլուխը նվիրված է «հեթանոսաց» մեծ առաքյալ Պողոսի գործակիցների և աշակերտների հիշատակին, այդ թվում՝ Անանիային, որ Դամասկոսի մեջ մկրտեց Պողոսին (Գործք Թ 15—19), Բառնաբասին (Գործք 22—26, Թ 26, ԺԴ 11—12), Շիղային կամ Սիղվանոսին (Գործք ԺԷ 4), Հովհաննես-Մարկոս Ավետարանչին (Կողոս Դ 10. Գործք ԺԲ 25. Բ Տիմ. Դ 11), Ղուկաս Ավետարանչին (Փիլմ. 24. Կողս. Դ 14. Բ Տիմ. Դ 10), Տիմոթեոսին (Գործք Ջ 1—3. Բ Տիմ. Ա 5. Բ Կորնթ. Ա 1. Ա Թեսաղ. Գ 2. Ա Տիմ. Ա 8), Տիտոսին (Տիտ. Ա 1. Բ Կորնթ. Բ 13, Ը 16—18, 23. Գաղտ. Բ 1—5), Ոնեսիմոսին, որ «վերջինն է հանվանե մեր տոնացուցին անցած ավետարանական սուրբերուն» (էջ 198): Մեր եկեղեցական տոնացուցում հիշատակվում են նաև անունները Պողոս առաքյալի վերոհիշյալ աշակերտներից բացի նրա գործակիցների «ավելի քան 40 անուններ» (էջ 201—204):

Տ. Շնորհք արքեպիսկոպոսի «Աստուածաշնչական սուրբեր» ուսումնասիրությանը կցված է մի կուռ և իմաստալից «Ներածություն» (էջ 7—30), ուր բացատրվում են, թե «ո՞վ է սուրբը», «ի՞նչ է սրբությունը», «սրբության իմաստին կիրարկումը», «սուրբերու հարգությունը մեր ժամանակներու մեջ», «սուրբերու մատուցված հարգանքին ուղիղ ըմբռնումը», «սրբոց հիշատակության ծագումը» և այլն:

Սուրբը Աստուծո գաղափարի վրա իր մտածումն ու զգացումները կենտրոնացրած անձնավորություն է, իր կյանքի բոլոր հանգրվաններում և իր գործունեության բոլոր բնագավառներում: Աստծով լցված, ներշնչված, Աստուծո ներկայությունը ապրող մարդը: **Սրբերի կյանքը ապրված Ավետարան է:** Իսկ սրբության գաղափարը մանավանդ քրիստոնեական կրոնի մեջ գրավում է մեծագույն տեղը (էջ 7—8):

Քրիստոնեական կրոնի նպատակն է մարդուն հրավիրել ընթանալու սրբության ճանապարհով և ապրելու աստվածանման մաքուր կյանքով, ըստ Ավետարանի պատվիրանների. «Ով որ կատարում է Աստուծո կամքը, ապրում է հավիտյան» (Ա Հովհ. Բ 27): Յուրաքանչյուր մարդ, որ ստեղծված է Աստուծո պատկերով, մաքրված պետք է լինի մեղքից և ապականությունից և դառնա տաճար ու բնակարան Աստուծո, որպես նոր «ստեղծագործություն» կամ «նոր արարած». «Եթե մեկը Քրիստոսի մեջ է, նա նոր արարած է, որովհետև հինն անցավ և այժմ ամեն ինչ նոր եղավ» (Բ Կորնթ. Ե 17), «Աստված իր Միածին Որդուն աշխարհ ուղարկեց, որպեսզի նրանով կենդանի լինենք» (Ա Հովհ. Դ 9):

Սրբերից շատերը «առավել եռանդ և արդյունավորություն ցույց տված են եկեղեցիի ծառայության մեջ: Գերագույն նվիրումը և զոհողությունը հանձն առած են Աստուծո սիրույն և իրենց կրոնքի ճշմարտության ի վկայություն: Ուստի եկեղեցին ալ ի նշան երախտագիտության, զանոնք արժանացուցած է տարեկան հիշատակության» (էջ 19):

Այս առթիվ սրբազան հեղինակը առաջ է քաշում «մի կարևոր հարց»: «Տոնացուցական սուրբերը կծառայե՞ն մեր ժամանակներու մեջ այն նպատակին, որուն համար տոնացուցի անցած են» (էջ 19):

Նշանակում է արդյոք, մեր օրերում անհրաժե՞շտ է զբաղվել սրբերի մասին ուսումնասիրություններ գրելով և նրանց կյանքն ու գործունեությունը ներկայացնելու մեր հավատացյալներին:

Սրբազան հեղինակի հետ չես կարող համաձայն չլինել, երբ նա որպես իր կոչման ու հոգևոր ծառայության հավատարիմ բարի հոգևորական, դատությամբ և համարձակությամբ հաստատում է, խոստովանում, որ «այսօր մեր եկեղեցիին մեջ սուրբերու հիշատակությունը հասած է այնպիսի վիճակի մը, որ ոչ անոնց պատիվ կբերե և ոչ ալ մեզի... Սուրբերուն անունները մնացած են լոկ մեր տարեկան օրացույցներուն մեջ... Անոնք դադրած են մեզի ներշնչումի աղբյուր դառնալե... կյանքի այլասերիչ ազդակներու դեմ պայքարելու, քրիստոնեական իդեալներու տեր մնալու, անոնց վճռականութենեն բիչ բան կամ գրեթե ոչինչ կտիսանցվի ու կմնա մեզի: Տարվան մեջ բանի՞ տեղեր մեր ժողովուրդի զավակները լուր կունենան որ Համբարձման հինգշաբթին **Սահակ-Մեսրոպի** օրն է, որուն ներքև ս. Փրկիչ հիվանդանոցի օրացույցին մեջ ծանոթագրված **Տօն Մեծ եկեղեցական,** կատարի հանդէս յամենայն եկեղեցիս», «իսկ Իսթանպուլի մեր եկեղեցիներու մեջ ո՛չ միայն «հանդէս» չի կատարվիր, այլ երբեմն ս. պատարագ անգամ չմատուցվիր: Իսկ մեր վարժարաններեն ոչ մեկը բնականաբար կհանդգնի հիշեցնել իր աշակերտներուն, գեթ անցողակի կերպով թե այդ օրը մեր գիրերու հնարիչ, մեր սուրբ Գրքի թարգմանիչ և մեր դպրության հիմնադիր երկու սուրբերու հիշատակն է» (էջ 19—20):

Պատկերը առավել կամ նվազ չափով նույնն է շատ տեղերում, «իսկ արտասահմանի մեջ,—հաստատում է սրբազանը,—բանի՞ տեղեր արդյոք կնշվի այդ օրը իբրև

«Տօն ազգային»: Բեյրութի պես հոծ համայնքի մը մեջ և անոր այնքան ազատ պայմաններու մեջ գործող «ազգային» վարժարաններեն քանի՞ հատը արդյոք «տօն» կամ «հանդէս» կսարքե այն օր...» (էջ 20):

Ահա նաև «ազգային» այս մտահոգություններե առաջնորդված տ. Շնորհք արքեպիսկոպոսը գովելի և ազնիվ նախաձեռնությունն է ունեցել հրատարակության պատրաստելու կրոնական երկրորդ մի մատենաշար, որի առաջին հատորն է «Աստուածաշնչական սուրբեր» գրախոսվող սույն աշխատությունը:

Հեղինակը իր սույն օգտակար և շահեկան գիրքը շարադրելիս «միակ աղբյուր է» ունեցել «նույն ինքն ս. Գիրքը, որմե համառոտելով միայն ներկայացուցած ենք զանոնք» (էջ 6):

Ինչպես հայտնի է, մեր եկեղեցական հին մատենագրության ամենահարուստ ժանրը վարքագրությունն է, այսինքն այն **«վկայաբանությունները,** որոնք քրիստոնեական հավատի համար չարչարվածների և սպանվածների նահատակության պատմություններ են, ինչպես և **սրբախոսությունները** ու **վարքաբանությունները՝** «սրբերի» կենսագրությունները: Դրանք սահմանված են եղել բոլոր հավատացյալների ընթերցանության համար և կարդացվում էին նույնիսկ եկեղեցում: Այսպիսի երկերի հիմնական մասն է միայն պատմական: Սրբերի կյանքի իրական եղելություններից առնվում էր միայն այն, ինչ որ համապատասխանում էր վարքագրի նպատակին, մնացածը քերթողական ստեղծագործություն էր: Նպատակն էր տարածել և հետաքրքրություն առաջացնելով յուրացնել տալ եկեղեցու գաղափարները, եկեղեցու հավատքը: Հեղինակներն աշխատում էին ընթերցողների մեջ բարեպաշտություն զարթեցնել, կրոնական կրթություն տալ, ձգտում էին իրենց գրվածքների իդեալականացրած հերոսներով կենդանի օրինակներ առաջ բերել՝ ըստ քրիստոնեական աշխարհայեցողության առաքինի կյանքի, ճգնավորական անձնուրացության և աշխարհուրացության» (Մանուկ Աբեղյան, «Հայոց հին գրականության պատմություն», գիրք առաջին, Երևան, 1944, էջ 95—96):

Մեր եկեղեցական հին մատենագրության և պատմության մեջ հայտնի են Թադեոս և Բարթողիմեոս առաքյալների, Սահդուխտ կույսի, Ոսկյանց և Սուքիասյանց (Լաբուբնա, Մովսես Խորենացի, Փավստոս Բյուզանդ), ս. Գրիգոր Լուսավորչի և Հռիփսիմյանց կույսերի (Ագաթանգեղոս), ս. Մեսրոպ Մաշտոցի (Կորյուն), Վարդան Մամիկոնյանի դստեր՝ Շուշանիկ Վարդենիի (Սոփերք հայկականք, Թ) և ուրիշ հայ սրբերի վկայաբանություններ, «Վարք սրբոց», «Տօնական», «Հարանց վարք», «Ատոմագիրք», «Ճառընտիրք», «Ցայսմաւուրք» ժողովածուները, որոնք միաժամանակ իրենց կրոնական-դաստիարակչական բովանդակությունից և արժեքից բացի, «իսկապես գրական տիպի գեղարվեստական պատումներ են», «բանաստեղծական ոճով հորինված գեղեցիկ մանրազրույցներ» (Մ. Աբեղյան, նույնը, էջ 34, 106):

Սույն վարքագրությունները կազմվել են «Ի յիշատակ սրբոց և յօգուտ վարուց ջերմեռանդ լսողացն» ըստ ճառընտիրների վկայության:

«Գրել կամ հրատարակել «սրբոց վարք» մը, թերևս ոմանց համար ուշացած՝ ուրիշներու համար ալ ժամանակեն վրիպած ձեռնարկ մը նկատվի: Այդպիսիներ հավանական է որ հազիվ ունենան տեղեկություն թե ժամանակին Աստվածաշունչի ու քանի մը աղոթագիրքերու հետ միասին, ընթերցանության միակ գիրքերեն ու հոգևոր դաստիարակչական գլխավոր միջոցներեն էին «սրբոց վարք»-երը» (Թորգոմ պատրիարք Գուշակյան, «Սուրբք և տօնք», Երուսաղեմ, 1939, «Ցառաջաբան», էջ Է):

Սույն մտահոգություններով առաջնորդված տ. Շնորհք արքեպիսկոպոսը ահա հրապարակ է հանել իր «Աստուածաշնչական սուրբեր» նոր ուսումնասիրությունը: Սրբազան հեղինակի նպատակը չի եղել գրել նոր «Ցայսմաւուրք» կամ «Սրբոց վարք» և «ոչ ալ հանգամանորեն անդրադառնալ սուրբերեն յուրաքանչյուրի կյանքին ու գործին», այլ մեր եկեղեցական տոնացույցի մեջ մտած սրբերը, դաստիարակչական, ուսուցողական նպատակով «հիշատակել իրենց մարդկային գիծերուն մեջ և մատնանշել աստվածային հատուկ միջամտությունը իրենց կյանքեն ներս. վասնզի առանց աստվածային միջամտության ոչ ոք կրնա սուրբ ըլլալ» (էջ 6): Ու սրբազան հեղինակը հաջողել է հասնել իր առաջ դրած նպատակին:

Կարելի է գոհունակությամբ արձանագրել մի անգամ ևս, թե տ. Շնորհք սրբազանի սույն ուսումնասիրությունը ևս, ինչպես նաև նախորդները, արդյունք են նրա հոգևոր երկարամյա և անբասիր ծառայության, հավատավոր ու բարի հոգևորականի խոկմունքների, կրոնազգաց ապրումների և փորձառության: Շնորհք սրբազանը ամեն տարի հրատարակում է կրոնաշունչ ուսումնասիրությունների նվիրված մի մեծ հատոր, հակառակ իր վարչական գործերի ծանրության և իր պաշտոնի

և հանգամանքի այլ մտահոգությունների, հավատարիմ մնալով իր նախորդ գրաստերգրագետ պատրիարքների ավանդությունների և օրինակին:

Ուսումնասիրությունը գրված է ջերմ սիրով, դեպի «սրբության» գաղափարը ունեցած նրա պայծառ հավատքով ու համոզմունքների կրակով: Ուսումնասիրության լեզուն պատկերավոր է, արտահայտիչ, գեղեցիկ, կենդանի և կուռ: Վերլուծությունները, դատողություններն ու մեկնաբանությունները՝ խոր և բովանդակալից:

Հանձնարարելի է սույն ուսումնասիրությունը օգտագործել մեր վարժարաններում որպես դասագիրք Հին և Նոր Կտակարանների սրբազան պատմության: Այն կարդացվում է հոգեկան մեծ բավականությամբ և հարաճուն հետաքրքրությամբ:

ՌԱՖԱՅԵԼ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

ԽԱՉՔԱՐԵՐ*

Այժմ տեսնենք, թե ինչպիսին է նոր կազմակերպված խաչքարը, որ միանգամայն իրավացիորեն կրում է այդ անունը:



Նկար 15

Քարե տախտակի մեջտեղում, նրա հիմնական մասում, քանդակվում է խաչը: Խաչի երկու կողմից, աջ և ձախ, զարդարում են ներքևից վեր բարձրացող մեզ արդեն հայտնի տերևները: Նրանց տակ, քարի տախտակի մեջտեղում, խաչի երկար թևի ներքևում, նույն կլոր ծաղիկն է՝ վարդը: Այդ վարդանման նկարը, որ արևի նշանն է, ապացուցում է մի շարք հուշարձաններ-ի վրա քանդակված վարդերը, որոնք

* Շարունակվում է «Էջմիածին» ամսագրի 1977 թվականի № Է-ից:

դեռ շատ վաղ շրջանում իրենց ուժը չէին կորցրել և բանդակվում էին խաչի հետ միասին:

Այսպես, մինչև 7-րդ դարի կառուցված տաճարների՝ Երերույքի, Տեկորի, Եղվարդի, Արամուսի պատերի վրա խաչերի հետ մենք հանդիպում ենք այդ վարդերին: Եղվարդի բազիլիկի հարավային դռան գլխին բանդակված է վարդը, իսկ ավելի փոքր երկրորդականի վրա՝ խաչը: Ահա թե ինչքան ուժեղ է եղել դեռ այն ժամանակ տարածված արևապաշտությունից եկած այդ հին սովորությունը:

Արևի նշանը հետաքրքիր զարգացում ունի: Սկզբում լինելով վեց թևանի՝ համապատասխանում էր արևի նշանի հիշտ ձևին: Հետագայում խաչքարի մեջ յուր ընկրգնական իմաստը բոլորովին կորցնելով և կրկնվելով որպես ընդունված դեկորատիվ մաս, բանի գնում, բոլորովին կորցնելով է՛լ ավելի է այլափոխվում, և եթե նա վաղ խաչքարերի մեջ ուներ ավելի բիչ թերթիկներ, ապա հետո նրանք բազմանում են, բարդանում և դառնում խճճված զարդանախշ, հիշեցնելով հին ձևը միմիայն իր կլորությամբ: Համեմատաբար վաղ ժամանակվա մի խաչքար ապացուցում է, որ նա սկզբում նկարվել է որպես ընդունված կարգ, նրա վարդը դեռ չի մտած խաչի անմիջական կազմված դաշտի մեջ, այլ դուրսն է, ինչպես նկարվում էին եկեղեցիներում՝ խաչն ու վարդը իրար կողքի (նկ. 15): Նույն փոփոխությունները կատարվում են և տերևների հետ: Այդ սակավաթիվ տերևները սկզբում դուրս են ելնում խաչի տակից պարզ բանդակված, իսկ հետագայում արդեն բազմազան ձևերով մշակվում և հեռանում են հին ձևից, այլևս բոլորովին չունենալով տերևի տեսք:



Նկար 16



Նկար 17

Իսարկե, վարդը բոլոր խաչքարերում պարտադիր կերպով չի բանդակվում, թեև խաչքարերի ճնշող մեծամասնության մեջ վարդի նկարը իր պատվավոր տեղն է գրավում: Վարդի նկարի բացակայությունը խաչքարերում պարզ բացատրելի է, չէ՞ որ դա միայն սովորության արդյունք էր, այլ ոչ օրենք: Եվ նա մեկ-մեկ փոխարինվում էր մի այլ հետաքրքիր տարրով՝ աստիճանավոր պատվանդանով, որն ինչ-որ ինձ անհայտ իմաստալից ծագում ունի: Գ. Զուբինաշվիլին այդ մասին ասում է, որ աստիճաններով տարրը խաչը բռնելու համար է, բայց դա համոզեցուցիչ չէ, և ես թողնում եմ այս հարցը բաց:

Հետզհետե կատարելագործվում է դասական խաչքարը: Սկսում է կանոնավոր-

վել սալը, որ ընդունում է ավելի երկրաչափական ձևեր: Խաչքարի կողերը կոր ու ծուռ լինելուց արդեն ուղղվում են: Հարընտանում է և զարդը: Հարստանում է խաչի նկարը. փոխվում և բարդանում են շուրջը եղած զարդաքանդակները: Ավելի ուշ առաջ է գալիս խաչքարին հատուկ շրջանակը՝ կազմված քանդակազարդ բարդ գոտուց: Խաչքարն ի վերջո այնքան է ծածկվում, որ կարիք է զգացվում պաշտպանելու այդ նուրբ փորագրությունը: Ստեղծվում է քիվը (նկ. 16, 17):

Այժմ քննենք խաչքարի հասունացած վիճակը: Նրանք հարուստ են չափից դուրս ձևով և միատեսակ չեն բովանդակությամբ: Բովանդակության իմաստով նրանց կարելի է կոպիտ բաժանել երկու տեսակի, նախ որպես գերեզմանաքար-մահարձաններ, հուշարձան՝ այս կամ այն դեպքի կամ որևէ բարեգործության կապակցությամբ կանգնեցված: Այս տեսակետից շատ հետաքրքրական է Հառիճի խաչքարը, որ կանգնեցրել է Իվանե սպասալարը ի հիշատակ այն քաջ զինվորների, որոնք զոհ-



Նկար 18



Նկար 19

Պատվանդանը նույնպես ենթարկվում է փոփոխության, մեծ և թանկարժեք խաչքարերում մշակվում որպես կամարակապ սյուներ, իհարկե դեկորատիվ ձևով (նկ. 18): Շատ տարածված է մի այլ ձև ևս, որ հանդիպում ենք միացրած, խմբային խաչքարերի մեջ, երբ 2—3—4 խաչքար կանգնեցվում է մի պատվանդանի վրա (նկ. 19, 20): Այստեղ մշակումն ավելի ճշմարտացի է. հարթությունները երեսապատված են բազմանկյուն, հաճախ շախմատաձև ու բազմերանգ սալերի միջոցով:

Ահա խաչքարի հիմնական տիպի նկարագիրը:

վել են մեծ հաղթանակով վերջացած մարտում: Հայաստանի պետական պատմական թանգարանում կա խաչքար Զուղայից, որ կանգնեցված է եղել ի հիշատակ մարտից բարեհաջող դուրս եկած հոր և որդու, որոնց վրա հարձակվել են օտարազգի ավազակներ: Սրանց տիպին են պատկանում և այն խաչքարերը, որոնց հանդիպում ենք կա՛մ գերեզմաններից դուրս, կա՛մ առանձին կանգնած, կա՛մ էլ եկեղեցու պատի մեջ դրված «վասն փրկութեան հոգւոյ»:

Ավելի բազմազան են խաչքարերը ըստ դասակարգման ու տեղի: Նախ կարելի է

բաժանել ըստ նյութի: Այս բաժանումը այնքանով է կարևոր, որ նյութը թելադրել է որոշ չափով մշակման եղանակը, որը և սուաջ է բերել քանդակի կատարելակերպ:

Խաչքարի համար նույն քարն էին օգտագործում, ինչ առհասարակ կառուցվածքների համար: Դրանք հիմնականում տուֆերն էին, որ ունեն կոպիտ կազմվածք, և բազալտ, իսկ ավելի շատ՝ կրաքարն ու դուրս չեն բերում սալի հարթությունից, այլ մշակում են հարթ, այն պատճառով, որ ներսում նրա կարիքը չի զգացվում (խոսքս վերաբերում է, իհարկե, այն խաչքարերին, որոնք նախատեսված են ներսը կանգնեցնելու համար):

Առանձին գերեզմանոցներում կանգնեցրած խաչքարերի միջև տարբերությունը նրանց անմիջական տեղի ընտրության և



Նկար 20

ավազաքարը, որ ավելի մանրահատիկ է և այդ պատճառով մշակվում են շատ ավելի նուրբ, հակառակ տուֆին, որից քանդակված խաչքարի զարդաքանդակները ընդհանրացած էին, ավելի խոշոր ու առնական:

Խաչքարերը տեղադրվել են հիմնականում չորս ձևով գերեզմանոցներում, առանձին կանգնած և ճարտարապետական կառուցվածքին կից ու վերջապես շենքի ներսում: Խաչքարերի տարբերությունը գլխավորապես կայանում է ներսը և դուրսը կանգնածների մեջ: Այդ տարբերությունը արտահայտվում է ռելիեֆով. ներսը փորվածքը մեղմանում է. այս հանգամանքը է՛լ ավելի զգալի է քիվի մեջ: Ներսում դրված խաչքարերում կրկնելով քիվի ձևը, նրանց չափի մեջ է:

Առաջին դեպքում ընտրվում էին ավելի աչքի ընկնող վայրերը չափով զգալի մեծ, բան գերեզմանոցում կանգնեցրած խաչքարերը: Լինում են և խմբային: Մի քանի հատ իրար կից շարված խաչքարերը դառնում են ամբողջական, մոնումենտալ հուշարձան և ստանում են արդեն այլ ձև՝ հեռանալով խաչքարի պարզ պատկերից (նկ. 21):

Ըստ տեսակների բաժանելիս պետք է հիշել այն խաչքարերը, որոնք դրվում են հատուկ կառուցվածքի մեջ և կորցնում իրենց յուրահատուկ ձևը: Այս պատճառով նրանց պետք է դիտել որպես այլ կարգի հուշարձաններ, որոնք ավելի ուշ միջնադարում զգալի տարածվում են, հաճախ

դառնալով ինքնուրույն հորինվածք (նկ. 22):

Գերեզմաններում խաչքարերը կանգնեցվում էին սովորական ձևով, քանդակազարդ երեսով դեպի արևմուտք դարձած ու իրենցից չէին ներկայացնում որևէ կանխամտածված հորինվածք:

Այլ են խաչքարերը, երբ կանգնեցված են առանձին: Այստեղ նրանք գեղարվեստական ամբողջ ուժով են իրենց դրսևորում: Վարպետն այս դեպքում ցույց է տալիս խաչքարը բնական միջավայրին ներդաշնակելու տարածական լուծման իր ձգտումը (նկ. 23):

Մարտունու մոտ, Ադիաման գյուղի ճանապարհի վերևը, մի ժայռի գլխին, կանգնեցրած է խաչքար: Հեռվից արդեն երևում է այն, և այդ ժայռերը, որ մի կողմից ուղղահայաց բարձրանում են, ձուլում են իրենց հետ կանգնած խաչքարը, ստեղծելով մի ամբողջություն: Եվ այդ տեղի ընտրությունը տեսնելով համոզվում ես, որ վարպետը հակառակ ընդունված կարգի, հանուն տարածական լուծման, ընտրել է այդ վայրը և դրանով իսկ ստեղծել է մեծ գեղարվեստական պատկեր: Այլ կերպ չի կարելի բացատրել այն հանգամանքը, որ գերեզմանը գտնվում է ոչ թե խաչքարի տակը, այլ զգալի հեռու, որտեղ հնարավոր է եղել փորել:

Այլ տեղ խաչքարը կանգնեցված է պատվանդանի վրա, որը ոչ սովորական քարերից շարվածք է, այլ մի բնական մեծ ժայռի կտոր, առանձին ցցված կանգնած (նկ. 24):



Նկար 21

Այստեղ տեսնում եք վարպետի մեծ զգացմունքի հետ նկարչի վերաբերմունքը, որը ոչ միայն հմտորեն քանդակել է խաչքարը, այլ կարծես քանդակել է ամբողջ ժայռը, պսակելով այն խաչքարի ծավալով: Այստեղ հուշարձանը շնչում է ներքին ամբողջ ուժով և միանգամայն հասնում իր նպատակին՝ համոզելով դիտողին այդ միաձույլ կոթողի նշանակության մասին:

Ահա Կոշի ճանապարհին կանգնած մի ուրիշ խաչքար: Պայմաններն այստեղ այլ են, տեղը հարթ է և կոմպոզիցիան լուծվում է այլ կերպ: Սովորական խաչքարը յուր սովորական տարրերի հարաբերությունով այստեղ նպատակին չէր հասնի,

կլիներ թույլ: Այդ պատճառով վարպետը փոխում է պատվանդանի և խաչքարի հարաբերությունը: Պատվանդանը կառուցում է զգալի բարձր, որի շնորհիվ խաչքարը (որ բացարձակ չափերով համարյա կրկնակի է ընդունված միջին չափի համեմատ) վեհ բարձրանում է, իշխելով այդ հարթավայրի վրա, և արդեն հեռվից երևում է նրա խիստ և ձիգ նկարված ուրվանկարը:

Մի այլ խաչքար: Կանգնած է Աշտարակում, ճանապարհի գլխին, ժայռի վրա: առաջ իրենց դրվածքով, վկայելով վարպետի շնորհքը, որ լայնածավալ վանքի տարածության մեջ ընտրել է հատկապես այստեղ:

Շատ գեղեցիկ են կապվում եկեղեցիների մուտքերի առաջ դրված բոլոր խաչքարերը: Հանդիպում ենք և սքանչելի, բանաստեղծական քառյակ հիշեցնող հորինվածքների, ինչպես, օրինակ, Վայոց ձորում կառուցված մի խաչքար, որ վերածվել է աղբյուրի:



Նկար 22

Նկար 23

Այստեղ վարպետն այլ կերպ է լուծել խնդիրը: Նա սարքել է աստիճաններ, որ տանում են դեպի խաչքար: Աստիճանները, որ պսակվում են խաչքարով, ուժեղ տպավորություն են թողնում դիտողի վրա, մնում հիշողության մեջ գլխավորապես ձևերի պարզության շնորհիվ (նկ. 25):

Հայ վարպետներն ստեղծում են հետաքրքիր և ուժեղ պատկերներ ոչ միայն բաց տեղում: Նրանք մեծ հաջողությամբ լուծում են խաչքարերի և շենքերի հետ կազմված համալիրները: Այսպիսի օրինակ են Սևանի նախագավթի կամարների մեջ դասավորված խաչքարերը, որ մինչ այսօր էլ հիացնում են ոչ միայն իրենց բարդ ու գեղեցիկ զարդաքանդակներով, այլ նախ և

Նկարագրածս խաչքարերը պատկանում են այն խմբին, որոնցում ամենաուժեղ կերպով արտահայտված են նրանց հիմնական հորինվածքների իմաստը, գեղարվեստական էությունը: Որպես հուշարձան, նրանում զուգակցվել է ճարտարապետական և քանդակային արվեստը, ստեղծելով օրգանական սինթեզ: Սխալ է այն կարծիքը, որի համաձայն խաչքարը գնահատվում է զարդաքանդակային հորինվածքի արժանիքներով: Էականը նրա կառուցվածքի ծավալային ձևն է: Իսկ զարդը պետք է դիտվի որպես նրա երկրորդ հատկանիշը: Վերջիվերջո այդ զարդերը կան և շենքերի վրա: Ճիշտ է, խաչքարերում նրանք հասնում են բացառիկ գեղեցկության ու նրբու-

թյան, բայց և այնպես առաջնությունը պատկանում է ընդհանուր կերպարին, այլ ոչ զարդաքանդակներին:

Ինքնըստինքյան պարզ է, որ մեծ քանակությամբ զարդաքանդակված խաչքարերը, փռված պատմական Հայաստանի ողջ տարածքով, ունեցել են բազմազան ուղղություններ և տարբեր լուծումներ (թե՛ ընդհանուր հորինվածքի իմաստով և թե՛ իրենց ներքին կազմով ու ձևերի չափից դուրս հարուստ բազմազանությամբ):

Վերլուծել գեղարվեստական տեսակետից այդ ոճերը, պարզել և դասավորել: Ահա մի մեծ գործ, որով մենք դեռ չենք զբաղվել: Ահա մի ասպարեզ, որի պարզաբանումը և վերլուծումը կտա մեզ ժամանակակից ճարտարապետներիս ուսանելի և հետաքրքիր տվյալներ:

Մի շարք ոճական հատկանիշների հիման վրա, խաչքարերը կարող ենք դասակարգել ըստ Հայաստանի շրջանների: Շատ որոշակի կերպով կարելի է, օրինակ, տարբերել Սանահին-Հաղպատի խաչքարերի ոճը, Գոշի և ամբողջ այդ շրջանի, Կոտայքի (Զրվեժ գյուղի խաչքարով հանդերձ), Ամաղուի Նորավանքի (որ իրենց ազդեցությանն են ենթարկել ամբողջ Վայոց ձորի շրջանը) խաչքարերի ոճից: Եվ վերջապես Ջուղայի խաչքարերը, որ ճիշտ է, ժամանակով զգալի կտրվում են մյուս խաչքարերից, բայց և այնպես ինքնուրույն են, ուշ ժամանակվա ոճական կնիքն են կրում:

Սանահինյան խմբի ամենավառ ներկայացուցիչն է Տուդեորդու խաչքարը՝ կանգնեցված մեծ և հարուստ պատվանդանի վրա: Այս խաչքարը բնորոշ է նախ, իհարկե, պատվանդանով (որ քիչ ավելի մեծ է, քան հարկավոր էր), ապա իր զարդաքանդակի ձևով, որը և ստեղծել է ոճը: Զարդաքանդակի ձևն այստեղ պղինձ է հիշեցնում, չունենալով քարին հատուկ քանդակման ֆակտուրա (նկ. 26): Խաչի հարթության վերնամասը կլոր է, և նրա վրա խաչը շեշտված է հակառակ ավելի թույլ նկարված Հաղպատի խաչերի: Ընդհանրապես ամբողջ քարը զարդաքանդակված է շատ մանր նկարով, հիմնականում երկրաչափական զարդանախշերով: Մինչև անգամ տերևներն այդ կատարելակերպն ունեն: Սրա գեղարվեստական արժանիքը ընդհանուր ուրվանկարի, խաչի շեշտված պատկերման մեջ է՝ կատարված նրբաքանդակված ֆոնի վրա: Այստեղ բոլոր մասնիկներն այլևս այն հին իմաստը չունեն, կիրառվում են զուտ որպես դեկորատիվ տարր, այդ պատճառով նրանց վարիացիաները բազմաթիվ են:

Մեկ ուրիշը՝ Զրվեժի խաչքարը: Կոփված է տուֆ քարից, որի պատճառով և զարդանախշն իր նրբությամբ զգալի զիջում է Սանահնի խաչքարին: Վարպետը նրա ընդհանուր հորինվածքին տվել է ավելի սլացիկ ձև, որ շեշտված է քարի չափով և խաչի ձևով: Դրան օգնում է կողքերի տերևների բարակ և երկար մշակումը: Այս բոլորը մեկ անգամ ևս ընդգծվում է քարի կողքերին վերից վար իջնող զարդանախշով (որը վերնամասում չի ընդհատվում



Նկար 24

հորիզոնական գոտիով): Ճիշտ նույն լուծումն ունի ս. վանքի Հռիփսիմեի խաչքարը, այն տարբերությամբ, որ քիվը դրվագընված է այլ նկարով և վարդի փոխարեն խաչի տակը քանդակված է աստիճանավոր պատվանդան: Հետաքրքրականը այն է, որ երկուսի քիվերն էլ կրում են շատ ավելի վաղ ժամանակվա նկարներ՝ նոեր ու ականթի տերևներ: Անկախ դրանից, հանձայն այլ մանրամասների, խաչքարը 12-րդ դարի գործ պետք է համարել:

Կանգ առնենք ևս երկու խաչքարերի վրա, որոնք գլուխգործոցներ ենք համարում:

Ե՛վ Սանահնի, և՛ Հաղպատի խաչքարերը, և՛ մյուս այլ նրբատաշ կոթողները, որ ստեղծվել էին երկար ժամանակվա ընթաց-

քում, կարծես նախափորձեր էին, որոնք սնեցին մի կոթող, որ հետագայում դարձավ նրանց թագն ու պարծանքը:

Խոսքս Դեղի «Խաչելություն» կոչվող խաչքարի մասին է: Զարմանալի զուգադիպություն: Պետք էր որ այն հորինող մեծատաղանդ արվեստագետը յուր հրաշագործ ձեռքերով խաչքարը կանգնեցներ այնտեղ, ուր մի քանի դար հետո ծնվում է հայ ժողովրդի մեծ երգիչ Հովհաննես Թումանյանը:

Ուշադրություն դարձրեք նրա ձիգ իրանին: Հետևեք նրա քանդակների ելևէջներին: Եթե հայտնի չլիներ մեզ նրա բացարձակ չափերը, ապա մենք հատոզված պետք է լինենք, որ դա արծաթի նրբագույն գործ է, և դուք հետևելով այս սքանչելի հորինվածքին լսում և զգում եք մի սիմֆոնիա, որ շոյում է ձեր լսողությունը: Եվ դուք զմայլված դիտելով հասկանում եք, որ այնպես, ինչպես երգել ու հորինել է ժողովուրդը իր երազանք հեքիաթների խոսքերով, նույն հուզումները այս արվեստագետը կերտել է քարի վրա (նկ. 27):

Սա մի արտակարգ երևույթ է մեր արվեստում: Ընկղմելով ծաղիկների հյուսվածքների մեջ, վարպետը նույնիսկ խաչը օգտագործել է արտահայտելու յուր ապրումները, յուր երազանքները: Մի՞թե սա չի հիշեցնում Գրիգոր Նարեկացու Տիրամոր գովքը, որ արտանկարված է, գուցե իր սիրած կնոջ նկարից ոգեալ ու մարմնական:

Նույն ժամանակները Գուգարքի լեռների մյուս լանջերին, որ Սևանին են հասնում, Գոշ գյուղում, հռչակավոր Մխիթար Գոշի



Նկար 25

հիմնադրած Նոր Գետիկ վանքում կամ Գոշավանքում, կանգնեցվում են զույգ խաչքարեր: Սրանց հորինողը բազմաբանքար ու լուսանոգի Պողոսն է, հյուսվածքների մի ամբողջ աշխարհի կախարդ արարողը:

Նա կառուցում է փոքրիկ եկեղեցին, որի ամեն մի մասը կատարյալ հարստություն է, յուր սքանչելի գործվածքներով, իսկ ամբողջը՝ հնչում որպես ներդաշնակ երաժշտություն:

Երկու խաչքարերը դրված են եկեղեցու մուտքի աջ և ձախ կողմերում: Նրանց սխեման մոտավորապես Զրվեժի խաչքարի նման է: Հարթությունը բաժանված է երեք մասերի. մեջտեղը լայն, կողքերը՝ նեղ շերտեր: Լայն մասում տեղավորված է խաչը, իսկ տակը՝ մեծ և ուժեղ նկարված

շրջան: Երկրորդ խաչքարը նույն կազմն ունի: Սալը վերջանում է լայն քիվով, որը նույնպես հարուստ զարդաքանդակված է: Կողքի նեղ շերտերի վրա, որ ծածկված է մեղեդու նման հնչող նուրբ նախշով, դրված են ավելի բարձր նախշեր, որ կարծես այդ մեղեդու շեշտերն են հիշեցնում:

Նույնն է կատարվում խաչի ֆոնի վրա, որն ավելի լայն ու փարթամ է: Այստեղ վարպետը այնպես է փորագրել այդ զարդերը, որ նրանց դարձրել է թափանցիկ, անջատելով փորվածքը հիմնական զանգվածից: Այս ձևը խաչքարին տալիս է լույսի ու ստվերի մի չտեսնված հարստություն, խաչքարի զարդը դարձնում օդային գործվածք: Սրանք մեր լավագույն ճարտարապետական կառուցվածքներին համազոր ստեղծագործություններ են, որ պետք է արվեստի պատմության մեջ գտնեն իրենց արժանի տեղը, դուրս գալով մեծ ու լայն արվեստի ասպարեզ (նկ. 28): Խաչքարերի ինքնատիպ արվեստը հետզհետե զարգանալով 12-րդ և 13-րդ դարերում հասնում է իր բարձրագույն աստիճանին և իր փայլուն արտահայտությունն է գտնում Պողոս վարպետի խաչքարում:



Նկար 27



Նկար 26



Նկար 28

Դրանից հետո գալիս են խմբային խաչքարերը, որոնցում պակասում է խաչքարի հստակ ու ուժեղ սիլուետը: Այնուհետև խաչքարը դրվում է կառուցվածքի մեջ, և բոլորովին հեռանում իր նախկին ձևից:

Ուշ միջնադարում խաչքարերի արվեստը սկսում է անկում ապրել:

Զուղալում թեպետ խաչքարերը ընդհանուր առմամբ պահպանում են ձևը, բայց իրենց համամասնությունը խիստ փոխում, ձգվում վեր և դրանով էլ կորցնում խաչքարին հատուկ հաստատուն տեսքը: Բացի այդ դրանց մեջ մտնում են օտարամոտ տարրեր, որոնք ավելի են հեռացնում խաչքարի ձևը: Այս դեպքում խաչքարը դառնում է արհեստավորի հմուտ գործ միայն, որ այլևս չունի հին հյութալի զարդանախշը: Վարպետը կարծես աշխատում է տրաֆարետով, ստեղծագործական նվազ ներդրմամբ: Դրանից հետո ընդհանրապես դադարում է զարգանալ հայ արվեստի այդ հետաքրքիր բնագավառը: Այսպիսին է խաչքարերի արվեստի կազմավորման, զարգացման ու անկման ընդհանուր նկարագիրը:



Հ. Ս. ԱՆԱՍՅԱՆ

«ԱՐՄԱՏ ՀԱՒԱՏՈՅ»-Ի ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ*

ԻՐԵՆԵՈՍ ԼՈՒԳԴՈՆԱՑԻ

Մեր թվականության Բ դարի եկեղեցական մատենագիրներից է այս հեղինակը, որի կենսագրությանը վերաբերող տեղեկությունները սակավ են պատմական աղբյուրներում[1]: Ծննդով նա Փոքր Ասիայից էր, ազգությամբ՝ հույն, աշակերտել էր Պոլիկարպոս Զմյուռնացուն. մի ժամանակ, Մարկոս Ավրեղիոս կայսեր օրերին, երեց էր Լուգդունում (Ֆրանսիայի այժմյան Լիոն քաղաքը), իսկ 177/78 թվականին դարձել է նույն քաղաքի եպիսկոպոսը և այնտեղից էլ ժառանգել **Լուգդունացի** մականունը[2]: Մահացել է Սեպտիմոս-Սևերոսի հալածանքների ժամանակ, 203 թվականին:

Ինչպես հունական և հռոմեական եկեղեցիների, այնպես էլ հայ եկեղեցու համար Իրենեոսը հեղինակություն է համարվել քրիստոնեության վաղագույն շրջանում գոյություն ունեցած վարդապետական տարակարծությունների հարցերում և կարևոր աղբյուր՝ հերձվածողական ու հերետիկոսական շարժումների պատմության համար: Նա գրել է բազմաթիվ երկեր, որոնցից պահպանվել են միայն երկուսը՝ «Ընդդէմ հերձուածոց» և «Ցոյցք առաքելական քարոզութեանն»:

«Ընդդէմ հերձուածոց» երկը, որը բաղկացած է հինգ գրքերից, լրիվ կազմով հայտնի է միայն լատիներեն մի հին թարգմանությամբ[3], որի ժամանակի մասին մաս-

* Այս շարքում, որ սկսում ենք հրատարակել այսօր, նպատակ ունենք տալ ոչ թե «Արմատ հաւատոյ»-ի աղբյուրների տեսությունը, որը դուրս է մեր նպատակից, այլ քայլ առ քայլ քննել ու լուսաբանել «Արմատ հաւատոյ»-ի և նրա աղբյուրների հարաբերակցության հարցերը, ցույց տալով նրանում ընդգրկված մատենագրական վկայությունների ծագումը՝ բնագրաբանական առումով, նյութերի ընդգրկման բնույթն ու եղանակները և այլն: Իրենեոսից հետո հաջորդաբար այսպիսի հետազոտություններ կնվիրենք նաև «Արմատ հաւատոյ»-ում հյուրընկալված մի շարք ուրիշ հեղինակների և անանուն աղբյուրների՝ առանց հետևելու նրանց ժամանակագրական հերթականությանը:

[1] *Հմմտ.* B. Altaner, „Précis de patrologie" (adapté par H. Chirat), Tournai, 1961, p. 209—213.

[2] Լիոն քաղաքի հին անունը սովորաբար հայտնի է **Լուգդուն** ձևով՝ ըստ լատինականի և հունականի (կրճատել ենք վերջավորությունները), բայց հունարենում պատահում է նաև **Լուգդոն** ձևով: Ասորերենում այս անունը կարդացվում է **Լուգդուն, Լուգդոն, Լոգդոն** ձևերով: Եվսեբիոս Կեսարացու Եկեղեցական պատմության հայերեն հին թարգմանության մեջ այս անունը գրված է **Լաւդոնա** ձևով, իսկ նոր թարգմանության մեջ՝ **Լուգդոն,** ըստ այնմ էլ՝ **Լաւդոնացի** և **Լուգդոնացի**. հմմտ. «Եւսեբիոսի Կեսարացւոյ Պատմութիւն եկեղեցւոյ յեղեալ յասորւոյն ի հայ ի հինգերորդ դարու», Վենետիկ, 1877, էջ 321, 322, 350, 351, 354:

«Արմատ հաւատոյ»-ի ձեռագիր օրինակներում Իրենեոսն ալավալված ձևերով անվանվում է **եպիսկոպոս Լոկդոնոյ՝ Լոկդանայ՝ Լոկտոնոյ՝ Լոկտոնայ՝ Լոկտինոյ:**

[3] „Sancti Irenaei Contra Haereses libri V... stu-

նագետների կարծիքները տարբերվում են՝ դնելով 200 թվականից մինչև 420 թվականը: Նրա հունարեն բնագրից մնացել են միայն բազմաթիվ հատվածներ՝ հետագա դարերի հեղինակների գործերում: «Ընդդէմ հերձուածոց»-ի Դ և Ե գրքերի հայերեն մի հին թարգմանությունը հայտնաբերվեց Էջմիածնի միաբանության անդամ Կարապետ. եպս. Տեր-Մկրտչյանի կողմից՝ Երևանի կաթողիկե ս. Աստվածածին եկեղեցու ձեռագրերից մեկում (այժմ՝ Երևանի Մաշտոցյան Մատենադարանի ձեռ. № 3710) և 1910 թվականին հրատարակվեց նույն միաբանության անդամ Երվանդ վրդ. Տեր-Մինասյանի ջանքերով[4]:

«Ցոյցք առաքելական քարոզութեանն» երկը ծանոթ է միայն հայերեն թարգմանությամբ, որը հայտնաբերվել է նույնպես վերոհիշյալ ձեռագրում՝ Տեր-Մկրտչյանի և Տեր-Մինասյանի կողմից և հրատարակվել 1907 թվականին[5]: Նրա հունարեն բնագիրը և կամ նրանից կատարված թարգմանություններ ուրիշ լեզուներով՝ առհասարակ հայտնի չեն բանասիրությանը:

Համարելով, որ Իրենեոսի երկերի հայերեն թարգմանությունները ծանոթ են եղել Ստեփանոս Սյունեցուն, հրատարակիչները հակված են եղել թարգմանության ժամանակը դնելու ոչ ուշ, քան Ը դարի առաջին կեսին, նկատի ունենալով, որ Սյունեցին մահացել է 736 թվականին, իսկ թարգմանության լեզվում նշմարել էին թե՛ ասորերեն, թե՛ հունարեն սկզբնագրի հետքեր[6]: Ըստ Հ. Ն. Ակինյանի՝ անտարակուսելի է, որ թարգմանությունների սկզբնագիրը եղել է հունարեն. իսկ թարգմանությունը նա վերագրել է Վրթանես Քերթողին՝ Զ դարի վերջին տասնամյակում, հնարավոր համարելով վերջին եզր ընդունել 604 թվականը, ցույց տալով, որ Իրենեոսից բավականին ուշագրավ հետքեր կան Վրթանեսի առ Սորմեն թղթում[7]: Գարեգին վրդ. Հովսեփյանը համարում էր, որ «թարգմանությունը կատարուած լինի հելլենասէրների շրջանում, Է դարում»[8]:

Հայ մատենագրության մեջ Իրենեոսից կան բազմաթիվ հատվածներ, որոնց մի մասը «Ընդդէմ հերձուածոց» և «Ցոյցք առաքելական քարոզութեանն» երկերից է, մի մասն էլ նրա ուրիշ այնպիսի երկերից, որոնք այժմ ծանոթ չեն: Իրենյան այդ հատվածներից այստեղ մեզ հետաքրքրում են նրանք, որոնք ընդգրկված են «Արմատ հաւատոյ»-ում:

Որքան մեզ հայտնի է՝ առաջին անգամ Պ. Մարտենն է, որ նախանիկիական հայրերի մատենագրական նմուշների շարքում 1883 թվականին հրատարակել է «Արմատ հաւատոյ»-ում գտնվող հայերեն վեց հատվածները՝ ըստ Փարիզի Ազգային Մատենադարանի № 85 (այժմյան համարով՝ 153) ձեռագիր օրինակի[9]: Այդ օրինակը, ինչպես այժմ ճշտված է, «Արմատ հաւատոյ»-ի համառոտ խմբագրության ներկայացուցիչներից է:

Դրանից հետո Կարապետ վրդ. Տեր-Մկրտչյանը 1897 թվականին հրատարակել է «Արմատ հաւատոյ»-ի իրենյան հատվածները՝ ըստ Էջմիածնի Մատենադարանի Կար. № 1946 (այժմյան՝ Երևանի Մաշտոցյան Մատենադարանի № 1982) ձեռագրի[10], բայց այնտեղ բերված էին Իրենեոսից ոչ թե վեց, այլ միայն հինգ հատվածներ, իսկ վեցերորդը վրիպել էր հրատարակչի ուշադրությունից: Այս օրինակը, մեր գնահատմամբ, «Արմատ հաւատոյ»-ի ընդարձակ խմբագրությանն է պատկանում. բայց հրատարակիչը չէր էլ կռահել, որ գործ ուներ «Արմատ հաւատոյ» կոչված մի երկի հետ,

---

dio et labore Ren. Massuet", Parisiis, 1710. *Վերահրատարակել են՝* J. P. Migne („Patrologiae cursus completus", ser. gr., t. VII), A. Stieren և W Harvey.

[4] „Irenaeus. Gegen die Häretiker. Ἔλεγχος καὶ ἀνατροπὴ τῆς ψευδωνύμου γνώσεως. Band IV u. V. In armenischer Version entdeckt von Lic. Dr. Karapet Ter-Mĕkĕrttschian, z. Z. Bischof in Tauris (Parsien), herausgegeben von Lic. Dr. Erwand Ter-Minassiantz" (Texte und Untersuchungen, XXXV 2), Leipzig, J. C. Hinrichs, 1910.

[5] „Des heiligen Irenaeus Schrift zum Erweise der apostolischen Verkündigung. Εἰς ἐπίδειξιν τοῦ ἀποστολικοῦ κηρύγματος. In armenischer Version entdeckt, herausgegeben und ins deutsche übersetzt von Lic. Dr. Karapet Ter-Mĕkĕrttschian und Lic. Dr. Erwand Ter-Minassiantz. Mit einem Nachwort und Anmerkungen von Adolf Harnack" (Texte und Untersuchungen, XXXI 1), Leipzig, J. C. Hinrichs, 1907.

[6] Տես հրատարակիչների առաջաբանները:

[7] Հ. Ն. Ակինյան, «Ս. Իրենէոս հայ մատենագրութեան մէջ», **Հանդէս Ամսօրեայ**, 1910, էջ 200—208:

[8] **Արարատ**, 1907, էջ 64:

[9] J. P. Paulinus Martinus, „Analecta sacra patrum antenicaenorum", *հեռակայ հրատարակու թյան մեջ.* J. B. Pitra, „Analecta sacra spicilegio Solesmensi parata", t. IV, Parisiis, 1883, p. 34—35 *(հայերեն բնագրեր)*, 304—305 *(լատիներեն թարգմանություն)*.

[10] Կարապետ վրդ. Տեր-Մկրտչյան, «Իրենէոս և նշխարներ նորա գրուածներից», **Արարատ**, 1897, էջ 203:

և միայն այն էր նշել, որ ժողովածուի կազմողն է «ոմն Վարդան»:

Այնուհետև Հ. Յորդանը փարիզյան վերոհիշյալ № 85 (=№ 153) և Էջմիածնի Մատենադարանի Կար. № 1500 (այժմյան՝ Երևանի Մաշտոցյան Մատենադարանի № 2080) ձեռագրերի հիման վրա 1913 թվականին նորից էր հրատարակել Պ. Մարտենի հրատարակած այն հատվածները, որոնք, ինչպես ասացինք, «Արմատ հաւատոյ»-ի համառոտ խմբագրությանն են պատկանում[11]. այնտեղ Յորդանը բնագրական համեմատության կարգով նշել էր նաև տարընթերցումները Տեր-Մկրտչյանի տված հրատարակության, առանց նկատելու, որ վերջինս «Արմատ հաւատոյ»-ի մի տարբեր խմբագրություն է ներկայացնում և այդ պատճառով զգալի շեղումներ է ցույց տալիս:

Հիշյալ հրատարակիչները չէին զբաղվել խնդրո առարկա հատվածների բնագրական հարցերով, այլ միայն դրանց վրա ուսանագետների ուշադրությունն էին հրավիրել մատենագրական առումով, Իրենեոսի անունով հայ մատենագրության մեջ պահպանված նշխարները հավաքելու նպատակով: Նրանցից միայն Յորդանը, մի քայլ առաջ գնալով, փորձել էր իր կազմած համեմատական աղյուսակում հիման կարգով ցուցումներ տալ, թե ո՛ւր պետք է որոնել իրենյան այդ հատվածների կամ նրանց մասերի ծագումը, ըստ որում՝ չորս հղում տրվում էր դեպի «Ընդդէմ հերձ.» երկը, մեկ հղում՝ դեպի «Ցոյցք»-ը. իսկ երեք տեղեր մնում էին անպատասխան[12]: Ինչ խոսք, որ Յորդանի կատարած քայլը կարևոր էր, բայց նրա աշխատանքը բնագրաբանական բնույթ չէր կրում: Նրա ցուցմունքներով կարելի էր աղբյուրներում գտնել երբեմն բառացի նույնություններ, երբեմն՝ ընդհանուր նմանություններ. բայց թե ինչպիսի եղանակներով էին կերպարանափոխությունների ենթարկվել այդ աղբյուրները «Արմատ հաւատոյ»-ի մեջ մուծվելու համար, դա չէր երևում Յորդանի կատարած աշխատանքում:

Այժմ մենք ուզում ենք ձեռնամուխ լինել «Արմատ հաւատոյ»-ի իրենյան հատվածների բնագրաբանական հարցերին, քայլ առ քայլ տեսնել, թե այդ հատվածների մասերն ու մասնիկներն ի՛նչ ճանապարհով և ինչպե՛ս են կազմավորվել ու ստացել այժմյան պատկերը: Այսպիսի աշխատանքը կարևոր է ոչ միայն «Արմատ հաւատոյ»-ի քննական հրատարակության համար՝ իր աղբյուրագիտական նշանակությամբ, այլև նրա համար, որ հնարավորություն կտա տեսնելու, թե բոլոր դեպքերում չէ, որ «Արմատ հաւատոյ»-ում Իրենեոսի անունով ներկայացող հատվածները բառացիորեն նրա գրչին են պատկանում: Մենք կտեսնենք, որ դրանք երբեմն Իրենեոսի խոսքերի ո՛չ թե բառացի մեջբերումն են, այլ մեկնաբանումը, և ավելի հաճախ՝ խմբագրումն ու վերաշարադրումը: Այս հանգամանքը պիտի հաշվի առնեն Իրենեոսի մատենագրության հարցերով զբաղվող մասնագետները:

«Արմատ հաւատոյ» ժողովածուի կազմող Վարդան Այգեկցին Իրենեոսից վկայություններ քաղելու գործում օգտվել է տարբեր տեղերից և, հավանաբար, տարբեր ժամանակներում: Այդ են վկայում հատվածներին տրված հեղինակային վերնագրերը, մի մասը՝ «Երանոսի հետևողի առաքելոցն», մյուս մասը՝ «Երանոսի Լուգդունայ Եպիսկոպոսի»: Այսպես է թե՛ ընդարձակ, թե՛ համառոտ խմբագրություններում:

Մենք առիթ ենք ունեցել ցույց տալու, որ «Արմատ հաւատոյ»-ի ընդարձակ և համառոտ խմբագրություններն իրարից անկախաբար ծագում են հեղինակային նախօրինակից, բայց համառոտն ավելի նախնական վիճակ է ներկայացնում, քան ընդարձակը, թեև վերջինս իր կառուցվածքային կերպարանքով ավելի մոտ է նախօրինակին[13]: Նշանակում էր՝ եթե համառոտում ավելի նախնական վիճակով են պահպանվել մատենագրական վկայակոչումները, ապա ընդարձակում պահպանվել է նախօրինակի հիմնական կերպարանքը, ենթարկվելով վերջնական վերակառուցման, որն ըստ երևույթին տեղի է ունեցել ԺԳ դարի առաջին տարիներին, մինչև 1205 թվականը: Շատ բնական է, որ վերակառուցողական աշխատանքը որոշ չափով կազդեր մատենագրական վկայությունների վիճակի վրա՝ ինչ-ինչ նյութերի տեղափոխություններով և տեղափոխությունների առթած հետևանքներով: Այդ իրողությունը

[11] Hermann Jordan, „Armenische Irenaeusfragmente mit deutscher Übersetzung nach Dr. W. Lüdtke zum teil erstmalig herausgegeben und untersucht" (Texte und Untersuchungen, XXXVI 3), Leipzig, J. C. Hinrichs, 1913, S. 22—24 *(հայերեն բնագրեր)*, 163—166 *(գերմաներեն թարգմանություն)*.

[12] Ibidem, S. 162.

[13] Հ. Ս. Անասյան, «Հայ պատմա-դավանաբանական գրականության թանկարժեք հուշարձանը. Գիրք հաստատութեան և արմատ հաւատոյ», Էջմիածին (ամս.), 1972, № 8, էջ 30—32. № 9, էջ 45—46:

բացահայտվում է համեմատության դնելով երկու խմբագրությունների համապատասխան նյութերը: Արդ՝ վերակառուցման աշխատանքներն անդրադարձել են նաև իրենյան հատվածների կառուցվածքի վրա: Նախկին վեց հատվածներից մասեր հանվելով իրար են միացվել և որպես ինքնուրույն միավոր տեղափոխվել են ընդարձակ խմբագրության Ը գլխի մեջ, որը նվիրված է անապականության հարցերին. իսկ այս փոփոխության հետևանքով նախկին միավորներ և կամ որոշ մասեր—հատվածներ կամ կիսահատվածներ—տեղափոխումների ենթարկվելով մի տեղից դեպի մյուսը, կազմել են նոր միավորներ և տեղավորվել Դ գլխի մեջ, ուր ամփոփված են երկու բնությունների միասնության հարցին վերաբերող վկայություններ: Այսպիսով՝ միավորների քանակը թեև նույնն է մնացել, բայց որոշ միավորների կազմը փոփոխությունների է ենթարկվել: Այս տեղաշարժերը ճշգրտորեն նշելու համար մենք կիսահատվածների ենք վերածել ընդարձակ խմբագրության 1-ին, 2-րդ և 6-րդ հատվածները, իսկ համառոտի՝ 1-ին, 2-րդ և 3-րդ հատվածները: Մյուս հատվածները, որոնք չեն կիսվել, նույնպես ենթարկվել են տեղափոխումների: Ըստ այսմ՝ կունենանք հետևյալ համեմատական պատկերը (հավասարության նշանից առաջ՝ ընդարձակ խմբագրության միավորները, հետո՝ համառոտ խմբագրության). 1a=1a, 1b=3a, 2a=2a, 2b=2b, 3=4, 4=5, 5=6, 6a=1b, 6b=3b: Բացի այդ՝ որոշ հատվածներ կիսահատվածների վերածելն անհրաժեշտ էր լինում նաև բնագրական քննությունների համար, երբ պարզվում էր, որ հատվածի ծագումը երկու տարբեր տեղերից է:

Ստորև մեր քննությունը գնում է ընդարձակ խմբագրության հետևողությամբ (Երևանի Մաշտոցյան Մատենադարանի ձեռ. № 3295): Համառոտ խմբագրությունը վկայակոչում ենք միայն անհրաժեշտության դեպքերում (նույն Մատենադարանի ձեռ. № 2080):

1. **Երանոսի հետեւողի առաքելոցն.**

(a) **Որք հերձնուն եւ պառառեն զմինն՝ զԲոբովամու պատուհասն ընկալցին.** (b) **քանզի ընդունայն եւ սնոտիք են որք երկու բնութիւն ասեն բաժանեալ եւ որոնցեն զԱստուծոյ գիրկութիւնն, զոր ի մարդանալն իւրում շնորհեաց մեզ:** Էջ 342ա:

a կիսահատվածը բացակայում է Իրենոսի ծանոթ երկերում, բայց «Կնիք հաւատոյ»-ում կա՝ այսպիսի ընթերցումով. «Որք հերձուն եւ բաժանեն զմի Քրիստոս՝ զՅորոբովամու պատուհասն կրեցին»[14]: Դժվար է ասել՝ «Արմատ հաւատոյ»-ի կազմողը «Կնիք հաւատոյ»-ի՞ց է վերցրել այս հատվածը՝ խմբագրման ենթարկելով, թե այն աղբյուրից, որից օգտվել է և «Կնիք հաւատոյ»-ն: Վերջինում այս նախադասությունը սաս է կազմում հետևյալ ընդարձակ հատվածի. «Նորին Երանոսի՝ ի բանէն, որ ընդդէմ Կողարբոսի եւ նորին հաւանախոհաց, որք ըստ անկատարելութեանն եւ ախտից յինքնդարձութեան, եւ տրտմել երկնչել Քրիստոսի»[15]: «Կնիք հաւատոյ»-ում գտնվող իրենյան այս հատվածի ծագումն անհայտ են համարում Յորդանը[16] և Լեբոնը[17]:

b կիսահատվածում «Արմատ հաւատոյ»-ի խմբագիրը **քանզի** շաղկապով նախորդ կիսահատվածին կցորդում է Իրենեոսի մի ծանոթ նախադասությունը՝ խմբագրման ենթարկելով: «Ընդ. հերձ.» երկում կարդում ենք. «Ընդունայնք եւ սնոտիք են ամենեքին, որք զամենայն զտնաւրէնութիւնն անարգեն զԱստուծոյ եւ զմարմնոյս փրկութիւն ուրանան»[18]: Սակայն, ինչպես երևում է, «Ընդ. հերձ.» երկի այն ձեռագրում, որ ձեռքի տակ ունեցել է Այգեկցին, «ընդունայնք եւ սնոտիք են» բառերից հետո նախադասությունը սխալ կետադրությամբ բաժանված է եղել երկու մասերի՝ «որ զամենայն զտնաւրէնութիւնն անարգեն» և «զԱստուծոյ եւ զմարմնոյս փրկութիւն ուրանան». այնինչ պետք է տրոհված լիներ այսպես. «որ զամենայն զտնաւրէնութիւնն անարգեն զԱստուծոյ» և «եւ զմարմնոյս փրկութիւն ուրանան»[19]: Բնագրի այսպիսի դրության առջև Այգեկցին, նախ պարզաբանելով «որ զամենայն զտնաւրէնութիւնն անարգեն» բառերը, որոնք Բանի մարդեղության էությունն աղավաղողներին են վերաբերում, և դրանք իր կողմից բաղկե-

---

[14] «Կնիք հաւատոյ ընդհանուր սուրբ Եկեղեցւոյ յուղղափառ և սուրբ հոգեկիր հարցն մերոց դատաւորութեանց, յաւուրս Կոմիտաս կաթուղիկոսի համաձայնեալ: Հրատարակութիւն Կարապետ եպիսկոպոսի [Տէր-Մկրտչեան]», Էջմիածին, 1914, էջ 297 տ. 18—20:

[15] Անդ, էջ 297—299:

[16] H. Jordan, S. 162 u. 203.

[17] J. Lebon, „Les citations patristiques grecques du Sceau de la Foi", **Revue d'Histoire Ecclésiastique**, XXV, 1929, p. 23.

[18] «Ընդ. հերձ.», էջ 155 տ. 11—13:

[19] Այսպես է ցույց տալիս և «Ընդ. հերձ.»-ի լատիներեն թարգմանությունը. „qui universam dispositionem Dei contemnunt, et carnis salutem negant", տե՛ս J. P. Migne, „Patr. curs. compl.", ser. gr., t. VII, p. 1124.

դոնականներին հասցեագրելով, տալիս է այսպիսի ձևակերպում. **որք երկու բնութիւնս ասեն բաժանեալ.** իսկ դրանից հետո՝ բնագրի «զԱստուծոյ եւ զմարմնոյս փրկութիւն ուրանան» բառերը, որոնք բնականաբար աղավաղված երևոյթ ունեն և տրամաբանական միտք չեն արտահայտում, նա մեկնաբանության է ենթարկում՝ այսպես. **եւ ուրանան զԱստուծոյ փրկութիւնն, զոր ի մարդանալն իւրում շնորհեաց մեզ,** այսինքն՝ «և ուրանում են այն փրկությունը, որ Աստված շնորհեց մեզ՝ իր մարդեղության միջոցով»: Թեև այս հնարքը որպես մեկնություն հինքյան հաջող է, բայց, այնու ամենայնիվ, չի արդարանում, քանի որ կառուցված է սխալ վերծանված բնագրի վրա: «Արմատ հաւատոյ»-ի համառոտ խմբագրությունն այս կիսահատվածին համապատասխանող մասում չունի Այգեկցու ավելացրած **որք երկու բնութիւնս ասեն բաժանեալ** բառերը:

2. **Նորին՝ յետ սակաւուց.**

(a) **Որ եկն եւ մի բնութիւն Աստուծոյ եւ մարդոյն գործեաց, մեր ոչ կարացեալ կցորդ լինել անապականութեան.** (b) **որ աներեւոյթն է ի մէջ՝ եղեւ տեսանելի, զի ըստ ամենայն մասին կցորդութիւն առցուք զանապականութիւն:** Էջ 342բ:

a կիսահատվածի սկզբի **որ եկն** բառերը, որոնք Իրենեոսի համապատասխան բնագրում չկան, մեր կարծիքով ծագել են վերջինիս «եթէ ոչ էր նորա եկեալ առ մեզ» բառերից[20]: «Արմատ հաւատոյ»-ից առաջ՝ այս իրողությանը հանդիպում ենք Գաւգիկ Արծրունու առ Ռոմանոս կայսր թղթում[21], ավելի առաջ՝ Ստեփանոս Սյունեցու «Վասն անապականութեան մարմնոյն» երկում[22] և դրանից էլ առաջ՝ «Կնիք հաւատոյ»-ում[23]. վերջինում՝ **որ եկն** բառերի փոխարեն գտնում ենք «ուրեմն» բառը, բայց կարելի է անտարակուսելի համարել, որ «Կնիք հաւատոյ»-ի նախնական օրինակում ևս եղել են «որ եկն» բառերը, որոնք աչքի վրիպումով ընդօրինակողի գոչի տակ դարձել են «ուրեմն»: Նույնպիսի առնչություններ է ներկայացնում նաև նախադասության շարունակությունը՝ **եւ մի բնութիւն Աստուծոյ եւ մարդոյն գործեաց,** որը սեղմումն ու մեկնաբանությունն է «զմարդն միաւորեցոյց ընդ Աստուած եւ հաւասարակութիւն միաբանութեան Աստուծոյ եւ մարդոյ գործեաց» խոսքերի[24]: «Արմատ հաւատոյ»-ի ձևակերպումը նույնն է հիշյալ երեք աղբյուրների հետ, այն միակ տարբերությամբ, որ Սյունեցին «մի բնութիւն» բառի փոխարեն դրել է «միաւորութիւն»: Այս ձևակերպման աղբյուրը, մեր կարծիքով, «Կնիք հաւատոյ»-ն է հանդիսանում. Այգեկցին Իրենեոսի բնագրի հետ զուգակցաբար օգտագործել է «Կնիք հաւատոյ»-ն: Բայց նախադասության լրացուցիչ մասում Այգեկցին հեռանում է «Կնիք հաւատոյ»-ից և նրա հետևողներից, ինչպես և իրենյան բնագրից, իր սեփական շարադրանքով՝ **մեր ոչ կարացեալ կցորդ լինել անապականութեան,** որը խմբագրումն է Իրենեոսի հետևյալ խոսքերի. «մեր ոչ կարացելոց այլաւրինակաբար ինչ կցորդութիւն ընդունել զանապականութեանն»[25]: Ամբողջ նախադասության համար հմմտ. նաև «Կնիք հաւատոյ»-ում հանդես եկող իրենյան մի ուրիշ հատվածի հետևյալ տողերը. «եթէ ոչ էր միաւորեալ մարդն ընդ Աստուծոյ, ո՛չ էր կարացեալ կցորդութիւն ընդունել անապականութեանն»[26]:

b կիսահատվածը խմբագրված է Իրենեոսի այս խոսքերից. «Քանզի անտեսանելի եւ աներեւոյթ ելով անապականութիւնն, ոչինչ մեզ աւգուտ առնէր. արդ տեսանելի եղեւ, զի ըստ ամենայն մասին կցորդութիւն ընդունելութեան առցուք զանապականութեանն»[27]:

3. **Ի հաւատոյ բանէն Երանոսի Լոկդանայ (sic) եպիսկոպոսի.**

Անջատեալ են բարք նոցա յԱստուծոյ եւ ոչ գիտելով զի սորա Բանն Միածինն որ միշտ ընդ մարդկութեանն միաւորեալ եւ ընդ սմա զանկեալ ընդ իւրում ստեղծուածիս: Էջ 342բ:

«Արմատ հաւատոյ»-ի համառոտ խմբագրությունում այս հատվածը սկսվում է **Անջատելի են բանք նոցա յԱստուծոյ եւ ոչ գիտելով զսորա բանն. Միածին որ** բառերով (ձեռ. № 2080, էջ 24բ): Ցորդանը նկատում է, որ հատվածի ծագումն անհայտ է[28], բայց ենթադրում է, որ այն պետք է լինի Իրենեոսի կորած „Πρὸς Δημήτριον διάκονον Βιαίνης περὶ πίστεως λόγος" երկից[29]: Սակայն մենք կարծում ենք, որ **անջատեալ են բարք նոցա յԱստուծոյ** խոսքերը խմբագրված են «Ընդ. հերձ.» երկից, ուր գտնում

[20] «Ցոյցք», էջ 24 տ. 12—13:

[21] Տես «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 296 տ. 36:

[22] Արարատ, 1902, էջ 374 տ. 3:

[23] «Կնիք հաւատոյ», էջ 243 տ. 7:

[24] «Ցոյցք», էջ 24 տ. 9—11:

[25] Անդ, էջ 24 տ. 11—12:

[26] «Կնիք հաւատոյ», էջ 244 տ. 7—9:

[27] «Ցոյցք», էջ 24 տ. 13—17:

[28] H. Jordan, S. 162.

[29] Ibidem, S. 165.

ենք այսպես. «որք զհերձուածսն գործեն, իբրու զի թափուրք են յԱստուծոյ սիրոյն»[30]. իսկ այստեղ անմիջապես շարունակվող «եւ զիրեանց զշահ ապագին միայն գիտեն, այլ ոչ զմիութիւն եկեղեցւոյ»[31] տողերից սեկնողաբար խմբագրված է «Արմատ հաւատոյ»-ի հատվածի լրացուցիչ մասը, որ է՝ **եւ ոչ գիտելով...ստեղծուածիս:** Հմմտ. նաև «զմիութիւն Բանին Աստուծոյ առ ստեղծուածն իւր»[32]:

4. **Նորին.**

Զհերձուածս գործեն որ զմեծափառաւորեալ մարմինն Քրիստոսի բաժանեն եւ հակոտորեն: Էջ 342բ:

Համառոտ խմբագրությունն ունի՝ **Ի հերձուածս գործ որ զմեծ եւ զփառաւորեալ... հատակոտորեն** (ձեռ. № 2080, էջ 24բ):

Քաղված է «Ընդ. հերձ.» երկի այն հատվածից, որ մասամբ նշեցինք վերևում (§3): Այստեղ բերենք ամբողջությամբ. «Եւ դատի եւ որք զհերձուածսն գործեն, իբրու զի թափուրք են յԱստուծոյ սիրոյն եւ զիրեանց զշահ ապագին միայն գիտեն, այլ ոչ զմիութիւն եկեղեցւոյ. եւ վասն փոքր եւ դուզնաքեայ պատճառաց զմեծ եւ զփառաւոր զմարմինն Քրիստոսի բաժանեն եւ հատկոտորեն»[33]:

5. **Նորին.**

Եսայի ասէ. Մերձեցայ առ կին իմ մարգարէ եւ ծնաւ որդի՝ Սբանչելի, Խորհրդակից, Աստուած հզաւր, իշխան՝, քարոզելով զմիութիւն Բանին առ ի ստեղծուածն իւր յայտնէին, քանզի Բանն մարմին եղեւ եւ Որդին Աստուծոյ՝ որդի մարդոյ: Էջ 342բ:

Հմմտ. «Ընդ. հերձ.» երկը. «Իսկ դարձեալ որք ասենն՝ 'Եւ մարդ է, եւ ո՞ ծանիցէ զնա՝, եւ՝ 'Մերձեցայ առ կինն մարգարէ եւ ծնաւ որդի եւ կոչի անուն նորա Սբանչելի, Խորհրդական, Աստուած հզաւր՝, եւ զայն, որ ի կուսէն՝ Էմանուիլն քարոզելով՝ զմիութիւն Բանին Աստուծոյ առ ստեղծուածն իւր յայտնէին, զի Բանն մարմին եղիցի եւ Որդին Աստուծոյ որդի մարդոյ»[34]:

Այստեղից է քաղվածաբար խմբագրված մեր հատվածը: Սակայն «Արմատ հաւատոյ»-ի կազմողն, իր աղբյուրը խմբագրելիս, այլափոխել է այն:

Իրենեոսը, վկայակոչելով երկու մարգարեների՝ Երեմիային (ԺԷ 9. «Եւ մարդ է...») և Եսայուն (Ը 3, Թ 6 և Է 14. «Եւ մերձեցայ...»), ասում է, որ նրանք, նախագուշակելով Քրիստոսի գալուստը և նրան «քարոզելով» (հոչակելով) որպես «Էմանուիլ» (Աստված մեզ հետ), «զմիութիւն Բանին Աստուծոյ առ ստեղծուածն իւր յայտնէին»:

«Արմատ հաւատոյ»-ում Իրենեոսի այս բնագրի քերականական ներքին կապակցությունները խախտվել են և առաջացել են նոր կապակցություններ: «Արմատ հաւատոյ»-ի խմբագիրը նախ դուրս է թողել վկայությունների հեղինակներից առաջինին (Երեմիա) և պահել է միայն երկրորդին (Եսայի). ուրեմն՝ նա ունի ոչ թե երկու ենթակա, այլ միայն մեկ: Երկրորդ՝ նա «քարոզելով» դերբայը գրկել է նրա ուղիղ խնդրից՝ «զայն, որ ի կուսէն» բառերից և, որպես ուղիղ խնդիր, նրան տվել է **զմիութիւն Բանին առ ի ստեղծուածն իւր** բառերը, այնինչ վերջիններս որպես ուղիղ խնդիր պատկանում էին «յայտնէին» բային: Այսպիսով՝ «Արմատ հաւատոյ»-ի կազմողի գրչի տակ Իրենեոսի այս հատվածի հիմնական մասը քերականորեն այլայլվել է: Այս այլափոխման հետևանքով, բնականաբար, պիտի դուրս ընկած լիներ Իրենեոսի բնագրում երկու ենթակաների ստորոգյալ հանդիսացող «յայտնէին» բառը, քանի որ վերակազմված նախադասության մեջ այլևս տեղ չէր մնում նրան: Եվ սակայն՝ նա թյուրիմացաբար մնացել է այնտեղ: Մենք «Արմատ հաւատոյ»-ի բնագրից պետք է հանենք՝ այնտեղ քերականորեն ոչ մի կապակցության չպատկանող և բացահայտ թյուրիմացություն հանդիսացող **յայտնէին** բառը:

6. **Նորին ասացեալ.**

(a) **Անարգեն զՈրդին Աստուծոյ եւ զմարմնոյ փրկութիւն ուրանան եւ զվերստին ծնունդ նորա անպատուեն որք ոչ ասեն զնա լինել ընդունակ անապականութեան.** (b) **քանզի եկն Որդին Աստուծոյ եւ զգեցաւ մարմին անապական՝ յանապական կուսէն Մարիամայ:** Էջ 357ա:

a կիսահատվածի համար հմմտ. «Ընդ. հերձ.» երկը. «Զամենայն զտնաւրէնութիւնն անարգեն զԱստուծոյ եւ զմարմնոյս փրկութիւն ուրանան եւ զվերստին ծնունդ նորա անպատուեն, ոչ գոյ ընդունական զսա ասելով անապականութեան»[35]: Այս նույնը գրչական անհշան տարբերակներով կա նաև «Կնիք հաւատոյ»-ում[36], Կյուրեղ Աղեքսանդրացու «Պարապմանց» գրքում[37], Ստե-

[30] «Ընդ. հերձ.», էջ 111 տ. 2—3:
[31] Անդ, էջ 111 տ. 3—4:
[32] Անդ, էջ 114 տ. 14:
[33] Անդ, էջ 111 տ. 1—5:
[34] Անդ, էջ 114 տ. 10—16:
[35] Անդ, էջ 155 տ. 11—14:
[36] «Կնիք հաւատոյ», էջ 244 տ. 17—19:
[37] «Գիրք պարապմանց», Կ. Պոլիս, 1717, էջ 458:

փանոս Սյունեցու «Վասն անապականութեան մարմնոյն» երկում[38] և Խաչիկ Արշարունու առ Սեբաստիայի մետրապոլիտ պատասխան-թղթում[39]:

Սակայն «Արմատ հաւատոյ»-ում բերված բնագիրը, որը խմբագրված վիճակ է ներկայացնում, հեռանում է հիշյալ աղբյուրներից, նրանց թվում և Իրենեոսի բնագրից, և բառացիորեն կասվում Սահակ կաթողիկոսի (Զորափորեցի?) «Բացայայտութիւն» գրվածքի հետ[40]: Այնտեղ է, որ Իրենեոսի «զամենայն զտնաւրէնութիւնն անարգեն զԱստուծոյ» բառերը փոխարինված են «անարգեն զՈրդին Աստուծոյ» բառերով, իսկ «ոչ գոլ ընդունական զսա ասելով» բառերը՝ «որք ոչ ասեն զնա լինել ընդունակ» բառերով: Սահակ կաթողիկոսի մոտ և «Արմատ հաւատոյ»-ում երևացող այս երկու փոփոխություններից առաջինը հիշեցնում է նաև Իրենեոսի «Ցոյցք»-ի մի տեղը՝ «զգալուստ զՈրդւոյն Աստուծոյ եւ զտնաւրէնութիւն զմարմնութեանն նորա անարգեն»[41]: «Արմատ հաւատոյ»-ի այս կիսահատվածը եթե Սահակ կաթողիկոսից չի ծագում, ապա նրանք երկուսով ծագում են մի ընդհանուր աղբյուրից, որը մեզ ծանոթ չէ:

Ե կիսահատվածի աղբյուրը հայտնի չէ[42]: Նրա սկզբի **քանզի** շաղկապը «Արմատ հաւատոյ»-ի խմբագրի ձեռքից է. իսկ բուն բնագիրը **(եկն... Մարիամայ)**, գրչական աննշան տարբերություններով գտնվում է նաև «Կնիք հաւատոյ»-ում[43] և ուրիշ աղբյուրներում՝ Կյուրեղ Աղեքսանդրացի[44], Սահակ կաթողիկոս[45] և Ստեփանոս Սյունեցի[46]:

---

[38] **Արարատ**, 1902, էջ 374 տ. 9—12:

[39] Տես «Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», Պետերբուրգ, 1885, էջ 222:

[40] Տես «Գիրք թղթոց», էջ 451 տ. 17—19:

[41] «Ցոյցք», էջ 68 տ. 15—16:

[42] Հմմտ. H. Jordan, S. 128—131.

[43] «Կնիք հաւատոյ», էջ 244 տ. 25—26:

[44] «Գիրք պարապմանց», էջ 458:

[45] Տես «Գիրք թղթոց», էջ 451 տ. 15—16:

[46] **Արարատ**, 1902, էջ 374 տ. 13—14:





ՎԻԿՏՈՐ ՄՆԱՑԱԿԱՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆՑ

ԹԵՂԵՆՅԱՑ ՎԱՆՔԸ ԵՎ ՆՐԱ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ

Թեղենյաց վանքը գտնվում է Ապարանի շրջանի Բուժական գյուղի արևելյան կողմում, գյուղից երկու կիլոմետր հեռու, թեղիների բացատում: Առաջին մենակյաց վանականները այստեղ հաստատվել են 6-րդ դարի վերջերին: 7—8-րդ դարերում վանականների թիվը ավելացել է, շինությունները ընդարձակվել են: Դարերի ընթացքում այստեղ կառուցվել է ճարտարապետական մի ամբողջ համալիր՝ եկեղեցի, գավիթ (1167 թ.)[1], գրատուն, կից կառույցներ, կացարաններ:

Թեղենյաց համալիրը ճարտարապետական մտահղացման, ինքնատիպ, բնությանը միաձուլված հուշարձան է: Եկեղեցական կրթական այս օջախը կիսավեր վիճակում է. կանգուն է միայն գավթի կենտրոնական մասը, որի երկու կողմերի պատերն ու գրմբեթածածկն է բանդված: Կից կառույցները գրեթե լրիվ ավերված են:

Թեղենյաց վանքի առաջին հիշատակությունը վերաբերում է յոթերորդ դարի վերջերին: Հայսմավուրքի Արեգ ամսի Ի և մարտի ԻԸ-ի օրվա ճառում գրված է, որ Վահան Գողթնեցին Թեղենյաց վանքից «եկն դարձեալ ի վանսն Յովհաննու: Եւ Յոհաննէս առաջնորդ սուրբ ուխտին ընկալաւ զնա»[2]: Մ. Ավգերյանը Վահան Գողթնեցու վկայաբանության մեջ այդ մասին գրում է. «Եւ անտի գնաց ի Թեղենիսն, և արարեալ նոսա վանս աւուրս ինչ, եկն յայլ վանս Սոլի (Հովհաննավանք—Վ. Պ.) անուն, ուր առաջնորդ ուխտին Յովհաննէս մեծաւ սիրով ընկալաւ զնա»[3]:

Զաքարիա Սարկավագը գրել է, որ Վահան Գողթնեցին մեռել է 703 թվականին[4]: Ամենայն հավանականությամբ Գողթնեցին Թեղենյաց վանքում հաստատվել է մահվանից առաջ՝ յոթերորդ դարի վերջերին:

Այդ և հաջորդ դարերում Թեղենյաց վանքի առաջնորդների մասին մատենագրության մեջ ոչ մի հիշատակություն չի պահպանվել: Առաջին առաջնորդը, որի մասին

[1] **Գարեգին արքեպ. Հովսեփյանց,** Խաղբակյանք կամ Պոռշյանք հայոց պատմության մեջ, մասն Ա, Վաղարշապատ, 1928, էջ 158:

[2] «Մատ սրբոց վկայիցն ճշմարտին Աստուծոյ... որ կոչի Յայսմաւուր», Կ. Պոլիս, 1706, էջ 622:

[3] «Վիպասանք վարք և վկայաբանութիւն սրբոց», Վենետիկ, 1810, էջ 35:

[4] «Զաքարեայ Սարկաւագի Պատմութիւն», հատոր Գ, էջ 29:

խոսում է Ասողիկ պատմիչը՝ Երեմիան է: Հիշելով Կիրակոս գիտնականին, Ասողիկը գրում է. «Եւ Կիրակոս գծծակերպ գիտնականն, որ վարուք առաւել քան թէ բանիւք վարդապետէր, որ բնակէր յոլովակի յանապատի, որ Թեղենիսն կոչի, ի Նիգ գաւառի, առ հօր Երեմիայի ճգնաւորին Քրիստոսի և ընկերակցի իմոյ»[5]: Երեմիան և Կիրակոս գծծակերպ գիտնականը (ինչպես հուշում է գծծակերպ պատվանունը, մաթեմատիկոս կամ երկրաչափ է եղել) ապրել և ստեղծագործել են 10-րդ դարի վերջին և 11-րդ դարի սկզբներին: Ասողիկի հիշատակությունից բացի նրանց մասին ուրիշ ոչինչ հայտնի չէ:

1208 թվականին, ի թիվս այլոց, Լոռի քաղաքում Զաքարե ամիրսպասալարի հրավիրած կրոնական ժողովին մասնակցել է Թեղենյաց վանքի առաջնորդ Տուրքիկ վարդապետը: Կիրակոս Գանձակեցին գրել է. «Եւ էին ի ժամանակին յայնմիկ վարդապետք երևելիք՝ Մխիթար, որ Գոշն կոչիւր, շինող վանացն Գետկայ ... Տուրքիկն ի Թեղենեաց, որ բարուք կարգաւորեաց զվանքն՝ զամենայն ինչ հասարակաց լինել և առանձին ոչ ինչ ստանալ...»[6]:

Վանքի հյուսիս-արևելյան կողմում, գերեզմանոցում կանգնած է մի գեղեցիկ, շքեղ որմնափակ խաչքար: Խաչքարի վերին մասը կոտրված է: Պատվանդանին փորված արձանագրությունը հողմնահարված-եղծված է: Երկրորդ տողում դժվարությամբ կարդացվում է.



Թեղենյաց վանք. ընդհանուր տեսքը հյուսիս-արևմուտքից

.... եւ Ք(րիստո)սասիրի Մխիթար վարդապետ....

բառերը: Արձանագրության վերջում նշված է թվականը: Հարյուրավորին (Ո) հաջորդող տառը կոտրված է, սակայն տառահետքից պարզ երևում է, որ այդտեղ Ղ է եղել: Այս վերականգնումից երևում է, որ Մխիթար վարդապետը մահացել է 1241 թվականին: Հավանաբար նա հաջորդել է Տուրքիկ վարդապետին:

1302 թվականին Թեղենյաց վանքում Մը-կրտիչ գրիչը ավարտել է Գլաձորում սկսված «Մեկնութիւն սաղմոսաց Ներսիսի

[5] «Ստեփանոս Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական», ս. Պետերբուրգ, 1885, գլ. Թ, էջ 186;

[6] Կ. Գանձակեցի, Պատմություն հայոց, Երևան, 1961, էջ 171—172;

Լամբրոնացոյ» ձեռագիրը և հիշատակարանում գրում է, որ այդ ժամանակ վանքի առաջնորդը Դավիթն էր: «... ևս առաւել հոգևոր հայ(ր)ս Դաւիթ, որ էր առաջնորդ սուրբ ուխտիս...»[7]:

Դավթից հետո հիշատակվում է ևս մեկ առաջնորդ: Տերտեր Երևանցի 1290/1300—1350/1360) բանաստեղծ-գրիչը սովորել է Թեղենյաց վանքի դպրոցում, Հակոբ վարդապետի օրոք: Այս Հակոբը ժամանակակից է Դավիթ վարդապետին և հավանաբար հաջորդել է նրան:



Թեղենյաց վանք. գավթի պուները

Պատմությունը վանքի մյուս առաջնորդների մասին տեղեկություններ չի պահպանել:

10—14-րդ դարերում Թեղենյաց վանքը կրթական-լուսավորական, գրչության կենտրոն էր: Այստեղ 1198 թվականին Վարդան և Թադևոս գրիչները օրինակել են Հովհաննու մեկնությունը[8], 1295 թվականին՝ Դավիթ կրոնավորը Նահապետ կրոնավորի օգնությամբ գրում-ավարտում է Ծմավոն և Քահանա եղբայրների սկսած ու կիսատ թողած Ավետարանը: Տասնչորսերորդ դարի սկզբներին Մկրտիչ գրիչը վանքի մասին գրել է. «յաստուածաբնակ և գերահռչակ»[9]:

Ցավոք, վանքում ստեղծված գրքերից միայն այս երեքն են հասել մեր օրերը: Դրանցից մեկը այժմ գտնվում է Երևանի Մատենադարանում, իսկ մյուս երկուսը՝ ար-

Թեղենյաց վանք. Մխիթար վարդապետի խաչքար ՌԼ (1241) թ.

տասահմանյան տարբեր թանգարաններում:

Թեղենյաց դպրոցը ժամանակի առաջադիմական դպրոցներից մեկն է եղել: Վերը հիշատակված Տերտեր Երևանցին դպրոցի միակ շրջանավարտը չէ: Այդ դպրոցն են ավարտել նաև վանքում ստեղծագործած

---

[7] «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1950, էջ 6:

[8] Հ. Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 257:

[9] «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 6:

գրիչները, դպիրները, սպասավորները: Թեղենյաց դպրոցի ավանդույթների օգտին է խոսում և այն փաստը, որ տասներեքերորդ դարի կեսերին դպրոցի ուսուցչապետը որոշ ժամանակով եղել է Վարդան Արևելցին: Թեղենյաց վանքում ապրել և ստեղծագործել է նաև հայ մշակույթի նշանավոր գործիչ Վանական Վարդապետը:

Թեղենյաց վանքի առաջնորդների ցուցակը թերի է: Գրեթե ոչինչ հայտնի չէ նրանց օրոք կատարված շինարարական աշխատանքների, ստեղծած գործերի, վանքի դպրոցում ծավալված կրթական գործի մասին: Սակայն մեր օրերը հասած հատուկենտ հիշատակություններն անգամ հուշում են, որ Թեղենյաց վանքը եղել է ժամանակի կրթական-լուսավորական-մշակութային օջախներից մեկը:



ԷԿՈՒՄԵՆԻԿ ԿՅԱՆՔ

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ (ԵՀԽ) ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ 30-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

1977 թվականի հուլիսի 29-ից օգոստոսի 6-ը Ժնևում տեղի ունեցավ ԵՀԽ-ի Կենտրոնական կոմիտեի 30-րդ նստաշրջանը, որի թեման էր «Դավանող համայնքը»:

Կոնֆերանսի մասնակիցներին ողջույնի խոսքով դիմեցին ԵՀԽ-ի Կենտրոնական կոմիտեի ատենապետ արքեպիսկոպոս Էդվարդ Սբոթը և գլխավոր քարտուղար Ֆիլիպ Փոթրը:

Նստաշրջանի գլխավոր թեմայի շուրջ տեղի ունեցավ քննարկում, որը գլխավորեց ԵՀԽ-ի «Համաշխարհային առաքելություն և ավետարանչություն» հանձնախմբի դիրեկտոր դոկտ. Էմիլիո Կաստրոն: Գլխավոր թեման քննարկվեց 10 հատուկ աշխատանքային խմբերում և լիագումար նիստում: Վերջում Կենտրոնական կոմիտեն մշակեց և ընդունեց «Դավանող համայնք» վերնագրով մի կոչ՝ ուղղված ԵՀԽ-ի անդամ եկեղեցիներին:

Սույն նստաշրջանում քննարկվեց նաև ԵՀԽ-ի կազմում նոր անդամ եկեղեցիներ ընդունելու հարցը: ԵՀԽ-ի անդամ ընտրվեցին.

ա. Ինդոնեզիայի քրիստոնեական-բողոքական եկեղեցին.

բ. Սուդանի եպիսկոպոսական եկեղեցին.

գ. Մելանեզիի եկեղեցին.

դ. Մալայզիայի մեթոդական եկեղեցին:

Իտալիայի քրիստոնեական ավետարանական-մկրտչական եկեղեցին և Սինգապուրի մեթոդական եկեղեցին ընտրվեցին գործակից անդամներ:

Այսպիսով, ԵՀԽ-ի կազմում այսօր գործում են 293 անդամ եկեղեցիներ:

Հաստատվեց Բոսեյի Էկումենիկ ինստիտուտի կանոնադրությունը, վերակազմավորվեց ԵՀԽ-ի գլխավոր քարտուղարությունը, որը պետք է կազմված լինի գլխավոր քարտուղարից՝ իր երեք տեղակալներով, որոնցից յուրաքանչյուրը պետք է լինի ԵՀԽ-ի ծրագրային միավորներից մեկի ատենապետը և գլխավոր քարտուղարի օգնականը: Քննարկվեցին նաև ֆինանսական հարցեր և ընդունվեցին համապատասխան որոշումներ:

ԵՀԽ-ի արդեն գործող օրգաններին ավելացան ևս հետևյալները.

ա. Առանձին մի կոմիտե, որը կոչված է քննարկելու և վերանայելու ԵՀԽ-ի ծրագիրն ու գործունեությունը:

բ. Խորհրդակցական մի մարմին, որը զբաղվելու է «Արդար, դեմոկրատական և ինքնապահովագրող հասարակություն» թեմայով:

«Հավատք և վկայություն» 1-ին Ծրագրային միավորի հանձնարարությամբ Կենտրոնական կոմիտեն քննարկեց և հաստատեց 1979 թվականին համաշխարհային մի կոնֆերանս կազմակերպելու հարցը՝ «Հավատի, գիտության ու տեխնիկայի ներդրումը արդար, դեմոկրատական և ինքնապահովագրող հասարակության համար պայքարում» նշանաբանով:

«Հավատք և եկեղեցական կառուցվածք» հանձնաժողովի զեկուցման համաձայն, որոշվեց շարունակել «Մեր մեջ եղած հույսի մասին» թեմայի ուսումնասիրությունը:

«Արդարություն և ծառայություն» 2-րդ Ծրագրային միավորի կոմիտեի հանձնարարությամբ Կենտրոնական կոմիտեն մասնավորապես քննարկեց և հաստատեց միլիտարիզմի, սպառազինության մրցավազքի դեմ պայքարի ծրագիրը: Այս կապակցությամբ սույն թվականի նոյեմբերին Ցյուրիխում տեղի է ունենալու հատուկ մի խորհրդակցություն:

2-րդ Ծրագրային միավորի կոմիտեն Կենտրոնական կոմիտեի հաստատմանը ներկայացրեց Հարավային Աֆրիկայի վերաբերյալ մի բանաձևի և խոշտանգումների ու նոր միջազգային տնտեսական կարգի մասին կազմված երկու դիմումների նախագծերը: Հարավային Աֆրիկայի վերաբերյալ բանաձևում քննադատվում է Յան Սմիթի ապարթեիդի ռեժիմի կողմից Զինբաբվեի ժողովրդի ճնշումը և կոչ է արվում նեցուկ նանգնել այդ ժողովրդի ազատության համար մղվող պայքարին: Կենտրոնական կոմիտեն հաստատեց իր համերաշխությունը Նամիբիայի եկեղեցիների և ժողովրդի հետ, կոչ ուղղեց անդամ եկեղեցիներին պահանջել իրենց կառավարություններից, այդ թվում նաև Հարավ Աֆրիկյան Հանրապետությունից, որ նրանք գործեն համաձայն ՄԱԿ-ի Անվտանգության կոմիտեի 385 բանաձևի: Եկեղեցիները, հասարակական և կառավարական շրջանակները, ՄԱԿ-ը համատեղ ջանքերով պետք է պայքարեն ընդդեմ ֆիզիկական և այլ կարգի վայրագությունների ու անմարդկային արարքների:

Նոր միջազգային տնտեսակարգի մասին կազմված դիմումը պաշտպանում է 1974 թվականի ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 6-րդ հատուկ նստաշրջանի որոշումը: Դիմումի մեջ նշված է, որ անցած երեք տարիների ընթացքում պետությունները քիչ բան են արել միջազգային նոր տնտեսակարգի իրականացման ուղղությամբ: Դիմումի մեջ կոչ է ուղղվում նաև եկեղեցիներին և ոչ կառավարական կազմակերպություններին ու հասարակական միավորումներին ամեն կերպ օգնել՝ իրականացնելու ապագա մարդկության բարօրության համար, ՄԱԿ-ի այդ խիստ անհրաժեշտ որոշումը:

ԵՀԽ-ի Կենտրոնական կոմիտեի նստաշրջանի օրերին տեղի ունեցան բազմապիսի հանդիպումներ, այդ թվում Կենտրոնական կոմիտեի ատենապետ արքեպիսկոպոս Էդվարդ Սքոթի ու գլխավոր քարտուղար Ֆիլիպ Փոթրի հանդիպումը ԵՀԽ-ի Կենտրոնական կոմիտեի անդամ օրթոդոքս եկեղեցիների ներկայացուցիչների և ԵՀԽ-ի Ժենևի կենտրոնի օրթոդոքս աշխատակիցների հետ:

Այդ հանդիպումների ժամանակ քննարկվեցին ԵՀԽ-ի գործունեության մեջ օրթոդոքսների ներդրումը ուժեղացնելու հարցերը: Հանդիպում տեղի ունեցավ նաև Էդվարդ Սքոթի, Ֆիլիպ Փոթրի, ԵՀԽ-ի կենտրոնի պատասխանատու աշխատակիցների ու Կենտրոնական կոմիտեի սույն նստաշրջանին մասնակցող սոցիալիստական երկրների եկեղեցիների ներկայացուցիչների միջև, հանդիպում, որը հանդիսացավ սույն թվականի մարտի 29—31-ը Բուդապեշտում նույն մակարդակի հանդիպման շարունակությունը:

ԵՀԽ-ի Կենտրոնական կոմիտեի 30-րդ նստաշրջանին, հանուն հայ եկեղեցու, որպես Կենտրոնական կոմիտեի անդամներ, մասնակցեցին տ. Շահե արքեպիսկոպոս Աճեմյանը՝ Երուսաղեմի հայոց պատրիարքարանի դիվանապետ, և տ. Արսեն եպիսկոպոս Բերբերյանը՝ Մայր Աթոռի դիվանապետ:



ՑՈՒՑԱԿ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

№ 446
ՀՐՈՎԱՐՏԱԿ

Թերթերը՝ 2։— **Պրակները՝** 1։— **Մեծությունը՝** 34,1×22 սմ.։— **Նյութը՝** կապույտ հաստարակ թուղթ։ —**Կազմ՝** չունի։— **Պահպանակներ՝** չունի։— **Վիճակը՝** լավ։— **Գրությունը՝** միասյուն։— **Դատարկ թղթերը՝** 1բ—2բ։— **Տողերը՝** 32։— **Գծումները՝** առանց ճնշումի։— **Գիրը՝** նոտրգիր։— **Զարդագրություն՝** չունի։— **Գրիչը՝** անհայտ։— **Պատվիրատուն՝** անհայտ։— **Ժամանակը՝** 1824 թ.։— **Վայրը՝** շատ հավանաբար Ս. Էջմիածնի վանք։— **Ծանոթություն՝** սույն հրովարտակն ստացվել է Կաթողիկոսարանի արխիվից 1974 թ. մարտի 16-ին։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Փոխանորդ Արբայի Ապպաս Միրզայի հրովարտակի օրինակն է, զոր գրէ ի վերայ Ներսէս Սրբազանին (այս երկու տողը հետագայում ջնջված է—Ն. Մ.)։

Գերագահ և գերատիճան, հաւատարիմ և բարեացակամ Ծառայ Քրիստոսի Ներսէս Արքեպիսկոպոս և առաջնորդ ազգի հայոց։ Խնամօք մեծութեան իմոյ զոր ունիմ առ քեզ, որպէս լեր առաւելապէս, և գիտասջիր, զի զՔոյդ խնդրագրութեան թուղթն զոր առաքեալ է իր ձեռամբ Գերագահն և գերապատուելի Հաւատարիմ Ծառայ Ֆաթհալի խան բէկլարբէկլոյն (հետագայում է գրված։ Նախապէս գրված է եղել և ապա ջնջված հետևյալը՝ «բէկիին» —Ն. Մ.) մատոյց առաջի արեգականափայլ տէրութեան իմոյ, և ամենայն խնդրուածք քո զորս գրեալ է իր մի ըստ միոջէ յայտնի եղեն առաջի մեծք տէրութեան իմոյ։ Այլև նոյն յիշեալ մեծագանն զհանբաւ բարութեան և բարւոք կառավարութեան քոյ զոր ունիս այդրէն՝ զբարեձև և կենցաղակցութիւնս քո ընդ մեծամեծս և իշխանս, և ընդ վարդապետս, ըստ իւրաքանչիւր արժանաւորութեանց և պատուոյ գովելի իմն եղանակաւ՝ պատմեաց առաջի տէրութեան իմոյ։ Ընդ որս յայտ արար և զհանապազորդ խնդրուածս և մաքուր աղօթս քո, զոր ունիք միշտ վասն ամենեցուն։ Որովք և մեք զմայլեցաք արդարև։ Քանզի թէպէտ յաւուրն՝ յորում յեզր Երասխայ ներկայ եղև քոյին մեծագանութիւնն առաջի տէրութեան իմոյ, և քոյդ մտերմութիւնն և ճշմարտութիւնն յայտնի իսկ եղեն ինձ, զորս **ըստ առաւելութեան** (հետագայում է ավելացված, սկզբում գրված են եղել հետևյալ բառերը, որոնք ջնջված են հետո «որպէս առ աւելի»—Ն. Մ.) շնորհացն իմ առ քեզ՝ գովաբանեցի մի ըստ միոջէ առաջի ամացն, բայց այժմ ի պատմութենէ յիշեալ հաւատարմի իմոյ առաւելապատիկ բան զառաջինն լսելով զքոյդ հարազատութիւն, սիրեցի զքեզ գերազանց գովութեամբ։ Եւ ըստ որում քո դիտաւորութիւնն և կամքն և հաւատարմութիւնդ բարի է յաղագս բարեաց տէրութեան մեր, և գովելի եղանակաւ կենցաղակցիս ընդ ամենեսին, մեք ևս օր աւուր ունիմք առաւելում ի վերայ քո զբաղդր հայեցողութիւն աչաց, և զշնորհ ողորմութեանց մերոց։ Այլ խնդիր քո ի կողմանէ մեծ բահանապետ Եփրեմ կաթուղիկոսին որպէս քոյդ կամք էր՝ յայտնի եղև ինձ, առաւել ևս այնու, զի մեծագան և գերբնտրեալ մեծ իշխան քրիստոնէից Եմնարալ Ալէքսէ Պետրովիչ Երմոլովն ի մասին ձեր, և վասն այնոցիկ ամացն յանձնեալ էր մեծագան բէկլարբէկլոյն

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի № № Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի № № Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի № № Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի № № Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի № № Ա—Բ-ից, Դ-ից, 1973 թվականի № № Ա—Գ-ից, Ը-ից, 1974 թվականի № № Գ-ից, Է—Ը-ից, 1975 թվականի № № Ա-ից, Գ-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1976 թվականի № № Բ—Ե-ից, Է—Թ-ից, ԺԲ-ից և 1977 թվականի № № Գ—Է-ից։

բանիւք: Առ որ աճա և ես զհրովարտակ միամտութեան գրեալ առ նա առաքեցի ընդ յիշեալ մեծագահին ըստ որոյ (հետագայում է ավելացված, նախապես գրված է եղել «և զի», ապա ջնջված—Ն. Մ.) և քոյդ գերաստիճանութիւն տացէ նմա զմիամտութիւն և առաքեսցէ ի տեղի իւր: Յետ որոյ և ես զամենայն զբանս նորին և զգործս տեղւոյն բարի կերպիւ ունիմ հաստատել, և զսուրբ Էջմիածնայ բոլոր կառավարութիւն հաստատուն հրամանաւ հիմնաւորել յաղագս բարեաց և ապահովութեանց ամենից: Այլև վասն սուրբ Էջմիածնի պատկանեալ բոլոր գործոցն որպէս հրամայեալ եմ մեծագահ Ֆաթալի խանի, ունի պատմել ձեզ զամենայն, և դաշինս հաստատեալ ընդ ձեզ, ըստ որոյ ուրեմն դուք հաւատալով ամենայն միամտութեամբ բանից և ասութեանց նորին, վերադարձուսջիք զկաթուղիկոսն, և զիմ խնամքն առ ձեզ կատարեալ ծանիջիք: 19 ջօմատի էլ ավէլ ամսոյ 1240 (1824 թ.—Ն. Մ.) թուին:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Հետագայում ջնջված է վերնագրի երկու տողը և գրված է հետևյալը)

Թարգմանութիւն հրովարտակի ժառանգի տէրութեան պարսից Անպաս Միրզայ Շահզատային առ Ներսէս արքեպիսկոպոսն հայոց ի Վրաստան:

№ 447
ՊԱՏԱՌԻԿՆԵՐ

Ա. Զարդանկարչութիւն

Թերթերը՝ 4 կտոր:— **Մեծությունը՝** երկուսը՝ 25,7×20,3 սմ., իսկ մյուս երկուսն էլ՝ 24,7×19,3 սմ.:— **Նյութը՝** թուղթ:— **Կազմը՝** կպցված է դեղնավուն հաստ չորս ստվարաթղթի վրա:— **Վիճակը՝** անբավարար:— **Գիրը՝** բոլորգիր:— **Զարդագրություն՝** պարունակում են բազմաթիվ գեղեցիկ զարդագրեր, թռչնագրեր և լուսանցազարդեր, ինչպես նաև մի քանի այլ նկարների նմուշներ (գրիֆեթ, թռչուն և այլն): Բոլորը նկարված են կարմիր ներկով, բացի երկուսը, որոնք տպագիր են և սև գույնի (գազանագիր և գազանագիր-ձկնագիր):— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** անհայտ:— **Ծաղկողը՝** անհայտ:— **Ժամանակը՝** 16—17-րդ դարեր:— **Վայրը՝** անհայտ:— **Ծանոթություն՝** Վեհափառ Հայրապետը նվեր է ստացել մի ազգայինից և դրանք հանձնել Մայր Աթոռի Ձեռագրատանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

20-րդ դարի չարագործ մի մարդ միջնադարյան արժեքավոր հայերեն մի ձեռագրից բարբարոսաբար կտրատել է շուրջ 200 զարդանկարչական և զարդագրական նմուշներ և կպցրել չորս ստվարաթղթի վրա, ըստ երևույթին դրանց կրկնօրինակները հանելու համար: Թվում է, թե սրանք օգտագործվել են որպես նմուշ զարդանկարչության և զարդագրության հետագա աշխատանքի համար:

ա. Առաջին կտորն ունի 48 տառեր և զարդանկարներ: Տառերի մեծ մասը «Ե»-ն է, կա նաև Ա, Գ, Ի, Մ և Ց տառերի նմուշներ: Բոլորն էլ մեծատառով են գրված:

բ. Երկրորդ կտորն ունի 45 տառեր և լուսանցազարդեր: «Ե» տառից կան մի տասնյակ միայն, իսկ Ա և Ի տառերից՝ մի քանի հատ միայն: Բոլորը մեծատառեր են:

գ. Երրորդ կտորն ունի 49 տառեր և լուսանցազարդեր: Տառերից կան հետևյալ նմուշները՝ Գ, Դ, Ե, Ժ, Ի, Մ, Ց և Տ: Նկարների մեջ կա թռչուն, ծաղիկ և գմբեթ:

դ. Չորրորդ կտորն ունի 58 տառեր և լուսանցազարդեր: Մեծատառերի մեծագույն մասը «Ե»-ն է. Կա նաև մեկական Դ և Ի տառերից: Լուսանցազարդերի քանակը 10—11 է:

Բ. Զարդանկարչութիւն

Թերթերը՝ 1 կտոր:— **Մեծությունը՝** 24,4×18,6 սմ.:— **Նյութը՝** թուղթ:— **Կազմը՝** կպցված է դեղնավուն հաստ ստվարաթղթի վրա:— **Վիճակը՝** անբավարար:— **Գիրը՝** բոլորգիր:— **Զարդագրություն՝** պարունակում է գեղեցիկ զարդագրեր, լուսանցազարդեր և գլխազարդեր:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** անհայտ:— **Ծաղկողը՝** անհայտ:— **Ժամանակը՝** 17—18-րդ դարեր:— **Վայրը՝** անհայտ:— **Ծանոթություն՝** Վեհափառ Հայրապետը նվեր է ստացել մի ազգայինից և այն հանձնել Մայր Աթոռի Ձեռագրատանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախորդի նման չարագործ մի ձեռք միջնադարյան արժեքավոր հայերեն մի ձեռագրից բարբարոսաբար կտրատել է հայկական զարդանկարչության 54 գեղեցիկ փոքրիկ նմուշներ և կպցրել մի ստվարաթղթի վրա, շատ հավանաբար կրկնօրինակները հանելու կամ հետագայում նկարչական իր աշխատանքում օգտագործելու համար:

Այստեղ կան գեղեցիկ երեք գլխազարդեր, բազմաթիվ լուսանցազարդեր, երեք գմբեթներ, բազմաթիվ խաչեր և զարդագրեր, մի քանի թռչնագրեր:

Գ. Զարդանկարչութիւն

Թերթերը՝ 1 կտոր:— **Մեծությունը՝** 37,5×30,2 սմ.:— **Նյութը՝** թուղթ:— **Կազմը՝** կպցված է ոչ ողորկ խուճացած մի ստվարաթղթի վրա:— **Վիճակը՝** անբավարար:— **Գիրը՝** բոլորգիր:— **Զարդագրություն՝** պարունակում է միջնադարյան հայկական զարդանկարչության գեղեցիկ նմուշներ:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** անհայտ:— **Ծաղկողը՝** անհայտ:— **Ժամանակը՝** 16—17-րդ դարեր:— **Վայրը՝** անհայտ:— **Ծանոթություն՝** Վեհափառ Հայրապետը նվեր է ստացել մի ազգայինից և այն հանձնել Մայր Աթոռի Ձեռագրատանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախորդների նման չարագործ մի մարդ միջնադարյան արժեքավոր հայերեն մի ձեռագրից բարբարոսաբար կտրատել է հայկական զարդանկարչության 111 գեղեցիկ նմուշներ և կպցրել մի ընտվարաթղթի վրա, ըստ երևույթին կրկնօրինակները հանելու կամ հետագայում իր աշխատանքում օգտագործելու համար:

Այստեղ կան բազմաթիվ սիրուն լուսանցազարդեր, զարդագրեր, թոչնագրեր, ծառեր ու ծաղիկներ: Կան նաև մի քանի գմբեթներ, մարդագրեր և զարդեր:

Պատառիկի կոնակում կպցված են Կ. Պոլսի հայկական թերթի կտրոններ, որոնք ցույց են տալիս, որ այս պատառիկը Ս. Էջմիածին է հասել Ստամբուլից:

Դ. Զարդանկարչութիւն

Թերթերը՝ 1 կտոր:— **Մեծությունը՝** 42,6×27,5 սմ.:— **Նյութը՝** թուղթ:— **Կազմը՝** կպցված է դեղնավուն բարակ թղթի վրա:— **Վիճակը՝** անբավարար:—**Գիրը՝** բոլորգիր:— **Զարդագրություն՝** պարունակում է հայկական զարդանկարչության գեղեցիկ նմուշներ՝ լուսանցազարդեր և զարդագրեր:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** անհայտ:— **Ծաղկողը՝** Սամվել:— **Ժամանակը՝** 16—17-րդ դարեր:— **Վայրը՝** անհայտ:— **Մանրթություն՝** Վեհափառ Հայրապետը նվեր է ստացել մի ազգայինից և այն հանձնել Մայր Աթոռի Ձեռագրատանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախորդների նման չարագործ մի ձեռք միջնադարյան արժեքավոր հայերեն մի ձեռագրից բարբարոսաբար կտրատել է հայկական զարդանկարչության 31 գեղեցիկ նմուշներ և կպցրել մի թղթի վրա, շատ հավանաբար կրկնօրինակները հանելու կամ հետագայում իր աշխատանքում օգտագործելու համար:

Այստեղ կա սիրուն մի գմբեթ, մարդագլուխ երկու թոչուններ, մի քանի զարդագրեր (Ա, Բ, Ե, Թ, Ի, Ծ, Մ և Ս) լուսանցազարդեր: Բացի այդ կա նաև ծաղկավոր հին կտորեղենի փոքրիկ նմուշներ (թվով 28 հատ), ինչպես նաև վեց կտոր գործվածքեղեն, հինգը՝ մեծ և մեկը՝ փոքր:

Պատառիկում կան նաև բազմաթիվ գրություններ (սև և կարմիր), կտրատված ձեռագրից, որոնցից մի մասը տրվում է ստորև.

Չորրորդ կիրակէն կարդա և զծրագրաւղս զՍամուէլս յիշնա:

... ուրախ լինին ժողով:

Չորրորդ աւուրն ՍՂ. գովեա Էմ Զա:

Շաբաթ Շողակաթին տեսլեան Սրբոյն Գրիգորի:

Ընթերց(ուածս) ի Սոփոնիայ մարգարէէ:

... թին. ՍՂ. Հիմունք նորա ի լեա: Ընթ...

Հեթանոսաց վա ...

Աւետարան ըստ Մաթէոսի:

... լսելոյ լուիցէ: Շաբաթ Շողակա ...

... գշի Նոյնէ և Մանէ ...

Սբ. Խաչին հինգերորդ աւուրն:

Տէրով կացցէ: Աւետարան Յոհան:

Յիսուս ի տաճարին ի սրահին:

Մանկանցն Բեթղէհեմի, աղ ևց իրե...

Ընթերցուածս յԵսայեա մարգարէէ:

Երեքշաբթի Գայիանանցն:

(Այս բոլորը տրված է որպես բոլորգրի նմուշներ):

Ե. Զարդանկարչութիւն

Թերթերը՝ 1 կտոր:— **Մեծությունը՝** 29,7×23 սմ.: —**Նյութը՝** թուղթ:— **Կազմը՝** կպցված է դեղնավուն մի թղթի վրա:— **Վիճակը՝** անբավարար:— **Գիրը՝** բոլորգիր:— **Զարդագրություն՝** պարունակում է հայկական զարդանկարչության գեղեցիկ նմուշներ՝ զարդագրեր և թոչնագրեր, լուսանցազարդեր և գլխազարդեր:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** անհայտ:— **Ծաղկողը՝** անհայտ:— **Ժամանակը՝** 16—18-րդ դարեր:— **Վայրը՝** անհայտ:— **Մանրթություն՝** Վեհափառ Հայրապետը նվեր է ստացել մի ազգայինից և այն հանձնել Մայր Աթոռի Ձեռագրատանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախորդների նման չարագործ մի մարդ միջնադարյան արժեքավոր հայերեն երկու ձեռագրերից բարբարոսաբար կտրատել է հայկական զարդանկարչության 103 գեղեցիկ նմուշներ և կպցրել մի թղթի վրա, ըստ երևույթին կրկնօրինակները հանելու կամ հետագայում իր աշխատանքում օգտագործելու համար:

Շատ հավանաբար վերոհիշյալ զարդանկարչական հինգ պատառիկները (թվով ութ հատ) չարաշնագ գործն է նույն անձի, որ մի քանի ձեռագրեր կտրատելով դրանք փչացրել է անխիղճ կերպով:

Այստեղ կան երկու տեսակի հայկական զարդանկարչության փոքրիկ նմուշներ, որոնցից մեկ մասը գեղեցիկ է և ավելի հին շրջանի, իսկ մյուս մասը միջակ որակի, ավելի ուշ շրջանի պատկանող:

Գեղեցիկ են երեք գլխազարդեր, բազմաթիվ լուսանցազարդեր, թոչնագրեր և զարդագրերը: Միջակ որակի են մնացած հինգ գլխազարդերը, մի քանի սրբերը և այլ զարդանկարները:

Պատառիկի թղթի կոնակում կպցված են պոլսահայ թերթի (1900 թվականի) չորս կտրոններ, որոնք բացահայտ կերպով ցույց են տալիս, որ այս և նախորդ մյուս զարդանկարչական պատառիկները ստացվել են Ստամբուլից: Շատ հավանաբար ձեռագրերի կտրատումը տեղի է ունեցել 1900-ական թվականներին Պոլսում:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թղթի կոնակում թանաքով գրված են դրամական որոշ հաշիվներ, թվականներ և անուններ:

Զանց առնելով հաշիվներն ու թվականները, ստորև տրվում են անուններն և մի քանի այլ տողերը:
(Ա.)Ներիաս ոտվանցին:
Գումարը ուրիշ տեղ գրած եմք:
Կաշին տեֆտերիս մէջ լե...:
Տիգրանակերտցի փոքր տղան:
Զնկուշցի Պորսեանը:
Հողեցի Ահարոն:
(Այս բոլորը գրված է 1900 թ. փետրվար, մարտ և ապրիլ ամիսներին):

Զ. Քարոզգիրք

Թերթերը՝ 1:— **Մեծությունը՝** 15,7×14,8 սմ.:— **Նյութը՝** սևացած և կեղտոտած բարակ թուղթ:— **Վիճակը՝** անբավարար, ներքևի մի մասը կտրված է:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 1բ:— **Տողերը՝** 27:— **Գծումները՝** առանց ճնշումի:— **Գիրը՝** նոտրգիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** անհայտ:— **Ժամանակը՝** 18-րդ դար:— **Ծանոթություն՝** պատառիկը հանված է 1755 թ. Կ. Պոլսում գրված Քարոզգրքի միջից (Ձեռագրատանս № 133 ձեռագիրը), որ ստացվել է Թբիլիսիից:

Է. Աղոթագիրք

Թերթերը՝ 1:— **Մեծությունը՝** 16×10,6 սմ.:— **Նյութը՝** դեղնած և կեղտոտած թուղթ:— **Վիճակը՝** անբավարար:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 1բ:— **Տողերը՝** 20:— **Գծումները՝** առանց ճնշումի:— **Գիրը՝** շղագիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** Ուստիան:— **Ժամանակը՝** 19-րդ դար:— **Վայրը՝** անհայտ:— **Ծանոթություն՝** պատառիկը հանված է 1963 թ. Կահիրեից ստացված 1363 թ. Աղոթագրքի միջից (Ձեռագրատանս № 250 ձեռագիրը):

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 1ա.—...(Դա)նիէլ, Սեդրակ, Միսաք, Միսաէլ, Եզէկիայ, Գանձիայ, Սարմիայ, Ուրիէլ, Դանիէլ, ուր այս անուանքս յիշեն անդադար, ոչ մերձենայ օգնական և պահապան եղերուք ծառայիս Աստուծոյ Եղիսաբեթի դուստր յՈւստիանին:

Ը. Փիլիսոփայութիւն

Թերթերը՝ 2:— **Պրակները՝** 1:— **Մեծությունը՝** 17×12 սմ.:— **Նյութը՝** սևացած և կեղտոտած բարակ թուղթ:— **Կազմ՝** չունի:— **Վիճակը՝** անբավարար:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթեր՝** չունի:— **Տողերը՝** 21:— **Գծումները՝** ճնշումով:— **Գիրը՝** նոտրգիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** անհայտ:— **Ժամանակը՝** 18—19-րդ դարեր:— **Վայրը՝** անհայտ:— **Ծանոթություն՝** հանված է ձեռագրի միջից:

Թ. Հաշիւ

Թերթերը՝ 2:— **Պրակները՝** 1:— **Մեծությունը՝** 22,2×17,3 սմ.:— **Նյութը՝** մաքուր բարակ թուղթ:— **Կազմ՝** չունի:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 1բ—2բ:— **Տողերը՝** 19:— **Գծումները՝** առանց ճնշումի:— **Գիրը՝** նոտրգիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** անհայտ:— **Ժամանակը՝** 19-րդ դար:— **Վայրը՝** անհայտ:— **Ծանոթություն՝** սույն պատառիկն ստացվել է Կաթողիկոսարանի արխիվից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հաշիվը ցույց է տալիս օսմանյան, պարսկական և ռուսական ոսկեդրամների և արծաթ դրամների մի հավաքածու: Հավանաբար այն պատկանել է մի մոգի, կամ նույն ինքն Ս. Էջմիածնի թանգարանին: Ցուրաքանչյուրի քանակը գրված է արաբական թվերով:

Ժ. Նամակ
(Պարսկերեն)

Թերթերը՝ 1:— **Մեծությունը՝** 21,2×12,4 սմ.:— **Նյութը՝** դեղնավուն բարակ թուղթ:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 1բ:— **Տողերը՝** 9:— **Գծումները՝** առանց ճնշումի:— **Գիրը՝** արաբատառ:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** անհայտ:— **Ժամանակը՝** 19-րդ դար:— **Վայրը՝** անհայտ:— **Ծանոթություն՝** պարսկերեն սույն նամակն ստացվել է Կաթողիկոսարանի արխիվից:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թ. 1բ.— Այստեղ կա փոքրիկ ձվաձև պարսկերեն մի կնիք, 1,6×1 սմ. չափերով, որտեղ գրված է հետևյալ անունը.
Նաֆի Մուհամեդ:

№ 448
ՖԵՐՄԱՆ
(Տաճկերեն)

Թերթերը՝ 1 կտոր:— **Մեծությունը՝** 147,3×52,6 սմ.:— **Նյութը՝** դեղնած հաստ թուղթ:— **Կազմը՝** կոնակում կանաչ կտոր է կպցված:— **Վիճակը՝** բավարար, միայն ներքևի մասում որոշ տեղ մաշված և ծակված է:— **Գրությունը՝** միասյուն:— **Տողերը՝** 30:— **Գծումները՝** առանց ճնշումի:— **Գիրը՝** արաբատառ:— **Զարդագրություն՝** ֆերմանի վերևի կիսում կա շատ գեղեցիկ մի զարդսանկար, բրգաձև, որի լայնությունը 37 սմ. է, իսկ բարձրությունը՝ 57 սմ.: Բուրգի ներքևի մասում նախշազարդ գեղեցիկ ֆոնի վրա ոսկեգույն կապգրերով գրված է երկրի

սուլթանի անվան խորհրդանիշը (դոռան)։ Բուրգի մեջ նկարված են մի շարք գեղեցիկ վարդեր, ծաղիկներ, տերևներ և այլ զարդեր։ Բուրգից դուրս, վերևի մասում, աջակողմյան և ձախակողմյան մասում կան տերևաձև երկու զարդեր, որոնց ոսկեգույն ֆոնի վրա նկարված է մեկական գեղեցիկ ծաղկեփունջ։ Այս բոլորի համար օգտագործված են ոսկեգույն, վարդագույն, կարմիր, կանաչ, սև, կապույտ և այլ գույներ։ Այս ֆերմանը հանդիսանում է 19-րդ դարի սկզբի տաճկական զարդանկարչության շատ գեղեցիկ նմուշներից մեկը։— **Գրիչը՝** անհայտ։— **Պատվիրատուն՝** օսմանյան սուլթան Սելիմ Գ. Ղազի (1788—1808 թթ.)։— **Մաղկողը՝** անհայտ։— **Ժամանակը՝** 1802 թ.։— **Վայրը՝** Կոստանդնուպոլիս։— **Մանոթություն՝** սույն ֆերմանն ստացվել է Կաթողիկոսարանի արխիվից 1974 թ. մարտի 16-ին։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Ֆերմանի կոնակի ներքևի մասում գրված է)
Սուլթան Սելիմ թագաւորին օսմանցւոց յանուն Դաւիթ (Դավիթ Ե. Էնեգեթցի—1801—1807 թթ.— Ն. Մ.) կաթուղիկոսին երկրորդ անգամ շնորհեալ բարաթն է ի ՌՄԾԱ (1802 թ.—Ն. Մ.) թուին։

№ 449
ՖԵՐՄԱՆ
(Տաճկերեն)

Թերթերը՝ 1 կտոր։— **Մեծությունը՝** 141,2×49 սմ.։— **Նյութը՝** դեղնած հատ թուղթ։— **Կազմը՝** կոնակի վերևի կես մասում կանաչ կտոր է կպցված։— **Վիճակը՝** բավարար, միայն ներքևի մասում թղթից մի կտոր պոկված է։— **Գրությունը՝** միասյուն։— **Տողերը՝** 31։— **Գծումները՝** առանց ճնշումի։ —**Գիրը՝** արաբատառ։— **Զարդագրություն՝** ֆերմանի վերևի կիսում կա գեղեցիկ մի զարդանկար, բրգաձև, որի լայնությունը 31 սմ. է, իսկ բարձրությունը՝ 65 սմ.։ Բուրգի ներքևի մասում կապույտ և կարմիր ֆոնի վրա ոսկեգույն կապգրերով գրված է երկրի սուլթանի անվան խորհրդանիշը (դոռան)։ Բուրգի մեջ նկարված են բազմաթիվ ծաղիկներ և տերևներ։ Օգտագործված են ոսկեգույն, մանուշակագույն, կարմիր և կապույտ գույները։ Բուրգի երկու կողմերում քաշված են զուգահեռ ոսկեգույն երկու գծեր, իսկ այս գծերից դուրս կան ոսկեգույն, կապույտ և կարմիր նախշեր։ Այս ֆերմանը հանդիսանում է 18-րդ դարի վերջի տաճկական զարդանկարչության գեղեցիկ նմուշներից մի օրինակ։— **Գրիչը՝** անհայտ։— **Պատվիրատուն՝** օսմանյան սուլթան Սելիմ Գ. Ղազի (1788—1808 թթ.)։— **Մաղկողը՝** անհայտ։— **Ժամանակը՝** 18-րդ դար։— **Վայրը՝** Կոստանդնուպոլիս։— **Մանոթություն՝** սույն ֆերմանն ստացվել է Կաթողիկոսարանի արխիվից 1974 թ. մարտի 16-ին։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Ֆերմանի կոնակի վերևի մասում գրված է)
Սուլթան Սելիմ թագաւորի պարաթն է, որ նոր Տեառն մերոյ Ղուկաս Սրբազան (Ղուկաս Ա. Կարնեցի— 1780—1799 թթ.—Ն. Մ.) Կաթուղիկոսին։

№ 450
ՖԵՐՄԱՆ
(Տաճկերեն)

Թերթերը՝ 1 կտոր։— **Մեծությունը՝** 186,5×74,7 սմ.։— **Նյութը՝** դեղնած բարակ թուղթ։— **Կազմը՝** կոնակի վերևի կես մասում կանաչ կտոր է կպցված։— **Վիճակը՝** բավարար։— **Գրությունը՝** միասյուն։— **Տողերը՝** 28։— **Գծումները՝** առանց ճնշումի։— **Գիրը՝** արաբատառ։— **Զարդագրություն՝** ֆերմանի վերևի կիսում կա շատ գեղեցիկ մի զարդանկար, բրգաձև, որի լայնությունը 26 սմ. է, իսկ բարձրությունը՝ 48,5 սմ.։ Բուրգի ներքևի մասում կանաչ, կապույտ և կարմիր ֆոնի վրա ոսկեգույն կապգրերով գրված է երկրի սուլթանի անվան խորհրդանիշը (դոռան)։ Կապույտ ներկված ֆոնի վրա նկարված են շատ գեղեցիկ փոքրիկ ծաղիկներ կարմիր, վարդագույն, դեղին և բաց կապույտ գույներով։ Բուրգի վերևի մասում ոսկեգույնով նկարված են ճյուղերի վրա ծաղիկներ և տերևներ։ Բուրգից դուրս, երկու կողմերում կան երկու սիրուն ծաղիկներ։ Ֆերմանի տեքստը գրված է երեք գույնով, առաջին տողը կարմիր ներկով, երկրորդը՝ ոսկեգույնով, երրորդը՝ սև թանաքով, և այսպես շարունակաբար մինչև վերջ։ Սույն ֆերմանը հանդիսանում է 18-րդ դարի վերջի տաճկական զարդանկարչության շատ գեղեցիկ նմուշներից մի օրինակ։— **Գրիչը՝** անհայտ։— **Պատվիրատուն՝** շատ հավանաբար օսմանյան սուլթան Արդուլ Համիդ Ա. Ղազի (1773—1788 թթ.)։— **Մաղկողը՝** անհայտ։— **Ժամանակը՝** 1774 թ.։ —**Վայրը՝** Կոստանդնուպոլիս։ —**Մանոթություն՝** սույն ֆերմանն ստացվել է Կաթողիկոսի արխիվից 1974 թ. մարտի 16-ին։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Ֆերմանի կոնակի վերևի մասում գրված է)
Սիմէօն Կաթուղիկոսի (Սիմեոն Ա. Երևանցի— 1763—1780 թթ.—Ն. Մ.) պարաթն է 1188 (հիջրայի՝ այսինքն 1774 թ.—Ն. Մ.) թուին տաճկի։

№ 451
ՖԵՐՄԱՆ
(Տաճկերեն)

Թերթերը՝ 1 կտոր։— **Մեծությունը՝** 141,5×49,8 սմ.։— **Նյութը՝** դեղնած հատ թուղթ։— **Կազմ՝** չունի։— **Վիճակը՝** լավ։— **Գրությունը՝** միասյուն։— **Տողերը՝** 34։— **Գծումները՝** առանց ճնշումի։— **Գիրը՝** արաբատառ։— **Զարդագրություն՝** ֆերմանի վերևի կիսում կա շատ գեղեցիկ մի զարդանկար, բրգաձև,

որի լայնությունը 31,5 սմ. է, իսկ բարձրությունը՝ 54 սմ.: Բուրգի ներքևի մասում վարդագույն և բաց կապույտ փոնի վրա ոսկեգույն կապգրերով գրված է երկրի սուլթանի անվան խորհրդանիշը (դոռան): Բուրգի մեջ, վերևում, կան տերևանման չորս զարդեր, որոնց փոնը ոսկեգույն է, իսկ մեջն էլ նկարված է մեկական վարդագույն վարդ, կանաչ տերևներ և կապույտ ծաղիկներ: Բուրգի կենտրոնում կա մի գեղեցիկ զարդանկար, որ բաղկացած է վարդագույն մի մեծ վարդից, որի շուրջ բոլորը կան վեց գունավոր (կապույտ, դեղին և նարնջագույն) փոքրիկ ծաղիկներ և կանաչ տերևներ: Բուրգի գագաթում կա մի զարդանկար ևս, որի ոսկեգույն փոնի վրա նկարված է վարդագույն մի վարդ, շրջապատված դեղին, նարնջագույն և բաց կապույտ երեք փոքրիկ ծաղիկներով: Բուրգի մեջ մնացած տեղերը ոսկեգույնով նկարված են ծաղիկներ, տերևներ և ճյուղեր: Սույն ֆերմանը հանդիսանում է 19-րդ դարի սկզբի տաճկական զարդանկարչության շատ գեղեցիկ նմուշներից մի օրինակ:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** շատ հավանաբար օսմանյան սուլթան Սելիմ Գ. Ղազի (1788—1808 թթ.):— **Ծաղկողը՝** անհայտ:— **Ժամանակը՝** 19-րդ դար:— **Վայրը՝** Կոստանդնուպոլիս:— **Ծանոթություն՝** սույն ֆերմանն ստացվել է Կաթողիկոսարանի արխիվից 1974 թ. մարտի 16-ին:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Ֆերմանի կոնակի վերևի մասում գրված է)
Դաւիթ (Դավիթ Ե. Էնեգեթցի—1801—1807 թթ.— Ն. Մ.) Կաթուղիկոսի ֆերմանն է:
(Ֆերմանի կոնակի ներքևի մասում գրված է)
Դաւիթ Կաթուղիկոսի ֆերմանն է:
(Կողքը ռուսերեն գրված է հետևյալը)
№ 84 25 го Рядмеба
1223 г. Год мира:

№ 452
ԿԱԼՈՒԱԾԱԳԻՐ
(Պարսկերեն)

Թերթերը՝ 1 կտոր:— **Մեծությունը՝** 90,5×26,6 սմ.:— **Նյութը՝** դեղնած հասարակ թուղթ:— **Կազմը՝** կոնակում թուղթ է կպցված:— **Վիճակը՝** բավարար:— **Գրությունը՝** միապույն:— **Տողերը՝** 30:— **Գծումները՝** առանց ճնշումի:— **Գիրը՝** արաբատառ:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** Աբաս Ղուլի խան:— **Ժամանակը՝** 18-րդ դար:— **Վայրը՝** հավանաբար Սպահան:— **Ծանոթություն՝** պարսկերեն սույն կալվածագիրն ստացվել է Կաթողիկոսարանի արխիվից 1974 թ. մարտի 16-ին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ձեռագիրն ունի երեք մաս: Առաջին մասում խոսվում է Էջմիածնի Մայր Տաճարի քարերը քանդելու և Նոր Ջուղա տանելու, ինչպես նաև Մովսես վարդապետին նոր եկեղեցի կառուցելու մասին: Երկրորդ մասում խոսվում է Էջմիածնի վանքի ջրերի և կենդանիների, ինչպես նաև ջրի պակասի համար Թահմազ Ղուլի խանին տրված բողոքի մասին: Երրորդ մասում խոսվում է այն մասին, որ քաղաքում (Էջմիածին) ջուր չի մտնում, որով բնակիչները նեղություն են կրում: Ջուրը շատացնելու համար նորոգում են ջրհորները և խնայում ջուրը:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Կալվածագրում չորս տեղ կա Աբաս Ղուլիի սև կնիքը, 1,8×1,8 սմ. չափերով, որի վրա գրված է «Աբաս Ղուլի»:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Կալվածագրի կոնակում գրված է հետևյալը)
Ջմնցէ:

Ջուղայեցի Յակոբ Կաթուղիկոսն զերիս արզս առնէ Աբաս Ղուլի խանին: Նախ խնդրէ ունել ի վերայ իւր և ի վերայ Սրբոյ Աթոռոյս զնանամս, որ-ա.էս ասէ հայրն քոյ Ամիրկիւնայ խանն, և եղբայրն քոյ Թահմազ Ղուլի խանն ունեցեալ են, և նոցին խնամօքն Աթոռս մեր զշինութիւնս է ստացեալ, (որոց զբարերարութիւնսն յիշեցուցանէ յաւուրց Դաւիթ և Մելքիսէթ կաթուղիկոսացն:) զի և այժմ ասէ ի շինութեանց: Երկրորդ՝ վասն Բաթրինջ գիւղին, թէ գիտես դու, զի ի քնէ անդի գիւղն այն Սրբոյ Աթոռոյս օթլակեանն է, և ամենայն անասնոց կեցութիւն անդուստ լինի: Որոյ բնակիչքն քան զայս յառաջ փախեան յերկիրն օսմանցոց, և Շահիսէվանն եկեալ ի միջի նորին նստաւ և զաւթեաց: Եւ յետ նոցա քիւրաքեան լո...ն զաւթեաց: Մեք արզ արարաք Խոսրով խանին, զի զնոսա անտի հանցէ, նա ոչ կարաց հանել: Յետոյ Շահին արզ արարաք, և Շահն զողամ եւ, և Մահմատ Ղուլի խանին հրամայեաց հանել զնոսա անտի, որ և էհան: Եւ մեք ասէ յանձն առաք տալ վասն գեղջն ի տարեջն զէ թուման մուտախլ: Եւ այժմ ևս ասէ զնոյն ....., և եւ զգեղջն վերստին շինեցից: Իսկ թէ կամիցիս ասէ աւելի առնուլ քան զէ թումանն, ես ոչ կարիմ զգեղջն շինել, և անդ ռայաթ ոչ մնայ: Եւ վասն է թուման տալոյն, և ոչ քան զայն աւելի, ասէ հարց զդաւթարդարսն, և ի նոցանէ ստուգեա: Եւ Ալլահվերտի ոմն գրէ և վկայէ թէ՝ յիրաւի է թուման էր մուտ ..... որդի արզն է վասն քանքանին՝ որ է ի մէջ Սրբոյ Աթոռոյս: Թէ զմեծ բարերարութիւնս արարի ես, գեղջս ի քոյ աւուրս, որք Բ ամիս վասն ջրոց պաղելոյն՝ զմեծ վիշտս կրէին: Եւ հանի ասէ զքանքան մի, և ածի ի մէջ գիւղին և վանիցս: Եւ խնդրէ, զի եթէ զվարեցանս առնիցէ ի վերայ աւելորդ ջր ..... քնիս, հրամայեսցէ զի մայրաքաղաք լիցի, և բահրայ մի առցի, և ոչ ոք յայնցանէ զշիլթաղ ինչ արասցէ: Եւ խանն զամենայն խնդիրսն կատարել ի ներքոյ իւր քան զիւր խնդրոցն գրէ զհրաման լինիլ այնպէս:

№ 453

ԿԱԼՈՒԱԾԱԳԻՐ
(Պարսկերեն)

Թերթերը՝ 1 կտոր:— **Մեծությունը՝** 42,3×24,2 սմ.:— **Նյութը՝** դեղնած և կեղտոտած բարակ թուղթ: —**Կազմը՝** կոնակում ուրիշ թուղթ է կպցված:— **Վիճակը՝** անբավարար:— **Գրությունը՝** միապյուն:— **Տողերը՝** 14:— **Գծումները՝** առանց ճնշումի:— **Գիրը՝** արաբատառ:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** անհայտ:— **Ժամանակը՝** 1673 թ.:— **Վայրը՝** անհայտ:— **Ծանոթություն՝** սույն կալվածագիրն ստացվել է Կաթողիկոսարանի արխիվից 1974 թ. մարտի 16-ին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ձեռագրում խոսվում է Էջմիածնի վանքի այգիների մասին և ասվում է, որ 14 թուման է տրված ծառեր տնկելու համար:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Առաջին էջի աջակողմյան լայն լուսանցքում կա հետևյալ կաթողիկոսական կարմիր հինգ կնիքները և չորս գրությունները.)

Ա. (Կլոր կնիք, 2,2 սմ. տրամագծով, որի մեջը գրված է հետևյալը)

Յակոբ վարդապետ, թվ. ՌՃԴ (1655 թ.—Ն. Մ.):

(Իսկ կնիքի շուրջ բոլորը գրված է)

Քրիստոսի ծառայ Յակոբ կաթուղիկոս:

(Կնիքի ներքևում նոտրգրով գրված է Հակոբ կաթողիկոսի ձեռագրով հետևյալը)

Յիսուսի Քրիստոսի ծառայ.

Յակոբ Կաթուղիկոս, Աշտարակայ այգին ետու Սաղմոսավանքին, և զոր ինչ ի թղթոջս գրեալ է, իմով յօժարութեամբ է (Հակոբ Դ. Զուղայեցի, կաթողիկոս 1655—1680 թթ. —Ն. Մ.):

Բ. (Կլոր կնիք, 2,9 սմ. տրամագծով, որի մեջի գրությունը պլտոր է և չի կարդացվում: Միայն «Կաթուղիկոս» բառի մի մասն է կարդացվում):

(Սրա ձախակողմում կա ձվաձև մի ուրիշ կնիք, 1,9×1,5 սմ. չափերով, որ դարձյալ պլտոր է և չի կարդացվում):

(Այս երկու կնիքների ներքևում նոտրգրով գրված է Եղիազար կաթողիկոսի ձեռագրով հետևյալը)

Ըստ շնորհի և հրամանաց Տեառն Յակոբայ Կաթուղիկոսի, առ Աստուած փոխեցելոյ: Եւ ես նրուաստ Եղիազար Կաթուղիկոս հաճեցեալ հրամանաց հուսէբիս, ետու զԱշտարակու զայգին, որ էր բնական վախֆ Գաբրիէլ վարդապետին, Սաղմոսավանացն: Այլացլողքն ամօթալի լիցին առաջի Աստուծոյ: (Եղիազար Ա. Այնթապցի, կաթողիկոս 1681—1691 թթ.—Ն. Մ.):

Գ. (Վեցանկյուն կնիք, 1,6×1,6 սմ. չափերով, որի մեջը կապգրերով գրված է հետևյալը)

Է
Նահապետ Կաթուղիկոս

ՌՃԽ (1691 թ.—Ն. Մ.):

(Կնիքի ներքևում նոտրգրով գրված է Նահապետ կաթողիկոսի ձեռագրով հետևյալը)

Յիսուսի Քրիստոսի ծառայ Նահապետ Կաթուղիկոս ըստ վերոյ գրեալ Հայրապետացն և ես գրեցի և կնքեցի հաստատուն լինիլ, և այլայլողքն նզովեալք եղիցին ի յԱստուծոյ: (Նահապետ Ա. Եղեսացի, կաթուղիկոս 1691—1705 թթ.—Ն. Մ.):

Դ. (Ութանկյուն կնիք, 2,1×1,7 սմ. չափերով, որի մեջ կապգրերով գրված է հետևյալը)

Է
Աբրահամ Կաթուղիկոս

ՌՃՀԹ (1730 թ.—Ն. Մ.):

(Կնիքի ներքևում նոտրգրով գրված է Աբրահամ Կաթողիկոսի ձեռագրով հետևյալը)

Եւ ես նուաստ ծառայ Քրիստոսի Աբրահամ Կաթուղիկոսս վերոյ գրեալ լուսաճոգի վեհացն վկայութեամբն վկայեմ յայսմ այգւոյ Սաղմոսավանից լինելոյն. եթէ որ այսուհետև խառնակէ նզովեալ եղիցի յԱստուծոյ և յամենայն սրբոց նորա. Ամէն: Դարձեալ այս այգի Յովասափ վարդապետի հօրեղբօր յիշատակն է, որքան ինքն կենդանի է եղնէ ձեզ իլախայ չկայ (Աբրահամ Բ. Խոշաբեցի, կաթողիկոս 1730—1734 թթ.—Ն. Մ.):

(Կալվածագրի կոնակում գրված է հետևյալը)

Կեանծիլիքեն:

Զուղայեցի Յակոբ Կաթուղիկոսն զայգի մի առնու ի յԱշտարակ ի ՀԳ թուման, և յետոյ յիշատակ տայ Սաղմոսավանից ի յառաջնորդութեան Ազնոյ վանից Գաբր(ի)էլ վարդապետին: Ի թուին տանկաց 1084 (1706 թ.—Ն. Մ.): Որոյ ոչ էրենն Գէորգի և Շմաւօնի այգիքն և բուչէն:

№ 454

ԿԱԼՈՒԱԾԱԳԻՐ
(Պարսկերեն)

Թերթերը՝ 1 կտոր:— **Մեծությունը՝** 43,4×31,8 սմ.:— **Նյութը՝** դեղնած հաստ թուղթ:— **Կազմ՝** չունի:— **Վիճակը՝** բավարար:— **Գրությունը՝** միապյուն: —**Տողերը՝** 16:— **Գծումները՝** առանց ճնշումի:— **Գիրը՝** արաբատառ:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** անհայտ:— **Ժամանակը՝** 1825 թ.:— **Վայրը՝** Պարսկաստան:— **Ծանոթություն՝** սույն կալվածագիրն ստացվել է Կաթուղիկոսարանի արխիվից 1974 թ. մարտի 16-ին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Կալվածագրում խոսվում է Էջմիածնի վանքի այգու համար հարյուր թուման տուրք տալու մասին:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

(Ձեռագրի առաջին երեսում կա պարսկերեն մի կնիք (2 օրինակ), 2×1,6 սմ. չափերով, որի վրա գրված է հետևյալ անունը)

Մոհամեդ Արաս։

Ձեռագրի ներքևում կա հիջրայի 1241 թվականը (այսինքն 1825 թ.—Ն. Մ.)։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Ձեռագրի առաջին երեսում կա հայերեն մի կնիք (2 օրինակ), 1,6×1,4 սմ. չափերով, որի վրա գրված է հետևյալը)

Ք.(րիստոսի) Ծ(առայ)
Սարգիս
1823։

(Ձեռագրի կոնակում գրված է հետևյալը)

Մեր այգոյ ղապալայն է։

(Կա ութանկյուն կարմիր մի կնիք, 2,3×2,1 սմ. չափերով, որի վրա կապգրերով գրված է հետևյալը)

Ցովհաննէս Կաթուղիկոս

ՌՄԶ (1831 թ.—Ն. Մ.)։

Ի 1834 ամի ի 6 յուլիսի զնշանակեալն յայսմ ղասալայի զայգին, զոր գնեալ եմք մեք սեպհական արդեամբք մերովք ի Սարգսէ Տեղապահեան, շնորհեցաք քեզ քեռորդոյդ մերում Գրիգորիդ Սիմօնեան՝ ի մշտնջենաւոր ժառանգութիւն քեզ և որդւոց քոց, յորում չունի ոք իշխանութիւն ոչ այժմ և ոչ առ ապայն վէճ ինչ բանալ ընդ քեզ կամ ընդ ժառանգաց քոց։ Վասն որոյ կնքեմք մերով Հայրապետական կնքով և ստորագրեմք։

Կաթողիկոս ամենայն Հայոց Ցովհաննէս։

Ըստոյն ղաբալայ որով շնորհեալ է ինձ սրբազնագոյն Հայրապէտն զսեփական զայգին իւր գնեալն ի Սարգիսէ Տեղապահեան այժմ ես որովհետև ի սմայ նշանակեալ զայգին փոխարյինէմ ընդ ղապանլոյ անվան տամ սրբազան սինոդոսի սրբոյ աթոռոյ Էջմիածնի գրեցի իմով ձեռամբ և ըստորագրեմ.

Գրիգոր Սիմէօնեան Ներսէսեանց
ի 1835 ի 24 յուլիսի, ի Սուրբ Էջմիածին։

№ 455
ԿԱԼՈՒԱԾԱԳԻՐ
(Պարսկերեն)

Թերթերը՝ 1 կտոր։— **Մեծությունը՝** 51,1×27,5 սմ.։—**Նյութը՝** դեղնած հաստ թուղթ։— **Կազմ՝** չունի։ —**Վիճակը՝** բավարար։— **Գրությունը՝** միասյուն։— **Տողերը՝** 22։— **Գծումները՝** առանց ճնշումի։— **Գիրը՝** արաբատառ։— **Զարդագրություն՝** չունի։— **Գրիչը՝** անհայտ։— **Պատվիրատուն՝** անհայտ։— **Ժամանակը՝** 1653 թ.։— **Վայրը՝** Պարսկաստան։— **Ծանոթություն՝** սույն կալվածագիրն ստացվել է Կաթողիկոսարանի արխիվից 1974 թ. մարտի 16-ին։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ձեռագրում գրված է, որ Երևանի խանը մահացել է։ Էջմիածնի վանքի մի հոլակտոր վեճի առարկա է եղել, ապա այս վեճը լուծվել և վերջացել է։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Առաջին երեսում կա պարսկերեն երկու կնիք, ինչպես նաև հայկական երկու անուն և երկու կնիք)

Ես Սէթի որդի խոճ(ա) Գրիգորն վկ(այ)եմ (կնիք)։

Ես խոճ(ա) Սարգիս վկ(այ)եմ (կնիք)։

(Կոնակում գրված է հետևյալը)

Քիրաջ շուտ փիրի Թաւրիզի մլքի ղապալէն այս է։

Ի մէջն գրեալ գոյ որպիսութիւն սորին, բաց կարդա։ Քիրաշշուին է։

Մի գետնոյ վէճ ընդ մից տաճկի սուլթ արարեալ աջոնդայ վէքիլն Էջմիածնի տուեալ է երեք թուման և գետինն մնացեալ է Էջմիածնի։

Քրաչ լուի մուլքն Փիրի և այս է նոյն Քիրաշլուն դարվիշի մուլքն որ Սբ. Էջմիածնայ ջախմէր գիւլու տղա խան Մահմատն, իւր վարիս ներոջն, դաւի արաւ Դ թուման վ շիխն Սօֆլարար Ղաթարաւ տուինք այս ղապալէս առինք, թիվն հազար հարուր երկու (1658 թ.—Ն. Մ.) և տաճկաց թիւն ՌԿԴ (1653 թ.—Ն. Մ.)։

Սէթի որդի խոճ(ա)յ Գրիգորն վկ(ա)յ (կնիք)։
Խոճ(ա)յ Աւետիսն վկ(այ) (կնիք)։
Արզումբէկի որդի խոճ(ա)յ Գրիգորն վկ(ա)յ։
Դարմաներնց. Մարտիրոսն վկ(ա)յ (կնիք)։
Տանուտէր Գասպարն (վկա)յ (կնիք)։
Տանուտէր Մարգարէն վկ(ա)յ (կնիք)։
Թաթոսն վկ(ա)յ։
Ախիկենց Միրզայխան վկ(ա)յ (կնիք)։
Մէլիքի որդի Ցակոբ Ջանն վկ(ա)յ (կնիք)։
Խոճ(ա)յ Սարգիսն վկ(ա)յ (կնիք)։
Ղազարի որդի Կարապետն վկ(ա)յ (կնիք)։
Աւաքի որդի Ազատի այն վկ(ա)յ։
Զագարի որդի Մնացականն վկ(ա)յ (կնիք)։
Ուստա Դաւուտն վկ(ա)յ (կնիք)։
Դանիէլն վկ(ա)յ (կնիք)։
(Կնիք) (անընթեռնելի)։
(Կնիք) Պետրոս։

№ 456
Ֆերման
(Պարսկերեն)

Թերթերը՝ 1 կտոր։— **Մեծությունը՝** 53,8×38,2 սմ.։— **Նյութը՝** դեղնած և կեղտոտած հաստ թուղթ։ —**Կազմ՝** չունի։— **Վիճակը՝** լավ։— **Գրությունը՝** միասյուն։— **Տողերը՝** 14։— **Գծումները՝** առանց ճնշումի։ **Գիրը՝** արաբատառ։— **Զարդագրություն՝** չունի։— **Գրիչը՝** անհայտ։— **Պատվիրատուն՝** պարսից Ֆաթալի շահ (1796—1834 թթ.)։— **Ժամանակը՝** 1804 թ.— **Վայրը՝** Պարսկաստան։— **Ծանոթություն՝** սույն ֆերմանն ստացվել է Կաթողիկոսարանի արխիվից 1974 թ. մարտի 16-ին։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներքևում խոսվում է Էջմիածնի վանքի մասին, որ երբ տաճարի զանգերը ղողանջեն, մարդ չիանգարի և չարգելի: Մայր տաճար եկող ուխտավորներին չարգելել ապրանքներ բերելու: Ապա խոսվում է այն մասին, որ ոչ ոք իրավունք չունի տաճար մտնելու և մեջի իրերը գրավելու:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

(Ձեռագրի վերևում կա պարսկերեն ձվաձև մի կնիք, 1,7×1,1 սմ. չափերով, որի վրա գրված է հետևյալ անունը)

Ֆաթ Ալի:

(Ձեռագրի ներքևում կա հիջրայի հետևյալ թվականը)

1219 թ. (1804 թ.—Ն. Մ.):

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Ձեռագրի կոնակում գրված է հետևյալը)

Ֆաթալի շահի ֆէրմանի օրինակն է և .... Մայր Աթոռոյն և ..... ի .... սորին: Ի ներկայ գրեալս նանօթութիւնքն սխալմամբ են գրեցեալք, հաղունդ և օգտակար հղավաշտակ է այն վասն ամենայն հարկաւորացն և վասն առիտաջուլ և զնոյն շանարիկ:

(Ներքոհիշյալը գրված և ապա ջնջված է):

Վասն Փիլիպպոս Կաթուղիկոսին (Փիլիպպոս Ա. Աղբակեցի, կաթողիկոս 1632—1655 թթ.—Ն. Մ.):

Փոքր Շահ Ապասի հրովարտակ է վասն մաղաթութեան մլքաց Սրբոյ Աթոռոյս և տավարաց. այլև վասն զաւթելոյ զմուլքսն Սրբոյ Աթոռոյս ոմանց և ոչ տալոյ ըստ օրինի. այլև վասն հրամանի գնալոյ յԵրուսաղէմ:

Բ հրովարտակք ևս գոն մի վասն Սրբազան Փիլիպպոս Կաթուղիկոսին յԵրուսաղէմ գնալոյ և մի վասն Աղէքսանդր Կաթուղիկոսին (Աղեքսանդր Ա. Ջուղայեցի, կաթողիկոս 1706—1714 թթ.—Ն. Մ.) յերկիրն օսմանցւոց գնալոյ հրաման, և պատուէր, զի տեղապահի նոցին հպատակք լինիցին ամենեքին որպէս կաթուղիկոսի, և թագաւորականք ևս ի պատուի ունիցին զտեղապահսն:

№ 457

ՀՐՈՎԱՐՏԱԿ

(Տաճկերեն)

Թերթերը՝ 1 կտոր:— **Մեծությունը՝** 75,5×51,7 սմ.— **Նյութը՝** սպիտակ հաստ թուղթ:— **Կազմ՝** չունի:— **Վիճակը՝** անբավարար, թղթի ձախակողմյան մասը կրծված է մկան կողմից:— **Գրությունը՝** միապյուն:— **Տողերը՝** 27:— **Գծումները՝** առանց ճնշումի: —**Գիրը՝** արաբատառ:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** անհայտ:— **Ժամանակը՝** 18-րդ դար:— **Վայրը՝** Թուրքիա:— **Մանոթություն՝** սույն հրովարտակն ստացվել է Կաթողիկոսարանի արխիվից 1974 թ. մարտի 16-ին:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Առաջին երեսում կա ձվաձև մի փոքրիկ կնիք, 1,3×1,2 սմ. չափերով, որի վրա կա հետևյալ անունը)

Ռաբ Ասնալ Ամուր Համիդ:

(Ձեռագրի կոնակում հետևյալն է գրված)

Հոգելոյս Սիմէօն Կաթուղիկոսին Իչ Քիլիսէ բնակելոյն պէրաթն է:

№ 458

ԿԱԼՈՒԱԾԱԳԻՐ

(Տաճկերեն)

Թերթերը՝ 1 կտոր:— **Մեծությունը՝** 216,5×16,5 սմ.:—**Նյութը՝** կեղտոտած և դեղնած թուղթ, տեղտեղ մաշված և ծակված:— **Կազմը՝** հետագայում կոնակում սպիտակ թուղթ է կպցված, 231×23(24) սմ. չափերով:— **Վիճակը՝** անբավարար:— **Գրությունը՝** միապյուն:— **Տողերը՝** 77:—**Գծումները՝** առանց ճնշումի:— **Գիրը՝** արաբատառ:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** անհայտ:— **Ժամանակը՝** 1488 թ.:— **Վայրը՝** Թուրքիա:— **Մանոթություն՝** տաճկերեն սույն կալվածագիրն ստացվել է Կաթողիկոսարանի արխիվից 1974 թ. մարտի 16-ին:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ձեռագրի առաջին երեսի ներքևի մասում կա երեք սև կնիք զանազան չափերի, իսկ վերևի մասում էլ, առանձին տեղերում, կա չորս սև կնիք, բոլորն էլ տաճկական անուններով, սակայն անընթեռնելի:

(Ձեռագրի կոնակում կա հետևյալ արձանագրությունը)

Ի ՊՂԴ թուոջն տաճկաց (1488 թ.—Ն. Մ.): Ամիրքեամալ Ապդին բէկ մեծ ոմն, որդի խօջայ Նաւրուզի տաճկի, որդւոյ խօջայ Հէյդարին: Ծախէ Ջհանշահի որդի Զաքարիա վարդապետին յերկրոջս Երևանու և ի Նահիայն Գառնոյ՝ զՄանկուս գիւղն: Որոյ կողմանքն են Սանկեախուտ, Բազիրանակերտ, Թիրմաքար և Կուտի: Նաև զգիւղն Աւանիկ, որ ևս է ի Գառնի: Որոյ կողմունքն են Ղուլուճախ կոչեցեալ տեղին, Քեօռադարայն, Շիկավանքի ձորն, և լեռնակողմն՝ մինչ ի Մանկուս: Այլև զգիւղն Կուտիս: Որոյ կողմունքն են Քեօռադարայն, Սուրբ Սարգիս, Շիկավանքի ձորն և Քեղաբերդի բերդքն: Այլև զգիւղն Հայոցթառ: Որոյ կողմունքն են Բահինբերդ, Արուակ, Իշխանախաչ և Խաչաղբիւր: Այլև զԿուտուզվանք կոչեցեալ հանդքն: Որոյ կողմունքն են Գետախառնուրդ, Տարիսուանակ, Շիկաքար, և Աղջոց վանքի ջուրն: Այլև զկէսն Կոխթայ: Որոյ կողմունքն են Դարուտ գեղջ հանդն, Արթուզ գեղջ հանդն, Հուստար և Թիրմաքար: Այլև զԱւանասար կոչեցեալ հանդն: Որոյ կողմունքն են Աղեարու ձորն, ճանապարհն՝ որ դէպի տիւզն երթայ՝ մինչ ի Արթուզ գիւղն, և Ղուռուչայն: Այլև զգիւղն Թերնիս: Որոյ կողմունքն են Աճենայ-

խարու գեատուկն, Հայաձոր կոչեցեալ ձորն, վէրոու ջուրն, և այն աղբեր ջուրն, որ Հունակ կոչի: Այլև զՍուրբ Սարգիս գիւղն: Որոյ կողմունքն են Աղմարանու սարն, Թիքմաքարն, Քարաղրիւր և Շիկավանք: Որք ամենեքեան են Է գիւղ, և Բ հանդ: Որոց ամենից գինն է ԵՌ (5000—Ն. Մ.) դինար: Այս Զաքարիա վարդապետս լեալ է Առաջնորդ Հայոց Թառու վանիցն Սրբոյ Ամենափրկչին: Եւ յայսց գիւղորէիցս տակաւին ունի Սուրբ ուխտն, թէպէտ, այժմ ինքն և գիւղորայքն աւեր կան: Նորոգեցաք գթուղթս և գրեցաք զայս, ի ՌՄԺԸ (1769 թ.—Ն. Մ.) թուոջ մերում, և ի տաճկաց՝ ՌՃԶԳ (1769 թ.—Ն. Մ.) թուոջն, ի Սուրբ Աթոռս Էջմիածին:

(Ավելի ներքևում կա 20 տողանոց ռուսերեն մի գրություն 1839 թվականի և չորս ստորագրություն):

№ 459

ԿԱՎՈՒԱԾԱԳԻՐ
(Տաճկերեն)

Թերթերը՝ 1 կտոր:— **Մեծությունը՝** 134×26 սմ.:—**Նյութը՝** դեղնած և կեղտոտած բարակ թուղթ:— **Կազմը՝** կոնակում թուղթ է կպցված, 135,2×34,7 սմ. չափերով:— **Վիճակը՝** բավարար:— **Գրությունը՝** միասյուն:— **Տողերը՝** 18:— **Գծումները՝** առանց ճնշումի:— **Գիրը՝** ալրաբատառ:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** անհայտ:— **Պատվիրատուն՝** անհայտ:— **Ժամանակը՝** 1639 թ.:— **Վայրը՝** Թուրքիա:—**Ծանոթություն՝** սույն տաճկերեն կավվածագիրն ստացվել է Կաթողիկոսարանի արխիվից 1974 թ. մարտի 16-ին:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Ձեռագրի վերջում կա հիշրայի 1049 թվականը (1639 թ.—Ն. Մ.):

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Ձեռագրի առաջին երեսում կա հետևյալ գրությունները)

(Ց)անուն Աստուծոյ ես՝ Սէթի որդի, սուտանուն Յակոբս իմ կամաւ յոժարութեամբ տվի Նորայգեղու Զ դանք մուլքն Մարիանենց, ի գին Թորոսի, ի գին Գառնուկենց ջաղացն: Եղայվարդայ Դ դանկուկէս մուլքն ինչիսի գրումն գրածայինք դապուլայ: Թվ. ՌՄԹ (1660 թ.—Ն. Մ.) Սուրբ Էջմիածնայ վախմ մերշալն յետ տիսուն Յակոբ փոշանանակ Սուրբ Լուսաւորչին քնա յուր ձեռուբ պահայ մինջի ուր վաղջան ամեն շաբաթ կիրակի պատարագում յիշեն Յակոբն և իւր ընդանիքն յետ նորայ վաղջանուն. ով որ փողանակ նստի նայ յիշայ որդոց որդի մինչ ի գալուստն Քրիստոսի. մէկ մէկ ոպս(ն)վէր տան թէ ըզմեղայ որս յիշեն ոչ պատարագից զրկեն դատաստանին իմ կեռնեմ մազ անողի յախէն ես մեղայորս մադամ բիմով գրեցի յիշատակ իմ ծնողացն և հանգուց(ե)ալ զեղբարցն իմոց, թէ մեր յիշատակն իմ մահվանեն յետոն այլ և այլ խաւսի ԳՃԺԸ (318—Ն. Մ.) հայրապետաց նզովքի տակին լինի, կալած կապած լինի Սուրբ Էջմիածնովն (կնիք):

Ես Ղաֆիս որդի Նազարի վկեայ (ստորագրություն):

Ամիրջանի որդի ես Աւետիքս վկեմ. (կնիք):

Ես Իսահակ վրդպտս. վկայ (կնիք):

Ես Բաղտայսարս վկեմ.:

Ես Դաւիթ վրդպտս. վկեմ. այսմ բանի (կնիք):

Ես Թաւքալէնց Աւէտիքս վկեմ. (կնիք):

Ես Սիմոնս վկ. (կնիք):

Ես Գէրաքի ուրդի Գիրիգուրիս վկ. (կնիք):

Ես Զաքարէս վկ.:

Ես Ուբրում աղէս վկ. (կնիք):

Ես Աղինց Աւետիքս վկ. (կնիք):

Ես Ուսկան վկ. (կնիք):

Ես յԱրիվանից Գաբռէլի ուրդի Նկուղուսիս վկ. (կնիք):

Ես քալայմայչի խաւջայ Զէնիս վկ. (կնիք):

Ես Կուզկանց Աւետիկս վկ. (կնիք):

Ես Մանուկս վկ. (կնիք):

Ես Ուլուխանս վկ.:

Ես Խօջա Պետրոսի որդի Պողոսն եղրր. լսեցի վկ. (կնիք):

Ես նախշարար Մինաս վկ. (կնիք):

Ես Մարութէ որդի Յակոբջանս վկ. (կնիք):

Ես Գառբելի ադ. Նիկողոսն վկ. (կնիք):

Ես Առաքեալ վրդպտս. խօջայ Յակոբջանի բերանի իրդարն լսեցի. վասն որոյ վկայեմ այս բանիս (կնիք):

Ես Յակոբջանս խ(օ)ջա Պող(ո)սի որդի վկ. (կնիք):

Ես Յակոբի որդի Ովանէս վկ. Աստուած խոր իր հ(ա)մար:

Ես վախֆի կողմէն Զոկսանատ եմ ավել էս կողմէս էլ զրուց չունիմ. էս գիրս էլ իմ ձեռացա գիրս է (կնիք):

Հեգազ վկ. (կնիք):

Էս գիրս ես ինչ էստուր միչում գրած այ ինձ Յակուբի որդի Սարգիս ես դապուլայ (կնիք):

Մաշուր Սարգիս որ թուրքի անում էս Սարուխան (կնիք):

Ես Սիմէօն Կաթուղիկոս աղուանից (Սիմեոն Խոտորաշենցի, կաթողիկոս 1675—1701 թթ.—Ն. Մ.) զայս թուղթս մօտրեցի պատճառ այն, որ Երեվանցի Յակոբջանն այգիք որ վախմ էր արարեալ Սրբոյ Էջմիածնայ նրա տղայ Սարգիսն, որ թուրքերն Սարուխան ասեն, մեր յաջն իդրար արար, իմ հօր տուած վախմերն հաստատուն է և ինձ դապուլ, այլ իլախա չունիմ (այստեղ կա հայրապետական կարմիր մեծ կլոր կնիքը, 2,4 սմ. տրամագծով, որի վրա գրված է)

(Շարունակելի)



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Կ. Պոլսի երջանկամիշատակ տ. Հովհաննես Կոլոտ պատրիարքի ծննդյան 300-ամյակը նշելու մասին 3
ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ—Աստվածաշնչական սուրբեր . . 7
Քենթրբերիի արքեպիսկոպոս դոկտ. Ֆրեդերիկ Դոնալդ Կոգան 14
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական բեմ. լուրեր 16
Քահանայական ձեռնադրություններ ներքին թեմերի եկեղեցիների համար . . 17
Վերափոխումն սուրբ Աստվածածնի (Վաչե վրդ. Իգնատիոսյանի «Աստվածամայրը»-ից) 18
Ա. ՀԱՏԻՏՅԱՆ—Մահ Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Սարգիս Տիգրանի Գասպարյանի . . 21
Գրախոսություն—Շնորհք արքեպիսկոպոս Գալուստեան, «Աստուածաշնչական սուրբեր», Իսթանպուլ, 1977, 207 էջ 25
ՌԱՖԱՅԵԼ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ—Խաչքարեր 31
Հ. Ս. ԱՆԱՍՅԱՆ—«Արմատ հաւատոյ»-ի աղբյուրներից 41
ՎԻԿՏՈՐ ՄՆԱՑԱԿԱՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆՑ—Թեղենյաց վանքը և նրա առաջնորդները 48
Եկեղեցիների համաշխարհային խորհրդի (ԵՀԽ) Կենտրոնական կոմիտեի 30-րդ նստաշրջանը 52
Ցուցակ Մայր Աթոռ ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի 54

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ

«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».

Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine, Arménie, URSS

Հանձնված է արտադրության 23.8.1977 թ.: Ստորագրված է տպագրության 23.9.1977 թ.:

Տպագրական 4 մամուլ+1 ներդիր, թուղթ 60×84 1/8, պատվեր 613:

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1977 թ.